



ՆԱՅԱՍԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

NATIONAL  
LIBRARY OF ARMENIA

# ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ

## BULLETIN

OF ARMENIAN LIBRARIES

2024 (1)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

*ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ  
ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ*

*2024 (1)*

ԵՐԵՎԱՆ  
«ԳԻՐՔ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
2024

**NATIONAL LIBRARY OF ARMENIA**

***BULLETIN OF ARMENIAN LIBRARIES  
SCIENTIFIC-METHODICAL JOURNAL***

***2024 (1)***

**YEREVAN  
“GIRK” PUBLISHING HOUSE  
2024**

**НАЦИОНАЛЬНАЯ БИБЛИОТЕКА АРМЕНИИ**

***ВЕСТНИК БИБЛИОТЕК АРМЕНИИ  
НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ***

***2024 (1)***

**ЕРЕВАН  
ИЗДАТЕЛЬСТВО «ГИРК»  
2024**

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 2015 ԹՎԱԿԱՆԻՑ  
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՍ  
Հրատարակությունը երաշխավորված է Հայաստանի  
ազգային գրադարանի գիտական խորհրդի կողմից

**Գլխավոր խմբագիր՝**

Չուլյան Աննա

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

**Պատասխանատու խմբագիր՝**

Ղազարյան Հայկանուշ

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ գիտական գծով

Ավդոյան Լևոն

Պատմական գիտությունների դոկտոր

Զարգարյան Տիգրան

Տեխնիկական գիտությունների թեկնածու

Էլիազյան Գայանե

Քիմիական գիտությունների թեկնածու

Լիզունովա Իրինա

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Համբարձումյան Հայկ

Բանասիրական գիտությունների թեկնածու

Հովհաննիսյան Գայանե

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Կուլջմա Իրինա

Հանրահասանելի գիտության և տեղեկատվության փորձագետ

Մուրադյան Խաչիկ

Պատմական գիտությունների դոկտոր

Տեր Արարատ Պողոսյան

Պատմական գիտությունների թեկնածու

Ռեպանովիչ Անջելա

Տեխնիկական գիտությունների դոկտոր, մարքեթինգի դոկտոր

Սահակյան Վահե

Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու

Սուքիասյան Գագիկ

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ**

**Տեխնիկական խմբագիր՝**

Զոհրաբյան Սառա

Ավետյան Նորա

Բոյաջյան Անի

Հայրապետյան Ներսես

Շիրինյան Աննա

Տոնոյան Ռուզան

*Բանբեր Հայաստանի գրադարանների գիտամեթոդական հանդեսի հրատարակությունը շարունակվում է «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի գիտխորհրդի 2021 թվականի հունիսի 10-ի նիստի որոշման համաձայն: 2024 թվականի առաջին թողարկումը ներառում է հոդվածներ հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ Գրադարանային կառավարում և ծառայություններ, Թվային բովանդակության կառավարում, Ժառանգության պահպանություն և հանրահռչակում, Միջուկային տպագիր ժառանգության պահպանություն և հանրահռչակում, Գրախոսություններ, Հաղորդումներ: Հանդեսը նախատեսված է գրադարանագիտության, մատենագիտության, թանգարանագիտության, հումանիտար գիտությունների ոլորտի մասնագետների համար:*

ISSN 1829-4685

**PUBLISHED SINCE 2015  
FREQUENTLY: TWICE A YEAR**

The publication is guaranteed by the Scientific Council  
of the National Library of Armenia

**Editor-in-Chief**

Chulyan Anna

Candidate of Sciences in Philology, Associate  
Professor

**EDITORIAL BOARD**

**Responsible Editor**

Ghazaryan Haykanush

Deputy Director for Science of the “National  
Library of Armenia” SNCO

Avdoyan Levon

Doctor of Sciences in History

Zargaryan Tigran

Candidate of Sciences in Technology

Eliazyan Gayane

Candidate of Sciences in Chemistry

Lizunova Iryna

Doctor of Sciences in History, Professor

Hambardzumyan Hayk

Candidate of Sciences in Philology

Hovhannisyany Gayane

Doctor of Sciences in Philology, Professor

Kuchma Iryna

Open Science and Open Access Expert

Mouradian Khatchig

Doctor of Sciences in History

Fr. Ararat Poghosyan

Candidate of Sciences in History

Repanovici Angela

Doctor of Engineering Sciences, Doctor of  
Marketing

Sahakyan Vahe

Doctor of Sciences in Sociology

Sukiasyan Gagik

Doctor of Sciences in Pedagogy, Professor

**EDITORIAL STAFF**

**Technical Editor**

Zohrabyan Sara

Avetyan Nora

Boyadjian Ani

Hayrapetyan Nerses

Shirinyan Anna

Tonoyan Ruzan

*The publication of the scientific methodical journal the Bulletin of Armenian Libraries continues according to the decision of the Scientific Council of the National Library of Armenia from June 10, 2021. The articles of the first issue of 2024 can be found in the following sections: Library Management & Services; Digital Content Management; Heritage Preservation & Promotion; Diaspora Printing Heritage Preservation & Promotion, Reviews, Reports. The journal is meant for experts in the fields of library science, bibliography, museology and humanities.*

ISSN 1829-4685

**ИЗДАЕТСЯ С 2015 ГОДА  
ПЕРИОДИЧНОСТЬ: ДВА РАЗА В ГОД**

Издание гарантируется Ученым советом Национальной библиотеки Армении

**Главный редактор**

Чулян Анна

Кандидат филологических наук, доцент

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

**Ответственный редактор**

Казарян Айкануш

Заместитель директора ГНКО «Национальная библиотека Армении» по научной деятельности

Авдоян Левон

Доктор исторических наук

Заргарян Тигран

Кандидат технических наук

Элиазян Гаяне

Кандидат химических наук

Лизунова Ирина

Доктор исторических наук, профессор

Амбардзумян Айк

Кандидат филологических наук

Оганнисян Гаяне

Доктор филологических наук, профессор

Кучма Ирина

Эксперт по Открытой науке и Открытому доступу

Мурадян Хачик

Доктор исторических наук

Иерей Арарат Погосян

Кандидат исторических наук

Репанович Анжела

Доктор технических наук, доктор по маркетингу

Саакян Ваге

Кандидат социологических наук

Сукиасян Гагик

Доктор педагогических наук, профессор

**РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

**Технический редактор**

Зограбян Сара

Аветян Нора

Бояджян Ани

Айрапетян Нерсес

Ширинян Анна

Тоноян Рузан

*Издание научно-методического журнала «Вестник библиотек Армении» продолжается согласно решению Ученого совета Национальной библиотеки Армении от 10 июня 2021 года. Статьи, включенные в первый выпуск 2024 г., представлены в следующих тематических разделах: Библиотечный менеджмент и обслуживание; Управление цифровым контентом; Сохранение и популяризация наследия; Сохранение и популяризация печатного наследия Диаспоры; Рецензии; Доклады. Журнал предназначен для специалистов в области библиотечного дела, библиографии, музееведения и гуманитарных наук.*



## ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ԽՈՍՔ

Հարգելի՛ գործընկեր, սիրելի՛ ընթերցող,

Ձեր դատին է ներկայացվում «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտամեթոդական հանդեսի 2024 թվականի առաջին թողարկումը: Հանդեսը շարունակում է իր առաքելությունը որպես գրադարանային ոլորտում գիտելիքների և փորձի փոխանակման առաջատար հարթակ՝ ընդգծելով գրադարանային և հարակից ոլորտների առանցքային հարցերի և արդի խնդիրների քննարկումը, ժամանակակից գրադարանային ոլորտի զարգացումներն ու միջազգային

փորձի փոխանակումը, ինչպես նաև ոլորտում նորարար տեխնոլոգիաների ներդրման և կիրարկման կարևորությունը:

Ժամանակակից աշխարհում գրադարանների գործառույթները զգալիորեն ընդլայնվել են՝ թանգարանային, արխիվային, հրատարակչական, գրականագիտական և հարակից ոլորտների հետ փոխգործակցության շնորհիվ: Թվային վերափոխման և գլոբալացման համատեքստում նման համագործակցությունը գրադարանների համար նոր հորիզոններ է բացում՝ դրանք դարձնելով մշակութային և մտավոր զարգացման կարևոր կենտրոններ: Այդ իսկ պատճառով կարևոր է դիտարկել գրադարանների աշխատանքը հարակից ոլորտների հետ փոխգործակցության տեսանկյունից:

Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում հանդեսում ամփոփված հոդվածները, որոնք ներկայացված են հետևյալ թեմատիկ ուղղություններով. Գրադարանային կառավարում և ծառայություններ, Թվային բովանդակության կառավարում, Ժառանգության պահպանություն և հանրահռչակում, Միջուռքի տպագիր ժառանգության պահպանություն և հանրահռչակում, Գրախոսություններ, Հաղորդումներ:

Եվս մեկ անգամ ընդգծում ենք այն փաստը, որ «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտամեթոդական հանդեսը գրանցված է EBSCO միջազգային բարձր վարկանիշ ունեցող գիտական հրատարակությունների հարթակում: Սա կարևոր ձեռքբերում է, որը վկայում է հանդեսի բարձր մակարդակի մասին: EBSCO հարթակում գրանցումը նոր հնարավորություններ է ընձեռում հեղինակներին և ընթերցողներին՝ օգտվելու բարձրորակ գիտական նյութերից, նպաստում է աշխատանքների տեսանելիության ապահովմանը գիտական հանրություն, ինչպես նաև ամրապնդում է հանդեսի դերը միջազգային գիտական աշխարհում:

Հուսով ենք, որ «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտամեթոդական հանդեսը կշարունակի առանցքային դերակատարում ունենալ գրադարանային համայնքի մասնագիտական կրթության և զարգացման գործում: Հանդիսանալով մեր երկրի գրադարանային ոլորտի հետազոտությունների հրապարակման և միջազգային փորձի փոխանակման լավագույն հարթակ՝ հանդեսը հնարավորություն կընձեռի գրադարանային և հարակից ոլորտների երիտասարդ և փորձառու մասնագետներին ոչ միայն հրապարակել իրենց աշխատանքները, այլև ոգեշնչել նորարար մտքերի, խորացնել իրենց գիտելիքները, կատարելագործել հմտությունները և նոր ուղիներ գտնել՝ երկրում նախընտրված ոլորտը զարգացնելու համար:

«Բանբեր Հայաստանի գրադարանների» էլեկտրոնային հանդեսի գլխավոր խմբագիր  
բ.գ.թ., դոցենտ Աննա Չուլյան



## **NOTE FROM THE EDITOR-IN-CHIEF**

Dear colleagues and readers,

We are pleased to introduce the first issue of the 2024 edition of the scientific methodical journal “Bulletin of Armenian Libraries.”

The journal persists in its role as a leading platform for sharing knowledge and experience in the library field, underscoring key issues and current challenges within the library and related fields, the development of the modern library field and the exchange of international experience as well as the importance of implementation and utilization of innovative technologies.

Nowadays, libraries’ functions are significantly broadened through interactions with museums, archives, publishing, literary, and other related fields. Within the context of digital transformation and globalization, such collaborations open new horizons for libraries, positioning them as important centers for cultural and intellectual advancement. Hence, it is crucial to consider the role of libraries in terms of their interaction with related fields.

We present to your attention the articles categorized in the following thematic sections: Library Management and Services; Digital Content Management; Heritage Preservation and Promotion; Diaspora Printing Heritage Preservation and Promotion; Reviews; Reports.

Once again, we underscore that the journal “Bulletin of Armenian Libraries” is registered on the international EBSCO platform, known for its high-ranking publications. This, serves as a significant testament to the elevated standard of the journal. Inclusion on the EBSCO platform affords authors and readers enhanced access to top-tier scientific materials, contributes to the visibility of works in the scientific community, and also strengthens the journal’s role in the international scientific world.

We anticipate that the scientific methodological journal “Bulletin of Armenian Libraries” will persist in its pivotal role in fostering professional education and advancing the library community. As the leading platform for exchange of research and international insights in library sector of our country, the journal is committed to furnishing both young and professional specialists in library and related fields with technical information. This not only enhances their professional practice but also cultivates innovation, enriches their knowledge base, refines their skills, and facilitates strategic advancements within the sector on a national scale.

E-journal “Bulletin of Armenian Libraries” Editor-in-Chief,  
Anna Chulyan, Ph.D., Associate Professor

## СЛОВО ГЛАВНОГО РЕДАКТОРА

Уважаемые коллеги, дорогие читатели,

Вашему вниманию представлен первый выпуск научно-методического журнала «Вестник библиотек Армении» 2024 года. Данное издание продолжает выполнять роль ведущей платформы для обмена знаниями и опытом в библиотечной сфере, акцентируя внимание на обсуждении ключевых вопросов и актуальных проблем библиотечного дела и смежных областей, развития современной библиотечной сферы и обмена международным опытом, а также важности внедрения и реализации инновационных технологий.

В современном мире функции библиотек значительно расширились благодаря сотрудничеству с музейным, архивным, издательским, литературоведческим и другими направлениями. На фоне цифровой трансформации и глобализации такое сотрудничество открывает новые горизонты для библиотек, превращая их в значимые центры культурного и интеллектуального развития. В связи с этим важно рассматривать работу библиотек с позиции взаимодействия со смежными областями.

Статьи, включенные в данный выпуск, представлены в следующих разделах: Библиотечный менеджмент и обслуживание; Управление цифровым контентом; Сохранение и популяризация наследия; Сохранение и популяризация печатного наследия Диаспоры; Рецензии; Доклады.

Хотелось бы еще раз отметить тот факт, что научно-методический журнал «Вестник библиотек Армении» зарегистрирован на платформе международных высокорейтинговых научных изданий EBSCO. Это важное достижение, свидетельствующее о высоком уровне журнала. Регистрация на платформе EBSCO открывает новые возможности для авторов и читателей для ознакомления с высококачественными научными материалами, способствует росту видимости работ в научном сообществе, а также укрепляет роль журнала в международном научном мире.

Надеемся, что научно-методический журнал «Вестник библиотек Армении» и впредь продолжит играть ключевую роль в профессиональном образовании и развитии библиотечного сообщества. Являясь лучшей платформой для публикации исследований и обмена международным опытом в библиотечном секторе нашей страны, журнал предоставит возможность молодым и опытным специалистам библиотечной и смежных областей не только публиковать свои работы, но и вдохновлять на новые идеи, углубить свои знания, улучшить свои профессиональные навыки и найти новые пути для развития выбранной сферы в стране.

Главный редактор электронного журнала  
«Вестник библиотек Армении»  
к.ф.н., доцент Анна Грайровна Чулян

<https://doi.org/10.52027/18294685-adb2024.1>

**БЕЛЯКОВА ДАРЬЯ АЛЕКСАНДРОВНА**  
Всероссийская государственная библиотека  
иностранной литературы имени М.И. Рудомино

### БИБЛИОТЕЧНЫЙ ДИАЛОГ СТРАН СНГ КАК ПЛОЩАДКА ДЛЯ МЕЖДУНАРОДНОГО ПРОФЕССИОНАЛЬНОГО ОБМЕНА

**Ключевые слова:** библиотека, профессиональное развитие, наставничество, СНГ, культурная дипломатия, культурно-историческое наследие, ИФЛА, Вторая мировая война, конкурс.

**Keywords:** library, professional development, mentoring, CIS, cultural diplomacy, cultural and historical heritage, IFLA, The Second World War, contest.

В апреле 2023 года Всероссийская государственная библиотека иностранной литературы им. М.И. Рудомино (г. Москва) и Центральная городская публичная библиотека им. В.В. Маяковского (г. Санкт-Петербург) осуществили программу международного форума «Библиотечный диалог стран СНГ». Программа прошла при финансовой поддержке Межгосударственного фонда гуманитарного сотрудничества (МФГС) и информационной поддержке Российской библиотечной ассоциации.

Участниками форума стали 30 молодых библиотекарей из национальных и региональных библиотек России (ДНР, ЛНР, Башкортостан, Коми, Татарстан, Чеченская Республика, Екатеринбург, Красноярск, Мурманск, Нижний Новгород, Новосибирск, Псков, Саратов, Ульяновск, Южно-Сахалинск), Азербайджана, Армении, Беларуси, Казахстана, Кыргызстана, Таджикистана и Узбекистана.



Официальное открытие программы состоялось 17 апреля в Библиотеке Маяковского в г. Санкт-Петербург, его участников приветствовал заместитель Председателя Комитета по культуре Санкт-Петербурга А.А. Александров, который отметил, что «Библиотечный диалог стран СНГ» украсил программу «Санкт-Петербург – культурная столица Содружества 2023»), задав хороший импульс работе города в направлении осуществления общей программы. Также с приветственными словами выступили руководители обеих библиотек – со-организаторов проекта – Зоя Васильевна Чалова и Павел Леонидович Кузьмин, которые пожелали участникам плодотворной работы и установления прочных горизонтальных связей между библиотеками регионов России и стран Содружества.

В ходе профессионального мероприятия были представлены основные направления работы Библиотеки Маяковского, далее участники программы продолжили работу в группах в рамках Лаборатории идей «Вектор Содружества».

В продолжение санкт-петербургской части программы 17-18 апреля молодые специалисты посетили Российскую национальную библиотеку и Отдел литературы по искусству и музыке «Невский Art» Библиотеки Маяковского, визит в которую завершился живым органным концертом, ознакомились с работой арт-резиденции «Шкаф», одной из самых известных площадок ЦБС Красногвардейского района. Посетили литературные музеи – Музей Ф.М. Достоевского и Музей Анны Ахматовой в Фонтанном доме, где прошли встречи, посвященные взаимодействию библиотек и литературных музеев.

С 19 по 21 апреля международный форум «Библиотечный диалог стран СНГ» продолжился во Всероссийской государственной библиотеке иностранной литературы имени М.И. Рудомино. Специально для его участников Центром библиотековедения и профессионального взаимодействия Библиотеки иностранной литературы была разработана образовательная программа «Библиотекари – послы культуры».



Первая лекция под открытым небом – Библиоурок «Великие личности в дипломатии» была организована в Атриуме Библиотеки иностранной литературы, где им представили памятники деятелей культуры разных стран и эпох. Далее состоялось знакомство участников Диалога с командой «Иностранки»: лекторами, руководителями подразделений, организаторами программы. М.В. Белоколенко, заместитель генерального директора Библиотеки иностранной литературы, прочитала лекцию на тему «Библиотека – Посол культуры: проекты Библиотеки иностранной литературы для развития межкультурного диалога». Цикл о дипломатии завершился лекцией заместителя руководителя Центра библиотековедения и профессионального взаимодействия О.И. Смирновой «Культурная дипломатия: дипломаты стран мира в онлайн-проектах Библиотеки иностранной литературы». Молодые сотрудники Библиотеки иностранной литературы провели подробную экскурсию по всем её читальным залам и культурным центрам, ответили на профессиональные вопросы, обменялись контактами и идеями для дальнейшего сотрудничества.



Интерактивная лекция-практикум «Историю делают люди» была посвящена международному электронному ресурсу «Библиотеки – свидетели Победы», который Библиотека иностранной литературы развивает в сотрудничестве с национальными и региональными библиотеками стран СНГ. Ближится годовщина Победы в Великой Отечественной войне. Участники Диалога обсудили роль библиотек в сохранении исторической памяти и воспитании ответственности за

это у молодого поколения. Молодые библиотекари читали вслух отрывки из писем и дневников своих земляков – героев электронного ресурса, в которых говорилось о том, как они встречали Победу в мае 1945 года.

Роли библиотек в сохранении мирового литературного наследия и развитии межкультурного диалога был посвящен обзор специальных проектов Библиотеки иностранной литературы. Его сделали Ю.А. Созина, директор по научной и образовательной деятельности Библиотеки иностранной литературы и сотрудники Центра междисциплинарных исследований и Академии Рудомино, которые были задействованы в работе по проектам.

Завершился этот насыщенный день посещением Литературного вечера «Самуил Маршак. Искусство перевода», в ходе которого молодые библиотекари получили возможность ознакомиться с творческим наследием этого выдающегося писателя и переводчика, с лучшими практиками мирового художественного перевода.

Программу Международного форума «Библиотечный диалог стран СНГ» продолжили профессиональные события, которые Библиотека иностранной литературы ежегодно организует в апреле для российских и зарубежных коллег.

Ключевым событием пятидневной программы стал VI международный форум «Формируя будущее библиотек». Он состоялся 20-го апреля в Овальном зале Библиотек иностранной литературы. Помимо 30 молодых библиотекарей из стран Содружества в нём приняли участие руководители и специалисты национальных и региональных библиотек и библиотечных ассоциаций, преподаватели и студенты библиотечных дисциплин, профессиональных СМИ. Обсуждалось содержание стратегических документов по развитию библиотечной отрасли на национальном, евразийском и международном уровнях. Практическая работа в группах, в которую были вовлечены молодые библиотекари стран Содружества, имела своей целью оценить рекомендации по развитию отрасли, данные Международной федерацией библиотечных ассоциаций и учреждений (ИФЛА) применительно к потребностям библиотечного дела каждого представленного региона; обменяться достижениями в реализации этих направлений деятельности в каждой стране Содружества. Предложить новые рекомендации по улучшению работы библиотек как на национальном, так и на международном уровне. Молодые библиотекари ярко и содержательно представили результаты работы своих групп.

Во второй половине дня участники форума присутствовали на церемонии награждения лауреатов конкурса на лучший проект в области международной деятельности «Премия Рудомино». Конкурс был учреждён в 2021 году к 100-летию Библиотеки иностранной литературы. Участие в церемонии позволило молодым специалистам оценить разнообразие и глубину представленных на конкурс проектов российских библиотек, отметить полезные инновации для дальнейшей работы и потенциальных партнёров для сотрудничества.

21-го апреля состоялось красочное подведение итогов международного творческого конкурса «Нити культуры – 2023». Его номинантами были все 30 молодых библиотекарей-участников форума. Они подготовили эссе, посвящённые объектам материального и нематериального культурного наследия своих стран и городов, на русском и других иностранных языках, снабжённые иллюстративным материалом.



11 номинантов, представители Азербайджана, Армении, Беларуси, Казахстана, Кыргызстана, России, Таджикистана, Узбекистана, получили специальные дипломы за победу в номинациях конкурса. Первое место заняло эссе сотрудницы Свердловской областной библиотеки, второе получила представитель Луганской республиканской библиотеки, третье – специалист Национальной библиотеки Узбекистана.

В ходе подведения итогов насыщенной пятидневной профессиональной программы форума генеральный директор Библиотеки иностранной литературы Павел Леонидович Кузьмин поздравил участников, пожелал продолжать сотрудничество между нашими библиотеками и развивать межкультурный диалог.

Библиотечный диалог для молодых специалистов стран СНГ, организованный Библиотекой иностранной литературы, стал важным вкладом в создание международной площадки для объединения усилий профессионального сообщества стран СНГ. Целью этой площадки является поиск практических решений и разработка стратегии развития библиотек в контексте глобальных изменений, происходящих в современном информационном обществе с учетом мировых тенденций в области библиотечного дела.

Видеозаписи событий форума представлены на странице Библиотеки иностранной литературы в социальной сети ВКонтакте: <https://vk.com/libflru>.

## SUMMARY

The article describes the implementation of a professional development program for young librarians from the CIS countries, which was implemented with the support of the MFGS in 2023 by the M.I. Rudomino All-Russian State Library for Foreign Literature (Moscow) and the V. Mayakovsky Central City Library (St. Petersburg). The topics and brief content of professional events as part of the program are listed. Its results and significance for the formation and strengthening of the professional community of libraries in the CIS are presented.

ՏՊԱԳԻՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

**Բանալի բառեր՝** տպագիր արտադրանք, վերականգնում, պահպանում, ամրակայում, խնամք:

**Keywords:** printed materials, restoration, conservation, bookbinding, treatment.

Մշակութային ժառանգության պահպանումը յուրաքանչյուր պետության առաջնահերթ խնդիրներից է: Դարերն ու տասնամյակները իրենց հետքն են թողնում մշակութային արժեք ունեցող գրքային նմուշների վրա:

Խորհրդային շրջանում գրադարանային ֆոնդերի պահպանությունը գտնվում էր պետության հոգածության ներքո: Դրա մասին է վկայում 1976 թվականի ընդունված «Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման մասին» օրենքը, որտեղ ընդգծված է, որ պատմության ու մշակույթի այն հուշարձանները, որոնք կապված են ժողովրդի կյանքում տեղի ունեցած պատմական իրադարձությունների, հասարակության ու պետության զարգացման հետ, ունեն պատմական, գիտական, գեղարվեստական ու հոգևոր արժեք և պահպանվում են պետության կողմից [Գրադարանային ֆոնդերի վերականգնողներին և պահնորդներին մեթոդական հանձնարարականներ], 1986, 1]:

Գրադարաններին ու թանգարաններին հասցեագրված փաստաթղթերի շարքում հատուկ տեղ է գրավում 1978 թվականի նոյեմբերի 28-ի «Երկրի գրադարանների և թանգարանների գրքային ֆոնդերի, ձեռագիր և արխիվային նյութերի պահպանման և օգտագործման բարելավման մասին» հրամանը [Նույն տեղում]:

Այն արձանագրում է գրքային ֆոնդերի և ձեռագիր ու արխիվային նյութերի հաշվառման, պահպանման և օգտագործման ասպարեզում եղած թերություններն ու բացերը, ձևակերպում է տպագիր ու ձեռագիր ֆոնդեր ունեցող հիմնարկների միջոցառումների ծրագիրը, այդ թվում.

- հսկողություն գրադարանների և թանգարանների ֆոնդերի հաշվառման, պահպանության նկատմամբ,
- ֆոնդերի պահպանության անհրաժեշտ պայմանների ստեղծում, վերականգնում և կոնսերվացիա,
- բոլոր ձեռագիր նյութերի, հազվագյուտ գրքերի առկայության ստուգում, մշակում ու հաշվառում,
- ձեռագրերի և տպագիր արտադրանքի վերականգնման, ամրակայման, կոնսերվացիայի համար անհրաժեշտ նյութերով ու տեխնիկայով ապահովելու առաջարկների նախապատրաստում:

Սույն հրամանը մեծ ազդեցություն ունեցավ գրադարանների ֆոնդերի պահպանման և հաշվառման գործում:

Հայաստանի ազգային գրադարանը հիմնադրվել է 1919 թվականին «Պետական Մատենադարանի մասին» օրենքով: Այդ դժվար ժամանակաշրջանում մեծ էր նաև գրադարանի դերը, որը ստանձնել էր երկրի տպագիր մշակութային ժառանգության պահպանումը:

1966 թվականին, գրադարանի տնօրեն Արագի Թիրաբյանի նախաձեռնությամբ և Կուլտուրայի մինիստրության թույլտվությամբ, քայքայված գրականությունը վերականգնելու նպատակով, գրադարանի հիմնական ֆոնդապահ բաժնում (գրապահոցում) ստեղծվեց գրականության հիգիենայի և ռեստավրացիայի ենթաբաժին:

1981 թվականի փետրվարի 1-ից ենթաբաժինը, առանձնանալով գրապահոցից, դարձավ ինքնուրույն բաժին: Այն առ այսօր գործում է Ազգային գրադարանում որպես առանձին ստորաբաժանում և իրականացնում է գրադարանային ֆոնդերի խնամքը, վերականգնումն ու պահպանումը:

Վերականգնման բաժնի հիմնական գործառույթներն են. հետևել գրադարանային ֆոնդերի պահպանման պայմաններին, պարբերաբար զննել և, անհրաժեշտության դեպքում հայտնաբերված «հիվանդ» ու վնասված միավորներն առանձնացնելուց հետո նախաձեռնել բուժման ու վերականգնման աշխատանքներ:

Ինչպես բոլոր ժամանակներում, մշակութային արժեք ունեցող հնատիպ և, առհասարակ, բոլոր տպագիր նյութերի պահպանումն այսօր էլ առաջնահերթ խնդիր է:

Միջազգային ֆորումներում, գիտաժողովներում, սեմինարներում պարբերաբար քննարկվում և նորանոր լուծումներ են առաջարկվում գրականության ֆոնդերի պահպանման ու վերականգնման խնդիրների հաղթահարման համար: Ֆոնդերի պահպանությունը, ինչը անմիջականորեն կապված է տպագիր միավորների երկարակեցության հետ, գրադարանների առաջնահերթ խնդիրներից է:

Գրքային ֆոնդերի արդյունավետ պահպանման համար անհրաժեշտ է ապահովել օդի ջերմային և խոնավության ռեժիմները՝ օդի 17-19°C ջերմաստիճանը և 50-55% հարաբերական խոնավությունը:

Ֆոնդերի անվնաս պահպանման համար կարևոր է նաև լուսավորությունը, որը կարող է լինել բնական և արհեստական: Անթույլատրելի է արևի ճառագայթների անմիջական ազդեցությունը տպագիր և ձեռագիր միավորների վրա: Այն կարող է անդառնալի վնաս հասցնել: Տպագրական թղթի որակի, հատկության հետ կապված՝ գրադարանային միավորը կարող է այրվել, փշրվել, դառնալ անընթեռնելի:

Միաժամանակ շատ կարևոր է գրքերի ճիշտ տեղադրումը գրադարաններում: Դարակների միջև հարկ է թողնել փոքր տարածություն, որը կնպաստի օդի ազատ շրջանառությանը, մաքրման ու փոշեհանման աշխատանքներին:

Գրքի պահպանման խնդրում փոշին գլխավոր վտանգներից մեկն է, որի մեջ կարող են լինել թուղթը վնասող մանրէներ, միջատներ և այլ վնասատու բակտերիաներ: Գրադարանային ֆոնդերի պարբերական զննումներ և փոշեհանման աշխատանքներ անհրաժեշտ է կատարել տարին երկու-երեք անգամ: Գրքերի փոշին հեռացնելու լավագույն եղանակը մեխանիկականն է, որը կատարվում է փոշեծծիչով, հատուկ փոշեմաքրիչ հարմարանքներով:


Ֆոնդերի պահպանման կարևորագույն և անհրաժեշտ պրոֆիլակտիկ միջոցառումներից է գրքային ֆոնդերի ստուգումը, ինչը հնարավորություն է տալիս ժամանակին հայտնաբերել «հիվանդ» (բորբոսային սնկով և միջատներով վարակված), վերականգնման և մաքրման կարիք ունեցող գրքերը: Հիմնական գրապահոցի համատարած ստուգումը խորհուրդ է տրվում անցկացնել հինգ տարին մեկ անգամ, ձեռագիր և հազվագյուտ գրքերինը՝ երեք տարին մեկ անգամ:

Այսօրվա մարտահրավերներին համապատասխան՝ զարգանում է նաև գրքերի վերականգնման ոլորտը:

Գրքերի վերականգնումը արհեստ չէ, թերությունների հասարակ շտկում չէ և դեկորատիվ ձևավորում չէ: Այն մի գործընթաց է, որի խնդիրն է երկարացնել գրքի կյանքը՝ պահպանելով ձևն ու բովանդակությունը: Մեր մասնագետները հետևողական են արդի վերականգնողական ոլորտի զարգացումներին: Նրանք մասնակցում են տարբեր միջազգային սեմինարների, վերապատրաստման դասընթացների, որտեղ արծարծվում են մասնագիտական շատ հարցեր, քննարկվում են ոլորտի վերջին նորույթները: Մասնակցում են նաև վարպետության դասերի և, որ շատ կարևոր է, ընկերանում և մաս են կազմում վերականգնողների միջազգային ընտանիքին:



Վերականգնողի կարևորագույն խնդիրներից է նաև մշակութային արժեք ունեցող և հազվագյուտ գրականության վերականգնումն ու ամրակայումը՝ պահպանելով գրքի ամբողջականությունը, նախնական բնական տեսքը և իհարկե, պահպանումը գալիք սերունդների համար:



Հնտորեն վերականգնված գիրքը պետք է ունենա այնպիսի տեսք, կարծես երբեք վերականգնման չի ենթարկվել: Գրքի ուսումնասիրությունից և աշխատանքները կանոնակարգելուց հետո միայն սկսվում է վերականգնման գործընթացը: Վերականգնման աշխատանքներն ու ընտրված նյութերը պետք է համապատասխանեն գրքի հրատարակման ժամանակաշրջանին, ոճին:

Հնատիպ գրքի վերականգնման համար օգտագործվում են հատուկ նյութեր և թղթեր: Եթե վնասված է գրքի կոճակը, և հնարավոր չէ այն վերականգնել, ստեղծվում է նորը՝ հնարավորինս ապահովելով նույնականությունը: Եթե վնասված են կամ պատռված են գրքի էջերը, ապա դրանց վերականգնման համար օգտագործվում են գրքի թղթի հաստության ու որակի հետ նույնական հատուկ ճապոնական թղթեր [Реставрация книг. Ответы на часто задаваемые вопросы]:

Վնասված գրադարանային միավորը ենթարկվում է խորը զննման, մաքրվում է տարիների փոշուց ու հետքերից, անհրաժեշտության դեպքում՝ ախտահանվում: Բոլոր նախնական մշակումները անցնելուց հետո սկսվում է բուն վերականգնման գործընթացը: Այն պահան-

ջում է առանձնակի անհատական մոտեցում: Աշխատանքը անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ գրքերը չձևափոխվեն, չկորցնեն իրենց նախնական տեսքը, դառնան ավելի երկարակյաց:


Վերականգնման և պահպանման մեթոդները հիմնված են գիտական հետազոտությունների և ստույգ մասնագիտական նյութերի վրա: Վերականգնման ընթացքում օգտագործվում են համապատասխան գործիքներ, պարագաներ, օժանդակ նյութեր և տարբեր տեսակի թղթեր:

Համաշխարհային թղթարդյունաբերության մեջ, ուր արտադրվում են ավելի քան 600 տարբեր տեսակի վերականգնողական թղթեր, առաջատար են արևելյան և եվրոպական արտադրանքները: Ազգային գրադարանում ևս օգտագործվում են ճապոնական վերականգնողական թղթեր, որոնք աշխարհին հայտնի են իրենց բնական հենքով և ունիվերսալ հատկություններով: Դրանք օգտագործելի են ինչպես հնատիպ և հազվագյուտ, այնպես էլ արդի գրականության համար, որոնք կարող են վնասվել շատ սպասարկվելուց կամ անորակությունից:

Վերականգնողների ջանքերի և մասնագիտական հմտությունների շնորհիվ ժամանակին ապահովվում է գրադարանի գրականության բուժումն ու վերականգնումը՝ չխաթարելով ընթերցողների անընդհատ սպասարկման պրոցեսը:

Քիչ չեն նաև դեպքերը, երբ վերականգնման են բերվում ընթերցասրահներից կամ նոր համալրված ժամանակակից գրքեր, որոնք կարիք են ունենում շտապ ամրակայման, վերականգնման: Ժամանակակից գրքի վերականգնման ժամանակ օգտագործվում են առկա այն բոլոր նյութերը, որոնցով հնարավոր է նույնակազմել, համապատասխանեցնել և վերադարձնել գրքի նախնական տեսքը:

Ազգային գրադարանի տպագիր արտադրանքի վերականգնման բաժինը ունի նաև կազմարարական գործառույթներ: Աշխատանքները իրականացնում են տարիների փորձ ունեցող կազմարարներ, ովքեր հմուտ և պատասխանատու հանձնառությամբ կազմում են գրքեր, հանդեսներ, համալրված լրագրերից՝ լրակազմեր, պատրաստում են գույքամատյաններ, տպագիր նյութերի պահպանման համար տարբեր չափերի արկղեր, թղթապանակներ, կտրում են քարտեր և այլն:





2023 թվականի փետրվարին, ՀՀ-ում պատմամշակութային շարժական հուշարձանների ամրակայմամբ, վերականգնմամբ և պահպանությամբ զբաղվող վերականգնող մասնագետների նախաձեռնությամբ հիմնադրվեց «Հայաստանի վերականգնողների ասոցիացիա», որի հիմնական պատասխաններից է Հայաստանում մշակութային ժառանգության որակյալ և բարձր մակարդակի պահպանումը, վերականգնող մասնագետների դերակատարման արժևորումը: Հայաստանի ազգային գրադարանի վերականգնողները նույնպես միացան այս նախաձեռնությանը և դարձան «Հայաստանի վերականգնողների ասոցիացիա»-ի անդամ:

## SUMMARY

Preserving culturally significant and rare literature remains a cornerstone mission for the National Library of Armenia. This essential endeavor is accomplished not solely through the fund-keeping departments, but also through the dedicated and meticulous efforts of restorers.

Our task is to be consistent with the preservation of the library's funds, to restore and fix the book, document, literary unit of cultural value in such a way as to preserve its integrity and the initial natural appearance corresponding to the period of its publication, because literature is our history and we must pass it on to future generations.

The years of experience and current, modern challenges emphasize the importance of staying connected with professional developments. Through active participation in numerous international events on restoration, both physical and virtual, we stay informed about the latest innovations in the restoration field. This engagement further refines our specialization, enriches our expertise, and enhances our skill set.

The preservation efforts of the National Library of Armenia's restorers have safeguarded thousands of books, magazines, rare documents, notes, and newspapers. Their dedication and passion drive their ongoing work, as they eagerly anticipate the realization of a restoration center tailored to the needs of the National Library in the near future.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գրադարանային ֆոնդերի վերականգնողներին և պահնորդներին մեթոդական հանձնարարականներ, Երևան, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ., 1986, 112 էջ:
2. Реставрация книг. Ответы на часто задаваемые вопросы, Эл. рес.: <https://www.kobzar.in.ua/blog/restavracija-knig-otvety-na-chasto-zadavaemye-voprosy/>, 17.04.2024.

**ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԴԵՐՈՒ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**Բանալի բառեր՝** քրեակատարողական հիմնարկ, գրադարան, գրքեր, ընթերցասրահ, ընթերցանություն, ազատազրկված անձ, դատապարտյալ, վերասոցիալականացում:

**Keywords:** penitentiary institution, library, books, reading room, reading, prisoner, convict, resocialization.

ՀՀ քրեական օրենսգիրքը սահմանում է, որ պատժի նպատակներն են վերականգնել սոցիալական արդարությունը, վերասոցիալականացնել պատժի ենթարկված անձին և կանխել հանցագործությունները [ՀՀ քրեական օրենսգիրք, 2021]: Դատապարտյալների վերասոցիալականացումը, նրանց իրավահպատակ վարքագծի ձևավորումը և նոր հանցագործությունների կանխումն ամրագրված են նաև որպես ՀՀ քրեակատարողական օրենսդրության նպատակներ: Դատապարտյալների վերասոցիալականացման և դրական վարքագծի ձևավորման նպատակով իրականացվող աշխատանքը ՀՀ քրեակատարողական օրենսգիրքը սահմանում է որպես գործունեություն, որն ուղղված է դատապարտյալների սոցիալական վերաինտեգրմանը և վերականգնմանը: Վերասոցիալականացման աշխատանքների կազմակերպման և դատապարտյալների օգտակար զբաղվածության ապահովման համատեքստում կարևորվում է քրեակատարողական հիմնարկներում համապատասխան պայմանների, այդ թվում՝ գրադարանների ստեղծումը [ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 2022]: Գրադարաններին հասանելիություն ունենալը կարևոր նշանակություն ունի ոչ միայն դատապարտյալների, այլև կալանավորված անձանց համար: «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի համաձայն, կալանավորված անձանց ևս պետք է իրենց ազատ ժամանակն արդյունավետ ձևով տնօրինելու հնարավորություն ընձեռվի [«Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք, 2002]: Լայն առումով, գրադարանները նպաստում են ազատազրկված անձանց՝ կրթության և տեղեկատվության ազատության իրավունքի իրացմանը, արդյունավետ զբաղվածության և արտաքին աշխարհի հետ կապի ապահովմանը, ընթերցանության նկատմամբ հետաքրքրության ձևավորմանը, պայմաններ են ստեղծում նրանց ստեղծագործական և մշակութային նախասիրությունների բավարարման, անձնական աճի և զարգացման համար:

Գրքեր կարդալու և այդ համատեքստում դատապարտյալների վերասոցիալականացմանը նպաստելու կարևորությունն ընդգծվում է ՄԱԿ-ի՝ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններում, որոնք առավել հայտնի են որպես Նելսոն Մանդելայի կանոններ: 40-րդ կանոնի համաձայն՝ «Յուրաքանչյուր բանտ պետք է գրադարան

---

<sup>1</sup>Ազատազրկված անձինք հասկացությամբ մատնանշում ենք կալանավորված անձանց և դատապարտյալներին: Կալանավորված անձինք նրանք են, ովքեր մեղադրվում են հանցագործություն կատարելու մեջ և որոնց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը: Դատապարտյալները նրանք են, որոնց նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ: Անձինք ազատազրկվում, այսինքն՝ հայտնվում են քրեակատարողական հիմնարկում, երբ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվում է կալանավորումը կամ որպես պատժի տեսակ ընտրվում է ազատազրկումը՝ կարճաժամկետ ազատազրկում, ազատազրկում և ցմահ ազատազրկում:

ունենա, որը պետք է հասանելի լինի բոլոր կատեգորիաների բանտարկյալների համար և պարունակի ինչպես ժամանցային, այնպես էլ կրթական բովանդակությամբ գրքեր: Պետք է խրախուսել բոլոր բանտարկյալների գրադարանից օգտվելը» [Միավորված Ազգերի Կազմակերպության՝ բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն չափորոշիչ կանոններ (Նելսոն Մանդելայի կանոններ), 2015]: Եվրոպայի խորհրդի թիվ (2006)2 հանձնարարականը նշում է, որ յուրաքանչյուր հիմնարկ պետք է ունենա բոլոր բանտարկյալների օգտագործման համար նախատեսված գրադարան, որը պետք է համարժեքորեն ապահովված լինի և ժամանցի, և կրթական տարաբնույթ տեղեկություններով, գրքերով և այլ միջոցներով: Պետք է խրախուսել, որ բանտարկյալներն օգտվեն գրադարանից, որի գործունեությունը հնարավորության դեպքում պետք է կազմակերպված լինի հանրային գրադարանային ծառայությունների հետ համագործակցությամբ [Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին «Եվրոպական բանտային կանոնների մասին», 2006]:

Ուսումնասիրության ընթացքում պարզել ենք, որ Հայաստանի բոլոր քրեակատարողական հիմնարկները<sup>2</sup>, բացառությամբ «Աբովյան» և «Սևան» ՔԿՀ-ների, ունեն 1-ական գրադարաններ: «Աբովյան» ՔԿՀ-ն ունի 1 հիմնական և 2 տեղամասային, «Սևան» ՔԿՀ-ն՝ 1 աշխարհիկ և 1 հոգևոր գրադարան: Քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրված տեղեկատվությունը ներկայացնում ենք ստորև.

- «Աբովյան» ՔԿՀ-ի հիմնական գրադարանը տեղակայված է ակումբի շենքում, տեղամասային գրադարաններից մեկը՝ 1-ին մասնաշենքում, որը նախատեսված է միջին անվտանգային գոտու մեղմ և ցածր անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող կանանց համար, իսկ մյուսը՝ 3-րդ մասնաշենքում, որը նախատեսված է կալանավորված և ազատազրկման դատապարտված անչափահասների, կալանավորված, բարձր անվտանգային գոտու մեղմ և խիստ, ինչպես նաև միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող կանանց համար<sup>3</sup>:

- «Արթիկ» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է 5-րդ մասնաշենքում, որը կացարանային տեսակի շենք է և նախատեսված է միջին անվտանգային գոտու մեղմ և ցածր անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների համար:

- «Արմավիր» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է մասնաշենքերից դուրս առանձին տարածքում:

- «Գորիս» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է 1-ին հարկում:

---

<sup>2</sup>Քրեակատարողական հիմնարկն այն վայրն է, որն ապահովում է կալանավորման՝ որպես խափանման միջոցի, և ազատազրկման՝ որպես պատժի տեսակի կատարումը: Հայաստանի քրեակատարողական հիմնարկները 10-ն են և գործում են Քրեակատարողական ծառայության, իսկ վերջինս՝ Արդարադատության նախարարության ենթակայության ներքո: «Աբովյան» ՔԿՀ-ն նախատեսված է կանանց և անչափահասների համար, իսկ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ն միակ մասնագիտացված բուժհաստատությունն է քրեակատարողական համակարգում, որտեղ ազատազրկված անձինք տեղափոխվում են իրենց բուժումը մյուս քրեակատարողական հիմնարկների բուժմասերի պայմաններում կազմակերպելու անհնարիության դեպքում:

<sup>3</sup>Քրեակատարողական հիմնարկները բաղկացած են անվտանգային գոտիներից՝ ցածր, միջին և բարձր, որոնցից յուրաքանչյուրն ունի մեղմ և խիստ պայմաններ: Ցածր անվտանգային գոտում պատիժ են կրում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած դատապարտյալները: Միջին անվտանգային գոտում պատիժ են կրում ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած և 10 տարին չզերազանցող ժամկետով ազատազրկման դատապարտված անձինք, ինչպես նաև նախկինում ազատազրկում չկրած դատապարտյալները՝ ռեցիդիվի դեպքում: Բարձր անվտանգային գոտում պատիժ են կրում 10 տարուց ավելի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձինք, ինչպես նաև նախկինում ազատազրկում կրած դատապարտյալները՝ ռեցիդիվի դեպքում:

• «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է հիմնարկի բնակելի գոտու թերապևտիկ և հոգեբուժական բաժանմունքների բակային հատվածի առանձնացված մասնաշենքում:

• «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ն կազմված է 1 մասնաշենքից, իսկ գրադարանին հատկացված է առանձին տարածք:

• «Նուբարաշեն» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է 7-րդ մասնաշենքի 1-ին հարկում, որտեղ պահվում են միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող այն դատապարտյալները, ովքեր ընդգրկված են հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում:

• «Սևան» ՔԿՀ-ի հիմնական գրադարանը տեղակայված է 5-րդ մասնաշենքում, իսկ հոգևոր գրադարանը՝ եկեղեցուն կից:

• «Վանաձոր» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է 1-ին հարկում:

• «Վարդաշեն» ՔԿՀ-ի գրադարանը տեղակայված է կացարանային տեսակի մասնաշենքերից մեկում, որը նախատեսված է միջին անվտանգային գոտու մեղմ և ցածր անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող դատապարտյալների համար:

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգի համաձայն՝ միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում և ցածր անվտանգային գոտում գրադարանին կից կազմակերպվում է ընթերցասրահ, որտեղ նշված պայմաններում պատիժ կրող դատապարտյալները կարող են օրվա կարգացուցակով իրենց հատկացված ազատ ժամերին զբաղվել ընթերցանությամբ [ՀՀ կառավարության թիվ 543-Ն որոշում, 2023]: Քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ «Աբովյան» ՔԿՀ-ում 1-ին մասնաշենքի գրադարանը ծառայում է որպես ընթերցասրահ: 3-րդ մասնաշենքում կանայք և անչափահասներն ընթերցանությամբ զբաղվում են իրենց պահման խցերում: «Արթիկ» ՔԿՀ-ում գրադարանը ծառայում է նաև որպես ընթերցասրահ, որտեղից օգտվում են 5-րդ մասնաշենքում պատիժ կրող դատապարտյալները: Մյուս մասնաշենքերում, որոնք խցային տեսակի են, ընթերցանությունը կազմակերպվում է խցերում: «Սևան» ՔԿՀ-ում որպես ընթերցասրահ ծառայում է եկեղեցուն կից գործող գրադարանը: Իսկ այն անձինք, ովքեր չեն ցանկանում օգտվել ընթերցասրահից, իրենց կացարաններում են զբաղվում ընթերցանությամբ: «Վարդաշեն» ՔԿՀ-ում որպես ընթերցասրահ ծառայում է գրադարանը, որտեղից օգտվում են գրադարանի տեղակայման մասնաշենքում պատիժ կրող դատապարտյալները: Մյուս մասնաշենքերում, որոնք խցային տեսակի են, ազատագրված անձինք խցերում են զբաղվում ընթերցանությամբ: Ազատագրված անձինք խցերում են ընթերցանությամբ զբաղվում նաև «Արմավիր», «Գորիս», «Երևան-Կենտրոն», «Նուբարաշեն» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում, քանի որ այդ հիմնարկներում գրադարաններին կից ընթերցասրահներ նախատեսված չեն: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այդ հիմնարկներում միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններ և ցածր անվտանգային գոտի նախատեսված չեն: Իսկ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում ընթերցանությունը կազմակերպվում է գրուցարաններում կամ հիվանդասենյակներում:

Ինչպես տեսնում ենք, բոլոր քրեակատարողական հիմնարկներում տեղակայված են գրադարաններ, սակայն, մեր դիտարկմամբ, մտահոգության տեղիք է տալիս այն, որ դրանք հավասարապես հասանելի չեն ազատագրված բոլոր անձանց: Դա վերաբերում է գրադարանների տեղակայման մասնաշենքերից դուրս այլ մասնաշենքերում, այդ թվում՝ կարանտինային բաժանմունքներում, պատժախցերում և բժշկական ստորաբաժանումներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին: Մտահոգիչ է այն, որ գրադարանները հիմնականում փոքր սենյակներ են՝ համալրված գրքերով և գրապահարաններով, սեղանով և մի քանի աթոռով: Դրանք հիմնականում վերանորոգված չեն, ապահովված չեն ջեռուցման և օդափոխության համակարգերով, չունեն բավարար նյութատեխնիկական միջոցներ, այդ

թվում՝ համակարգիչներ, ինչը բացասաբար է անդրադառնում ընթերցանության վրա: Ավելին, «Աբովյան» ՔԿՀ-ի 3-րդ տեղամասի գրադարանը հոգեբանի աշխատասենյակն է, իսկ «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ի գրադարանում տեղակայված են տեսակապի համակարգիչը և հեռախոսային հանգույցը, որոնց միջոցով ազատազրկված անձինք կապ են պահպանում իրենց հարազատների և ընտանիքի անդամների հետ: Միննույն ժամանակ հոգեբանն այնտեղ է ընդունելություն կատարում: Բացառություն են կազմում «Արմավիր» ՔԿՀ-ի և «Սևան» ՔԿՀ-ի հոգևոր գրադարանները, որոնք համեմատաբար ընդարձակ են և ծառայում են որպես տարաբնույթ միջոցառումների կազմակերպման վայր: «Արմավիր» ՔԿՀ-ի գրադարանն ապահովված է համակարգիչներով, որոնց միջոցով հավաքածուները թվայնացվում են: Մտահոգիչ է նաև այն, որ նախատեսված չեն երկրում գործող գրադարանների հետ համագործակցության ընթացակարգեր, ինչը նվազեցնում է ազատազրկված անձանց՝ գրադարանային որակյալ ծառայություններից օգտվելու հնարավորությունը:

Քրեակատարողական ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ քրեակատարողական հիմնարկ մուտք գործող յուրաքանչյուր ազատազրկված անձ իրեն հասկանալի լեզվով ծանոթացվում է իր իրավունքներին և պարտականություններին, այդ թվում՝ գրադարանից օգտվելու իրավունքին: Սակայն կարևոր է, որպեսզի գրադարանից օգտվելու իրավունքի մասին ծանուցելուն զուգահեռ ազատազրկված անձանց համապարփակ տեղեկատվություն տրամադրվի գրադարանների կողմից առաջարկվող ծառայությունների և դրանցում առկա ռեսուրսների մասին, ինչը ներկայումս չի կատարվում:

Գրքերից, ամսագրերից և թերթերից օգտվելու կարգը և պայմանները սահմանում է քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը, որի համաձայն՝ գրքերի և ամսագրերի փոխանակությունն իրականացնում է գրադարանավարը՝ ազատազրկված անձանց կողմից տրված պատվերների հիման վրա: Միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում և ցածր անվտանգային գոտում պատիժ կրող դատապարտյալները կարող են այցելել գրադարան և վերցնել իրենց նախընտրած գրականությունը՝ կացարանում կամ ընթերցասրահում կարդալու համար: Բարձր անվտանգային գոտում և միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում պատիժ կրող դատապարտյալներին, ինչպես նաև կալանավորված անձանց ներկայացվում է գրադարանում առկա գրականության ցանկը, որտեղից ընտրում են իրենց նախընտրած գրականությունը, որը տրամադրվում է գրադարանավարի կողմից կամ նրանց զբոսանքի ժամին ուղեկցում են գրադարան՝ գրականությունն անձամբ վերցնելու համար [ՀՀ կառավարության թիվ 543-Ն որոշում, 2023]:

Քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը նախատեսում է նաև բաժանորդագրությամբ ձեռք բերված գրականությունից և պարբերական մամուլից օգտվելու ընթացակարգ: Ազատազրկված անձինք այդ նպատակով դիմում են քրեակատարողական հիմնարկի պետին: Բաժանորդագրության ձևակերպումը կատարում է քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչը: Բաժանորդագրության համար անհրաժեշտ դրամը փոխանցվում է ազատազրկված անձանց անձնական հաշվից: Բաժանորդագրությունը ձևակերպվում է ազատազրկված անձանց անունով՝ քրեակատարողական հիմնարկի փոստային հասցեով [ՀՀ կառավարության թիվ 543-Ն որոշում, 2023]: Մինչդեռ քրեակատարողական ծառայության տրամադրած տեղեկատվության համաձայն, ազատազրկված անձինք նշված ընթացակարգով գրականությունից կամ պարբերական մամուլից օգտվելու համար վերջին տարիներին դիմումներ չեն ներկայացրել, ինչի պատճառները չեն ուսումնասիրվել:

Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկների գրադարաններից օգտվելուն, ապա մեր կողմից արձանագրված խնդիրները վերաբերում են գրացուցակների կազմմանը և գրքերի սպասարկման կազմակերպմանը: Մեզ տրամադրված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ քրեակատարողական հիմնարկների գրադարաններում առկա են հիմնականում թղթային գրացուցակներ, որոնք կազմում են գրադարանավարի

գործառույթ կատարող դատապարտյալները կամ հիմնարկների աշխատակիցները: Գրացուցակները կազմվում են ըստ ժանրերի: Ընթացակարգը փոքր-ինչ այլ է «Արմավիր» ՔԿՀ-ում: Այնտեղ գրացուցակները թվայնացվել են և տրամադրվել հիմնարկի բոլոր մասնաշենքերին: Ըստ այդմ՝ դատապարտյալը կամ կալանավորված անձը, ծանոթանալով գրքերի ցանկին, հիմնարկի աշխատակցի միջոցով ձեռք է բերում իր ընտրած գիրքը: Մինչդեռ պարզել ենք, որ միջհիմնարկային սպասարկման, գրացուցակների և գրքերի սպասարկման միասնական թվային համակարգ ներդրված չէ, ինչն ազատագրված անձանց հնարավորություն կտա առցանց որոնում կատարել կամ հասանելիություն ունենալ գրադարանների տեղեկատվական շտեմարաններին: Այս համատեքստում դրական միտում է այն, որ հաշվի առնելով հիմնարկներում ըստ կարիքների և նպատակայնության թղթային տարբերակով գրքերը համալրելու, հետագայում գրքերի պահման և խնամքի բարդությունները՝ Քրեակատարողական ծառայությունը ծրագրում է հիմնարկներում էլեկտրոնային գրադարան ներդնել՝ բազմազան, բազմաոլորտ և տարալեզու գրականության հասանելիությունն առավել դյուրին դարձնելու նպատակով:

Պարզել ենք նաև, որ գրադարանից օգտվող ազատագրված անձանց ընթերցողական քարտեր չեն տրամադրվում: Փոխարենը կա հաշվառման մատյան, որտեղ նշվում են ազատագրված անձի անունը, ազգանունը, տրամադրված գրքի անվանումը, տրամադրման օրը, ամիսը, տարեթիվը, իսկ գիրքը վերադարձնելուց հետո՝ վերադարձի օրը, ամիսը, տարեթիվը: Մտահոգիչ է այն, որ առկա չէ տրամադրված գրքերի և գրադարանից օգտվող ազատագրված անձանց վերաբերյալ հաշվառում իրականացնելու միասնական մոտեցում, թեև բոլոր գրադարաններում առկա են հաշվառման մատյաններ: Ըստ քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրված տեղեկատվության՝ «Աբովյան» ՔԿՀ-ում ազատագրված անձանց գրեթե 80 տոկոսը օգտվում է գրադարաններից: «Արթիկ» ՔԿՀ-ի գրադարանից ներկայումս օգտվում է մոտ 200, «Գորիս» ՔԿՀ-ի գրադարանից՝ 106 ազատագրված անձ: «Սևան» ՔԿՀ-ում գրադարանից ամսական կտրվածքով օգտվում են միջինը 64 անգամ: «Վանաձոր» ՔԿՀ-ում գրադարանից օգտվող անձանց թիվը ամսական կտրվածքով կազմում է 20 ազատագրված անձ: Գրադարանից օգտվող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալներ չեն տրամադրվել «Արմավիր», «Դատապարտյալների հիվանդանոց» և «Վարդաշեն» ՔԿՀ-ների կողմից: «Երևան-Կենտրոն» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներից տեղեկացրել են, որ գրադարանից օգտվող ազատագրված անձանց թվի հաշվառում չի կատարվում: Մտահոգիչ է նաև այն, որ տրամադրված թվային տվյալներն արժանահավատ չեն, քանի որ հիմնականում ներկայացնում են ոչ թե գրադարանից օգտվող անձանց, այլ գրադարանից յուրաքանչյուր անգամ օգտվելու թիվը, այնինչ 1 ազատագրված անձը կարող է գրադարանից մի քանի անգամ օգտվել: Հետևաբար հնարավոր չէ հստակ պատկերացնում կազմել գրադարանից օգտվող ազատագրված անձանց վիճակագրության մասին:

Համադրելով քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրված տեղեկատվությունը՝ նկատել ենք, որ գրադարանից վերցված գրքերն ուշ վերադարձնելու, դրանք վնասելու կամ կորցնելու դեպքերի համար որևէ ընթացակարգ նախատեսված չէ: Քրեակատարողական ծառայությունից պարզաբանել են, որ գրադարանի գիրքը հիմնարկի գույքն է, հետևաբար ազատագրված անձինք պարտավոր են խնամքով վերաբերվել դրան, հակառակ դեպքում կարող են ենթարկվել օրենքով սահմանված պատասխանատվության: Այնինչ նման դեպքերի համար կարելի է դիտարկել գրադարանից օգտվելու հնարավորության ժամանակավոր սահմանափակում, վնասված կամ կորցրած նյութերն այլ նյութերով փոխարինելու տարբերակ, ինչը պատժիչ բնույթ չի կրում, ընդհակառակը, կարող է բարձրացնել գրադարանից օգտվելու գործընթացի նկատմամբ պատասխանատվության և հարգանքի զգացողությունը:

Ուսումնասիրության ընթացքում պարզ է դարձել, որ քրեակատարողական հիմնարկներում գրադարանավարի հաստիք նախատեսվելու և այն համալրելու հարցում ևս առկա չէ



միասնական մոտեցում: Որոշ հիմնարկներում («Աբովյան», «Գորիս», «Երևան-Կենտրոն» և «Վանաձոր») գրքերի տրամադրման գործընթացը կատարում են այդ հիմնարկների Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինների աշխատակիցները: Ստահոգիչ է այն, որ այս դեպքում ևս մոտեցումը միասնական չէ: Օրինակ, կան հիմնարկներ, որտեղ այդ աշխատանքը բաշխված է նշված բաժնի աշխատակիցների միջև («Աբովյան», «Գորիս»): Կան նաև հիմնարկներ, որտեղ այդ բաժինների ավագ մասնագետները հիմնարկի պետի կողմից նշանակվել են որպես պատասխանատուներ («Երևան-Կենտրոն», «Վանաձոր»): Մյուս հիմնարկներում գրադարանավարի գործառույթները կատարում են հիմնարկների տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում չվարձատրվող («Արթիկ», «Դատապարտյալների հիվանդանոց» և «Սևան» ՔԿՀ-ներ) և վարձատրվող («Արմավիր», «Նուբարաշեն» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներ) հիմունքներով ներգրավված դատապարտյալները:

Ստորև ներկայացնում ենք քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրված տեղեկատվությունը.

- «Արթիկ» ՔԿՀ-ում գրադարանի բարեկարգման, գրքերի հաշվառման, այլ մասնաշենքեր գրքերի մատակարարման աշխատանքները կատարում է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման չվարձատրվող աշխատանքներում ընդգրկված ցմահ դատապարտյալներից մեկը, ով պատիժ է կրում միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում:

- «Արմավիր» ՔԿՀ-ում գրադարանավարի աշխատանքը կատարում է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման վարձատրվող աշխատանքներում ընդգրկված դատապարտյալներից մեկը, ով պատիժ է կրում բարձր անվտանգության գոտու մեղմ պայմաններում: Վարձատրության չափը հաշվարկվել է շաբաթական 20 աշխատանքային ժամով: Հիմնարկի պետի հրամանով՝ գրադարանի աշխատանքների վերահսկողությունը հանձնարարվել է Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի գլխավոր սոցիալական աշխատողին:

- «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում գրադարանի բարեկարգման, գրքերի հանձնման, ընդունման և համապատասխան մատյանում հաշվառման աշխատանքները կատարում է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման չվարձատրվող աշխատանքներում ընդգրկված դատապարտյալներից մեկը, ով պատիժ է կրում միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում: Գործընթացը վերահսկվում է հիմնարկի Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի կողմից:

- «Նուբարաշեն» ՔԿՀ-ում գրադարանավարի աշխատանքը կատարում է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման վարձատրվող աշխատանքներում ընդգրկված դատապարտյալներից մեկը, ով պատիժ է կրում միջին անվտանգային գոտու խիստ պայմաններում: Վարձատրությունը կատարվում է օրենքով սահմանված կարգով:

- «Սևան» ՔԿՀ-ում գրադարանավարի աշխատանքները կատարում է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման չվարձատրվող աշխատանքներում ընդգրկված դատապարտյալներից մեկը, ով պատիժ է կրում միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում:

- «Վարդաշեն» ՔԿՀ-ում գրադարանավարի աշխատանքը կատարում է հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման վարձատրվող աշխատանքներում ընդգրկված դատապարտյալներից մեկը, ով պատիժ է կրում միջին անվտանգային գոտու մեղմ պայմաններում: Վարձատրության չափը կազմում է ամսական 75.000 ՀՀ դրամ:

Ուսումնասիրության ընթացքում պարզել ենք, որ հիմնարկների Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինների աշխատակիցները գրքերի տրամադրման

գործառույթը համատեղում են իրենց հիմնական աշխատանքային գործառույթների հետ, ինչի համար առանձին համ հավելյալ վարձատրություն նախատեսված չէ: Մյուս կողմից դա կարող է հանգեցնել աշխատանքային ծանրաբեռնվածության կամ գրքերի սպասարկման հարցում հապաղումների: Գրադարանավարի աշխատանքը դատապարտյալների կողմից կատարվելու դեպքում տվյալ հաստիքը կարող է թափուր մնալ, քանի որ տվյալ դատապարտյալի պատժի հետագա կրումից ազատվելու դեպքում այդ աշխատանքում այլ դատապարտյալ ներգրավելը որոշ ժամանակ է պահանջում: Բացի այդ, գրադարանավարի գործառույթը հիմնարկի տեխնիկատնտեսական սպասարկման չվարձատրվող աշխատանքներում ընդգրկված դատապարտյալների կողմից կատարելը կարող է սահմանափակել գրադարանների հասանելիությունը, քանի որ դատապարտյալներն այդ աշխատանքները կատարում են աշխատանքային ժամերին՝ օրական 2 ժամից ոչ ավելի ժամանակով [ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 2022]:

Քրեակատարողական ծառայության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ գրադարանավարի գործառույթներ կատարող դատապարտյալներին ընտրելիս նկատի են առնվում նրանց ցանկությունը, անվտանգային գոտու տեսակը և պայմանը, կրթությունը, պատժի կրման ընթացքում դրսևորած վարքագիծը, անձնային որակները և այլն: Սակայն մտահոգիչ է այն, որ նախատեսված չեն գրադարանային գործի ուսուցման վերաբերյալ դասընթացներ, որոնք կտվորեցնեն այնպիսի հմտություններ, ինչպիսիք են գրացուցակներ կազմելը, գիրք վերցնելու և վերադարձի կանոնները և այլն: Մասնագիտական հմտություններին տիրապետելուց բացի կարևոր է նաև, որպեսզի գրադարանավարի գործառույթ կատարող դատապարտյալներն ունենան էմոցիոնալ գրագիտություն, սթրեսակայություն, համբերատարություն, անկողմնակալ վերաբերմունք դրսևորեն խոցելի խմբերի ազատազրկված անձանց նկատմամբ, ունակ լինեն հարգանք և հետաքրքրություն առաջացնել ընթերցանության նկատմամբ, ինչը, փաստորեն, ներկայումս հնարավոր չէ ապահովել:

Քրեակատարողական հիմնարկներից ստացված պաշտոնական տվյալների վերլուծության արդյունքում բացահայտել ենք, որ գրադարանները նոր գրականությամբ համալրելու հարցում չկա միասնական ընթացակարգ: Գրադարանները հիմնականում համալրվում են պետական կառույցների, հասարակական կամ կրոնական կազմակերպությունների, անհատների կողմից կատարված նվիրատվությունների միջոցով՝ բացառությամբ իրավական ակտերի, որոնք ձեռք են բերվում Քրեակատարողական ծառայության կողմից, «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված գնման ընթացակարգով: Քրեակատարողական հիմնարկների կողմից տրամադրված տեղեկատվությունը ներկայացնում ենք ստորև.

- «Աբովյան» ՔԿՀ-ում ընդհանուր առկա է 15.100 միավոր գրականություն: Գրադարանները վերջին անգամ համալրվել են 2019 թվականին՝ «Հայաստանի հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան կազմակերպության կողմից տրամադրվել է 455 միավոր գիրք:

- «Արթիկ» ՔԿՀ-ի գրադարանում առկա է մոտ 4000 միավոր գրականություն: Այն վերջին անգամ համալրվել է 2024 թվականի փետրվարին: Կալանավորված անձանցից մեկի հարազատները գրադարանին են նվիրել գեղարվեստական և մասնագիտական 100 միավոր գիրք:

- «Արմավիր» ՔԿՀ-ի գրադարանում առկա է 3300 միավոր գրականություն: Համալրումը կատարվում է հիմնարկի Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի կողմից՝ անհատների և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում:

- «Գորիս» ՔԿՀ-ի գրադարանում առկա է 1258 միավոր գրականություն: Գրադարանը վերջին անգամ համալրվել է 2017 թվականին Գորիսի համայնքապետարանի աջակցությամբ: Տրամադրվել է 150 միավոր գիրք: Քրեակատարողական ծառայության կողմից 2023 թվականին տրամադրվել է 5 միավոր գիրք, որից 2-ը՝ օրենսգիրք:

• «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի գրադարանը համալրված է հայերեն և ռուսերեն շուրջ 2500 միավոր գրականությամբ, որոնք հիմնականում պատմական, արկածային, գեղարվեստական և փաստագրական ժանրերի են: Գրադարանը վերջին անգամ համալրվել է 2023 թվականի օգոստոսին, ամերիկահայ գրող Նունե Փենի «Կյանքամեջում սղված երիտասարդություն» վերնագրով գրքերով:

• «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ի գրադարանում առկա է շուրջ 3000 միավոր գրականություն: Գրադարանը վերջին անգամ համալրվել է 2018 թվականի մարտի 28-ին: «Լև Գրուպ» ՍՊԸ-ի կողմից տրամադրվել է 10 միավոր գիրք և գրքույկ:

• «Նուբարաշեն» ՔԿՀ-ի գրադարանում առկա է մոտ 2500 միավոր գրականություն: Գրադարանի համալրման և գրքերի ստացման վերաբերյալ հաշվառումներ չեն կատարվում:

• «Սևան» ՔԿՀ-ի 5-րդ մասնաշենքում գործող գրադարանում առկա է 3350 միավոր գրականություն, իսկ եկեղեցուն կից գործող հոգևոր գրադարանում՝ 31 միավոր: Գրադարանը վերջին անգամ համալրվել է 3 միավոր գրքով 2023 թվականի օգոստոսի 17-ին Նունե Փենի կողմից:

• «Վանաձոր» ՔԿՀ-ի գրադարանը համալրված է մոտ 1300 միավոր գրականությամբ, որը վերջին անգամ համալրվել է 38 միավոր գրքով 2020 թվականի փետրվարին:

• «Վարդաշեն» ՔԿՀ-ի գրադարանում առկա են 4172 միավոր գրականություն, որից 2402-ը՝ օտարալեզու: Գրադարանը վերջին անգամ համալրվել է տարաբնույթ գրականությամբ՝ 50 միավոր գրքով 2020 թվականին ՀՀ քաղաքացու կողմից:

Կարևոր է, որպեսզի գրադարանների հավաքածուները համահունչ լինեն ազատագրված անձանց կարիքներին, համապատասխանեն նրանց գրագիտության և կրթության աստիճանին, արտացոլեն նրանց ժողովրդագրական կազմը, հեղինակների կամ ժանրային նախասիրությունները և այլն: Գրքերից բացի հավաքածուները պետք է ներառեն հեշտ ընթերցվող նյութեր, ուղղագրական գրքեր, բառարաններ, թերթեր, առողջապահական տեղեկագրեր, օտարալեզու բառարաններ և տեղեկատու նյութեր, կրոնական թեմաներով գրականություն: Հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է հասանելի լինեն այլընտրանքային ձևաչափով նյութեր, այդ թվում՝ բրայլյան գրերով, գլխատառ կամ խոսող գրքերով, ենթագրերով և ժեստերի լեզվով տեսա-լսողական նյութերով: Գրադարանի հավաքածուները պետք է ներառեն տարեց անձանց, կանանց և տղամարդկանց, անչափահասների այդ թվում՝ մինչև 3 տարեկան երեխաների և նրանց ծնողների<sup>4</sup> առողջության պահպանմանը վերաբերող, հետաքրքրությունները, ընթերցանության և տեղեկատվական կարիքները բավարարող, տարիքային զարգացմանը և նախասիրություններին համապատասխանող գրականությամբ և տեղեկատվական այլ նյութերով: Խոշոր տառերով կամ աուդիո գրքերը պետք է հասանելի լինեն վատ տեսողություն ունեցող անձանց համար: Նրանց պետք է տրամադրվեն օժանդակ սարքեր, օրինակ, խոշորացույցներ կամ աուդիո-նվագարկիչներ: Կրթական ծրագրերում ընդգրկված անձինք, այդ թվում՝ անչափահասները, պետք է ապահովվեն մասնագիտական գրականությամբ, դասագրքերով և ուսումնառության հետաքրքրությունները բավարարող նյութերով: Այնինչ ուսումնասիրության ընթացքում պարզել ենք, որ համալրումները կատարելիս նկատի չեն առնվում ազատագրված անձանց կարիքները: Ավելին, նվիրատվությամբ փոխանցվող նյութերի ընտրության չափանիշներ, դրանց գնահատման, ընդունման կամ մերժման, ինչպես նաև գրադարանների հավաքածուների թարմացման ընթացակարգեր նախատեսված չեն, բացառությամբ այն դեպքերի, երբ խոսքը վերաբերում է պոռնոգրաֆիկ և էրոտիկ նյութերին, որոնք ներառված են քրեակատարողա-

<sup>4</sup>Ազատագրված ծնողը կարող է իր՝ մինչև 3 տարեկան երեխային պահել իր մոտ: Երեխայի 3 տարին լրանալուց հետո քրեակատարողական հիմնարկի պետք կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև ծնողի պատժի ժամկետի ավարտը, եթե պատժի ավարտին մնացել է 3 տարուց ոչ ավելի ժամանակ:

կան հիմնարկներում արգելված իրերի ցանկում: Այսինքն՝ ազատագրված անձինք չեն կարող դրանք ունենալ իրենց մոտ, ստանալ հանձնուքով կամ ծանրոցով [ՀՀ կառավարության թիվ 543-Ն որոշում, 2023]:

Ինչ վերաբերում է դատապարտյալների՝ պատժից ազատման նախապատրաստմանը, ապա քրեակատարողական հիմնարկի վարչակազմի համար որոշ պարտականություններ են սահմանված: Դա վերաբերում է պատժի կրման ավարտին մինչև 6 ամիս մնացած դատապարտյալներին, ովքեր տեղեկացվում են, որ ազատ արձակվելուց հետո կարող են դիմել «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազորված մարմին և աշխատանքի տեղավորման հարցում սահմանված կարգով աջակցություն ստանալ: Կենսաթոշակային տարիքի հասած, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող դատապարտյալների խնդրանքով քրեակատարողական հիմնարկի վարչակազմը նրա տվյալները ներկայացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայություն՝ տարեցների կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքն ապահովող սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամք ապահովելու նպատակով [ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, 2022]: Պատժից ազատմանը նախապատրաստելու փուլում երկրում գործող գրադարաններ ուղղորդելու ընթացակարգ ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ նախատեսված չէ: Այսինչ կարևոր է, որպեսզի դատապարտյալները, հնարավորության դեպքում՝ նաև կալանավորված անձինք դուրս գան քրեակատարողական հիմնարկից՝ իմանալով, թե որտեղ և ինչ գրադարաններ կան, և իրենք ինչպես կարող են դրանցից օգտվել: Դա կարող է ներառել տեղեկատվություն երկրում առկա գրադարանների և դրանցից օգտվելու կարգի մասին, գրադարանների հետ համագործակցության շրջանակներում ընթերցողական քարտի տրամադրում և այլն:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Հայաստանի բոլոր քրեակատարողական հիմնարկներում գործում են գրադարաններ, որոնց աշխատանքը կազմակերպելու ուղղությամբ պետության կողմից քայլեր են ձեռնարկվում: Մակայն դժվար է գնահատել, թե գործնականում ընթերցանությունն ինչպես է նպաստում ազատագրված անձանց արդյունավետ զբաղվածության ապահովմանը, նրանց զարգացմանը և մասնագիտական կարողությունների պահպանմանը, քանի որ բացակայում են ընթերցանությունը խրախուսելու միջոցները և պայմանները: Այն ներառված չէ ազատագրված անձանց տրամադրվող խրախուսանքի միջոցների մեջ: Առկա չեն նաև ընթերցանությունը խթանելուն ուղղված ծրագրերը կամ միջոցառումները: Դա կարող է ներառել քրեակատարողական հիմնարկների գրադարանների վերաբերյալ տեղեկատվական թերթիկների հրատարակում և տարածում, գրադարանների հավաքածուների ցուցադրության կազմակերպում, համալրված նոր գրականության մասին իրազեկում, առավել հաճախ փոխառվող գրքերի ցանկի հրատարակում և տարածում:

Ամփոփելով՝ հավելենք, որ դեռևս 2018 թվականին Ազգային Ժողովի պատգամավոր Սերգեյ Բագրատյանը Քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն կատարելու և գրքերի ընթերցանության դեպքում դատապարտյալին, որպես խրախուսանքի միջոց, սոցիալական վերականգնման նպատակով կարճաժամկետ մեկնում տրամադրելու վերաբերյալ առաջարկություն է ներկայացրել: ՀՀ կառավարությունը, սակայն, բացասական դիրքորոշում է հայտնել նախագծով առաջարկվող իրավակարգավորումների կապակցությամբ՝ այն հիմնավորմամբ, որ, ըստ գործող օրենսդրության, ընթերցանությամբ պայմանավորված կարճաժամկետ մեկնում տրամադրելն առանձին վերցրած չի դիտարկվում որպես դատապարտյալների ուղղման միջոց, առաջարկվող կարգավորումը չի բխում կարճաժամկետ մեկնման ինստիտուտի գաղափարական էությունից, բացի այդ, հստակ չէ, թե ինչպես է գնահատվելու ընթերցանության անմիջական ազդեցությունը դատապարտյալի անձի կամ վարքագծի վրա, ինչ գրականության մասին է խոսքը, և որ գրքերն են, որ կարող են նպաստել դատապարտյալների սոցիալական վերականգնմանը [«ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացում

կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (Պ-122-30.04.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկություն, 2019]:

## SUMMARY

This article examines the libraries and reading rooms in Armenian prisons, focusing on the impact of reading on inmates' lives. It addresses issues such as library regulations, catalog compilation, book maintenance, librarian duties, and book replenishment, while exploring methods to promote reading among prisoners. The study concludes that assessing the practical benefits of reading for inmates is difficult due to a lack of incentives, supportive conditions, and programs that encourage a reading culture within the prison system.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի թիվ 543-Ն որոշում / Ընդունված է 2023 թվականի ապրիլի 13-ին, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189318>, 30.05.2024:
2. ՀՀ քրեական օրենսգիրք / Ընդունված է 2021 թվականի մայիսի 5-ին, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=191266>, 30.05.2024:
3. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք / Ընդունված է 2022 թվականի հունիսի 15-ին, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=189477>, 30.05.2024:
4. «ՀՀ քրեակատարողական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (Պ-122-30.04.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկություն / Ներկայացված է 2019 թվականի մայիսի 30-ին, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.gov.am/files/docs/3453.pdf>, 30.05.2024:
5. «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենք / Ընդունված է 2002 թվականի փետրվարի 6-ին, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175842>, 30.05.2024:
6. Միավորված Ազգերի Կազմակերպության քանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն չափորոշիչ կանոններ (Նելսոն Մանդելայի կանոններ) / Ընդունվել են 1955 թվականին, Հանցագործությունների կանխմանն ու իրավախախտների հետ վարվեցողությանը նվիրված ՄԱԿ-ի կոնգրեսի կողմից: Վերանայվել են 2015 թվականին, ՄԱԿ-ի Հանցավորության կանխարգելման և քրեական արդարադատության հանձնաժողովի կողմից, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: [https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Nelson\\_Mandela\\_Rules-E-book.pdf](https://www.unodc.org/documents/justice-and-prison-reform/Nelson_Mandela_Rules-E-book.pdf), 30.05.2024:
7. Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականը Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին «Եվրոպական քանտային կանոնների մասին» / Ընդունվել է Նախարարների կոմիտեի կողմից 2006 թվականի հունվարի 11-ին Նախարարների տեղակալների 952-րդ նիստի ընթացքում, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://rm.coe.int/european-prison-rules-978-92-871-5982-3/16806ab9ae>, 30.05.2024:

<https://doi.org/10.52027/18294685-bvi2024.1>

БРИЧКОВСКИЙ ВЯЧЕСЛАВ ИВАНОВИЧ  
Национальная библиотека Беларуси

## СОВЕРШЕНСТВОВАНИЕ ПРОЦЕССОВ ФОРМИРОВАНИЯ И ИСПОЛЬЗОВАНИЯ В БИБЛИОТЕКАХ УДАЛЕННЫХ ЭЛЕКТРОННЫХ ИНФОРМАЦИОННЫХ РЕСУРСОВ

**Ключевые слова:** электронные информационные ресурсы, удаленный доступ, информационные потребности пользователей, федеративная идентификация, статистика использования ресурсов, COUNTER.

**Keywords:** electronic information resources, remote access, information needs of users, federated identification, resource usage statistics, COUNTER.

В настоящее время электронные информационные ресурсы заняли прочное место в репертуаре комплектования библиотек. Достоинства этих ресурсов очевидны: богатый и разнообразный цифровой контент; удобный и многофункциональный пользовательский интерфейс для поиска информации; наличие широкого спектра современных научных и образовательных сервисов; удаленное подключение из любой удобной для пользователя точки доступа; более низкая цена по сравнению с печатными аналогами и т.д.

Работа по приобретению ЭИР – это сложный многоступенчатый процесс, требующий специальных профессиональных компетенций. Информационные ресурсы в электронной среде расширяют традиционную технологию комплектования фондов библиотек, появляется новый процесс – лицензирование или приобретение прав доступа на ресурсы [Шереметьева, Масловская, 2023, 154].

В настоящее время стремительно развиваются технологические инструменты для работы с ЭИР, что требует постоянного обновления методик их использования при решении практических задач библиотек. Эффективное использование электронных ресурсов предполагает выработку комплекса требований по изучению информационных потребностей пользователей, экспертной оценке и отбору ЭИР, приобретению/лицензированию ЭИР, организации доступа, мониторингу и учету статистики использования ЭИР, обучению библиотечных специалистов работе с ресурсами для формирования фонда лицензионных ЭИР. От качества проведения подготовительных работ по анализу информационных потребностей пользователей (ИП) во многом зависит успех дальнейшего использования ЭИР.

Информационные потребности пользователей являются важным фактором эффективности информационного обеспечения научно-образовательных процессов на современном этапе, и их необходимо принимать во внимание при формировании фондов удаленных ЭИР библиотек.

Условия формирования ИП подразделяются на внешние (объективные) и внутренние (субъективные). Объективные ИП возникают под влиянием внешних факторов, таких как развитие науки и технологий, экономическое и социальное развитие, формы и условия образовательной, исследовательской и научно-производственной деятельности, количественно-качественные изменения документальных потоков. Эти условия являются отражением конкретной научно-производственной и экономической ситуации, в которой работает пользователь. Субъективные ИП, характерные для каждого индивидуального пользователя, также формируются под влиянием объективных факторов, но с учетом личных мотивов, установок и оценок.

Целесообразно комплексное применение методов, пригодных для выявления объективных и субъективных ИП, что в конечном итоге позволит получить наиболее оптимальный результат с учетом, специфических особенностей конкретной организации.

Рекомендуется использовать косвенные и прямые методы при анализе ИП пользователей. Косвенные базируются на изучении мнения людей (пользователей библиотек, специалистов в той или иной предметной области) путем опросов, анализа их информационных запросов, цитирования и т.п.

Прямые методы основаны на непосредственном анализе библиотекарями задач, стоящих перед пользователями в их профессиональной, научной, учебной деятельности. Это позволяет выявить объективно необходимую для решения проблемы информацию (так называемую объективную информационную потребность) независимо от того, была ли она запрошена пользователем или нет.

Целесообразно использовать следующие методы при анализе ИП пользователей:

- количественные методы: опрос, анализ статистических данных, библиометрический анализ;
- качественные методы: наблюдение, глубинное интервью, методы фокус-групп, экспертных оценок, эксперимент;
- комплексные методы: контент-анализ (анализ документов), информационная диагностика, кейс-анализ.

Метод контент-анализа рекомендуется использовать на предварительном этапе изучении ИП пользователей. При этом анализируются нормативные-правовые акты, нормативно-технические документы, учебные планы, планы работ, прогнозы социально-экономического развития, программы развития научных исследований и т.п.

Использование опроса в качестве метода исследования позволяет охватить широкий круг пользователей, получить информацию об объективных и (или) субъективных (интересах, мнениях, намерениях и т.п.) фактах со слов респондентов, сформировать набор статистических данных относительно тематического профиля пользователей, предпочитаемых видах информационного обслуживания, каналах получения информации, востребованности различных типов и видов документов, выявить отдельные аспекты интересов пользователей и т.п.

Опрос рекомендуется проводить в устной (интервью) или письменной (анкетный, почтовый опрос) формах с помощью специально разработанного инструментария: анкеты (при анкетном, почтовом опросе) или бланка интервью. Очень важным при этом является учет мнения специалистов отделов обслуживания, имеющих непосредственный контакт с конечными пользователями и знающих их потребности.

Библиометрический анализ, проводимый в виде цитатного анализа, анализа ссылочной литературы, анализа научных публикаций в наукометрических базах данных рекомендуется применять для изучения объективных ИП на базе информационных потоков (исследования динамики, структуры потока и его развития). Это обеспечит возможность анализа области научных исследований, определения состояния и исторического развития научных дисциплин, оценки интенсивности и перспектив развития отдельных тематических направлений и т.п. Целесообразно при использовании методов изучения и анализа ИП, перечисленных выше, активно использовать возможности инструментальных программных средств сбора и обработки данных (Google формы, электронная почта, Skype Microsoft Office, SPSS и т.п.)

Организованный оптимальным образом процесс изучения ИП пользователей позволяет сформировать репертуар ЭИР, который не только максимально полно удовлетворяет запросам читателей, но и помогает рационально использовать финансовые бюджетные и внебюджетные средства библиотеки.

При отборе ЭИР рекомендуется применять комплексный оценочный подход к ресурсам, учитывающий все аспекты лицензирования, доступа, сетевого взаимодействия, ценообразования, использования современных технологий и стандартов.

Для оценки ЭИР рекомендуется привлечение специалистов-экспертов библиотеки (учреждения, в составе которого находится библиотека), отвечающие за: комплектование, технические обеспечение доступа к ЭИР, каталогизацию ЭИР, организацию закупки, юридическое сопровождение, обслуживание пользователей.

При отборе следует рассматривать и оценивать контент ЭИР в соответствии с:

- приоритетным направлениям социально-экономического развития;
- целями и задачами выполнения научных исследований в организации;
- целями и задачами информационного обеспечения образовательных процессов в учебных заведениях;
- требованиями и информационными потребностями целевой аудитории пользователей.

Следует стремиться исключать дублирование контента ЭИР с печатными изданиями. Допустимо дублирование электронного ресурса с печатными изданиями, если электронная публикация не архивируется и недоступна для постоянного пользования, а библиотека желает ее сохранить.

При отборе ЭИР необходимо учитывать стоимость лицензии для доступа к ЭИР с учетом цены для корпоративного доступа (в рамках консорциума) или лицензии на национальную подписку данного ресурса.

При отборе ЭИР необходимо учитывать технические возможности ресурса, совместимые с аппаратным и программным обеспечением библиотеки. Эти вопросы следует оценивать совместно со специалистами ИТ-служб, в их числе:

- метод доступа – на автономном компьютере, удаленный доступ через веб-интерфейс, загрузка в собственную локальную сеть или хостинг. Наиболее предпочтителен удалённый доступ через веб-интерфейс;
- авторизация – по IP-адресам, федеративная идентификация, по логину и паролю и т.п.);
- совместимость – ресурс должен быть совместим с аппаратным и программным обеспечением, используемым в библиотеке. Рекомендуется также оценить, требуется ли для ресурса использование специального аппаратного и программного обеспечения (ПО), аудио или мультимедиа. В случае необходимости, рекомендуется оценить стоимость приобретения, установки и поддержки дополнительного ПО. При доступе через веб-интерфейс необходимо оценить поддержку браузеров. Некоторые ресурсы можно использовать только с определёнными браузерами или версиями браузеров;
- возможность интеграции с автоматизированными информационными системами, используемыми в библиотеке.

ЭИР должен использовать гибкий и удобный для пользователей механизм поиска. Опции включать поиск с использованием булевых операторов, поиск по полному тексту, усечение слов, просмотр, ранжирование по релевантности алфавиту, хронологии, использование предметных рубрик и истории поисков и т.д.

В ЭИР должны поддерживаться опции экспорта (отправка по электронной почте, распечатка и выгрузка на компьютер или другое электронное устройство, выгрузка данных для программ обработки библиографических ссылок). Для пользователей библиотеки ЭИР должен иметь возможность быть доступным в любое время суток (24 часа в сутки, 7 дней в неделю).

При отборе ЭИР особое внимание рекомендуется обратить на предоставление поставщиком качественных статистических данных для оценки того, насколько хорошо используются ресурсы и насколько экономически эффективно их использование по сравнению с другими ресурсами. Это особенно актуально для принятия решения о закупке после тестирования ЭИР, возобновлении подписки или об отказе от неё. Поставщик должен предоставлять качественные статистические отчеты, предпочтительно, отвечающие требованиям действующих стандартов, таких как COUNTER (Counting Online Usage of Networked E-resources)'s Code of Practice.

COUNTER – Международная некоммерческая членская организация библиотек, издателей и поставщиков, которая разрабатывает стандарт для подсчета использования электронных ресурсов библиотеки (журналов, книг, справочников и др. мультимедийных баз



данных. Текущая версия COUNTER R5 объединяет аналитические инструменты и возможности сбора статистики, обеспечивающие библиотеки надежными инструментами агрегирования чувствительной информации по текущим трендам и поведению пользователей ЭИР.

Применение COUNTER позволяет учесть и преодолеть проблемы информационного разнообразия, влияющие на эффективность использования ЭИР в научно-образовательной сфере, такие как:

- атомизация электронного контента и растущее разнообразие форм представления контента;
- необходимость учета индивидуального использования электронных ресурсов различными категориями читателей;
- высокий процент дублирующего контента в ЭИР;
- необходимость учета разнообразия видов взаимодействия пользователями с ЭИР – поисковые запросы, переходы по ссылкам, ознакомление с метайнформацией по объектам контента, загрузка и просмотр контента и т.п.

Оценка эффективности использования полнотекстовых баз данных (БД) должна базироваться на количестве выгрузок полных текстов документов. Для реферативно-библиографических БД, где полные тексты отсутствуют, для этих целей обычно привлекаются два параметра: количество запросов, адресованных БД, и количество обращений к детальным записям [Литвинова, 2019, 162].

При приобретении ЭИР целесообразно рассматривать все возможные модели покупки/ценообразования ресурса для определения, какая из них в большей степени соответствует нуждам библиотеки, в их числе:

- отдельные цены на контент и доступ к нему. В случае выставления цены на контент желательно, чтобы были предусмотрены постоянные права на использование оплаченной информации, если в будущем подписка не будет продлена;
- плата за использование отдельных материалов («плата за просмотр» - pay per view);
- цена для консорциума;
- цена для национальной подписки;
- цена коллекции; возможность приобрести определенную группу изданий, обычно объединенную общей тематикой;
- библиотека имеет возможность отобрать необходимые ей издания.

Большинство научно-образовательных ЭИР предоставляют свой контент и сервисы в полном объеме только авторизованным пользователям. Возможны два варианта получения доступа к ЭИР – только из локальной сети организации с авторизацией в персональном разделе организации на сайте ресурса (по IP-адресам), либо прохождение из локальной сети организации с индивидуальной регистрацией и получением учетных данных от владельца ЭИР для доступа извне локальной сети организации. Для каждого ресурса учетные данные являются индивидуальными, и в условиях постоянного увеличения их количества, управление логинами и паролями становится весьма сложной задачей для администрации организации, технических специалистов и доставляет определенные неудобства самим пользователям.

Наиболее распространенным способом получения доступа к ЭИР является применение IP-адресов. Библиотека после заключения лицензионного соглашения с владельцем ЭИР высылает владельцу ЭИР список своих IP-адресов компьютеров, с которых разрешен доступ к ЭИР.

Практическое использование такого подхода, основанного на IP адресации, имеет ряд недостатков:

- необходимость регистрации своих IP адресов у каждого поставщика ЭИР;
- необходимость хранения учетных данных пользователя для каждого поставщика ЭИР в случае, если поставщик поддерживает персональную идентификацию и аутентификацию пользователя;
- отсутствие возможности учета персональной статистики использования ЭИР для различных групп пользователей;

- появление проблем с доступом в случае смены IP адреса организации;
- невозможность организации удаленного доступа к ЭИР пользователей с компьютеров, находящихся вне локальной сети организации, например, из дома.

Рекомендуется использовать систему федеративной идентификации, аутентификации и авторизации, что позволит:

- обеспечить персонифицированный доступ к ЭИР в любой точке мира с устройства, подключенного к Интернет;
- автоматизировать процедуры управления пользователями организации и персонифицированного учета работы пользователей с ЭИР различных поставщиков;
- организовать эффективное информационное взаимодействия библиотеки с правообладателями, поставщиками и потребителями ЭИР;
- эффективно анализировать статистику использования организацией ЭИР различных поставщиков.

С помощью системы федеративной идентификации, аутентификации и авторизации пользователи смогут безопасно и конфиденциально получать услуги, используя только аккаунт (учетную запись) в своей организации при помощи технологии сквозной аутентификации (SSO или Single Sign-On). Для доступа к ресурсам конечному пользователю не нужно сохранять какие-либо дополнительные или особенные логины и пароли. Если его организация подключена к системе, то из любой точки он может получить доступ к тому набору ресурсов, на которые подписана его организация [Бричковский, 2021, 131].

Учет статистики использования ЭИР рекомендуется осуществлять на регулярной основе. Это необходимо для понимания того, как использование ресурса соотносится с его ценой, и оправдано ли с экономической точки зрения возобновление подписки на него.

## SUMMARY

The article considers methodological recommendations aimed at increasing the efficiency of using electronic resources usage. The methodology covers a set of requirements for studying the information needs of users, assessment and selection of electronic information resources, licensing electronic information resources, organizing access, monitoring and recording statistics on the usage of electronic information resources. It is recommended to use a comprehensive assessment approach to resources, taking into account all aspects of licensing, access, network interaction, pricing, and the use of modern technologies and standards.

## СПИСОК ИСПОЛЬЗОВАННОЙ ЛИТЕРАТУРЫ

1. Бричковский, В. И. Использование системы федеративного управления идентификацией пользователей для организации удаленного доступа к электронным информационным ресурсам // Материалы Международного конгресса «Библиотека как феномен культуры»: Библиотеки в условиях пандемии: новые возможности, новые решения, Минск, 21-22 октября 2021 / Национальная библиотека Беларуси; сост.: Т. В. Кузьминич, А. А. Суша, Минск, Национальная библиотека Беларуси, 2021, С. 130–134.
2. Литвинова, Н.Н. Сбор и анализ статистики использования электронных ресурсов по COUNTER 5. // Наука и научная информация, Москва, Нэикон, 2019. – т. 2. – №. 3. – С. 157-166. <https://doi.org/10.24108/2658-3143-2019-2-3-157-166>.
3. Шереметьева, А.А., А.Ю. Масловская Электронные информационные ресурсы при формировании фондов библиотек Беларуси // Менеджмент вузовских библиотек. Создание информационно-образовательной среды университета: материалы XXIII Междунар. науч.-практ. конф., 2-3 ноября 2023 г., Могилев / Фундаментальная б-ка БГУ, Минск, БГУ, 2023. – С. 150–155.

<https://doi.org/10.52027/18294685-mhl2024.1>

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄՇԵՐ  
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՎԵՐԱԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ  
ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

**Բանալի բառեր՝** մշակույթ, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, կուլտուրոցիդ, Արցախի պաշտպանության բանակ, ազատագրական օպերացիաներ, Ադրբեջան, ագրեսիա, վանդալիզմ, պատմաճարտարապետական հուշարձաններ, վերաիմաստավորում, հայրենադարձություն:

**Keywords:** culture, Nagorno-Karabakh Autonomous Region, culturicide, Artsakh Defense Army, liberation operations, Azerbaijan, aggression, vandalism, historical and architectural monuments, reinterpretations, repatriation.

**Ներածություն**

Ինչպես հայտնի է, 1991-1992 թթ. դիմագրավելով Ադրբեջանի զինված ուժերի ագրեսիային և հետապնդելով մարտի դաշտից ճողոպրող հակառակորդին՝ Արցախի ինքնապաշտպանության ուժերը (1993 թ. նոյեմբերի 10-ից՝ պաշտպանության բանակ) մինչև 1994 թ. մայիսը ազատագրել էին պատմական Հայաստանի Սյունիքի, Արցախի և Ուտիքի նահանգների երբեմնի տարածքները, որոնք Լենին-Մուստաֆա Քեմալ դավադիր գործարքի հետևանքով ապօրինաբար բռնակցվել էին Խորհրդային Ադրբեջանին: Վերջինիս կառավարությունները, շարունակելով Թուրքիայի իրականացրած արմենոցիդի քաղաքականությունը Անդրկովկասում, կոտորածների, էթնիկ գտումների և բռնի կրոնափոխության հանցավոր եղանակներով հայրենագրելու էին տոհմիկ հայ բնակչությանը, իսկ բռնագավթված բնակավայրերում անխնա ոչնչացնում կամ յուրացնում հայ մշակույթի բազմադարյան ժառանգությունը: 2020-2023 թթ. ագրեսիայից և Արցախի Հանրապետության ինքնիշխան տարածքի բռնագավթումից հետո ավելի սանձարձակ դարձած Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականության նպատակն է անհետ ոչնչացնել հայ մշակույթի արժեքները, որոնք պատմական տարբեր ժամանակներում ծառայել են Արցախի տոհմիկ հայ բնակչության ազգային ինքնության պահպանմանը և զավթիչներից հայրենի եզերքի պաշտպանությանը:

Պատմաբան Ռուբեն Զարգարյանը, հղում կատարելով հուշարձանագետ Հրաչիկ Հարությունյանի տեղեկություններին, նշել է, որ Խորհրդային իշխանության և Արցախի դեմ 1988 թ. վերսկսված ագրեսիայի տարիներին պատմական Արցախի տարածքում «ավերվել, պայթեցվել և հիմնահատակ ոչնչացվել են 167 եկեղեցիներ, 8 վանական համալիրներ, 123 պատմական հայկական գերեզմանոցներ և 47 բնակավայրեր: Չարդուփշուր են արվել 2500 և ավելի քան 10.000 տապանաքարեր. բուլդոզերներով երկրի երեսից ջնջվել են 13 պատմահնագիտական հուշարձաններ [Заргарян, 2021]:

Հայ ժողովրդի մշակութային ժառանգության ոչնչացման կամ յուրացման Ադրբեջանի քաղաքականությունը բազմաթիվ անդրադարձներ են եղել [Պետրոսյան, 1990, Հայ մշակույթը,

1997, Դիլանյան, 2010, 150-159, Պարսամյան, 2010, 160-171, Պետրոսյան, 2010, 137-149], սակայն ինչպես հնչեցված ահազանգերը, այնպես էլ իրավասու մարմիններին հասցեագրված բողոք-նամակներն արձագանք չէին գտնում: Ադրբեջանի վանդալիզմն ու իրականացրած կուլտուրոցիդը կասեցվեցին Արցախի ՊԲ ազատագրական օպերացիաների շնորհիվ, երբ Հայոց Արևելից կողմանց երբեմնի պատմական տարածքներից վերջապես հեռացվեցին ադրբեջանցի զավթիչները:

1992-1994 թթ. Արցախի ՊԲ ազատագրական օպերացիաների ընթացքում ազատագրվել և ոչնչացման ուղղակի վտանգից փրկվել են հայ մշակույթի շուրջ 1700 միավոր կոթողներ [Կարապետյան, 1999, 7]: Նախաձեռնելով սույն հոդվածը՝ նպատակադրվել ենք ներկայացնել ԼՂԻՄ 1920-1940-ական թվականների մշակույթի առավել կարևոր ձեռքբերումները, ինչը հնարավորություն կտա պատկերացում կազմել հայ մշակույթի այն հարուստ ժառանգության մասին, որի փրկության հրամայականը լրացուցիչ շարժառիթավորում էր ՊԲ ազատագրական օպերացիաներն իրականացնող ազատամարտիկներին: Ակներևաբար, առաջիկայում հարկ է լինելու անդրադառնալ նաև ԼՂԻՄ 1945-1988 թվականների մշակույթին, որպեսզի ամբողջանան մեր պատկերացումները հայ մշակույթի արցախյան ճյուղի, Խորհրդային Ադրբեջանում հայկական մշակութային արժեքների նպատակային կուլտուրոցիդի և դա կանխելու մտահոգությամբ ՊԲ 1992-1994 թթ. ազատագրական առաքելության մասին: ԼՂԻՄ խորհրդային շրջանի հայ մշակույթը երկու շրջափուլով դիտարկելը թելադրված է դրանց առանձնահատկություններով:

### Նյութական մշակույթը

Ոչ լրիվ տվյալներով՝ Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում 1990-ականների սկզբին հաշվվում էին շուրջ 1800 պատմաճարտարապետական հուշարձաններ, որոնցից 520-ը՝ Մարտակերտի (նախկին Ջրաբերդի) շրջանում [Ավագյան, 1991, 95]: Դեռևս ձեռքի տակ չունենք մինչ այդ Խորհրդային Ադրբեջանում ոչնչացված կամ յուրացված հայկական մշակութային արժեքների գույքագրման արդյունքները<sup>5</sup>, սակայն, առանձին հուշարձանների կամ ձեռագրերի նկատմամբ ադրբեջանցիների վանդալիզմի օրինակներով կարող ենք եզրակացնել, որ մինչև 1918 թվականը, երբ պատմության թատերաբեմ է իջել ինքնահռչակ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետությունը, շատ ավելի մեծ է եղել հայկական մշակութային արժեքների թիվը:

Հուշարձանագետ Շահեն Մկրտչյանը մարզային պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն աշխատելու ժամանակ հարուստ նյութեր է հավաքել և տպագրել արժեքավոր աշխատություն Լեոնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանների մասին, որն ունեցել է հայերեն և ռուսերեն մի քանի հրատարակություններ [Մկրտչյան 1980, 1985, Мкրтчян 1989, 1989]: Ներկայացնելով մարզի տարածքում գտնվող հուշարձանները՝ հեղինակը ջանացել է ցույց տալ դրանց համահայկական ու քաղաքակրթական արժեքը, ճարտարապետական հորինվածքների առանձնահատկությունները՝ միահյուսելով հայոց պատմության արցախյան հատվածի կարևոր դրվագները: Մասնավորապես, հանրագիտարանային տեղեկություններ են հաղորդվում Արցախի ոչ միայն նախնադարյան ժամանակաշրջանի, այլև վաղ միջնադարի, 9-13-րդ և հետագա դարերի հնագիտական, պատմական և

<sup>5</sup> Պահանջված են ՀՀ և սփյուռքի գիտական ու հետազոտական ներուժի անմնացորդ օգտագործմամբ Խորհրդային Ադրբեջանի տարածքում հայկական մշակութային արժեքների ոչնչացման կամ օտարման վերաբերյալ վիճակագրական հավաստի տեղեկությունների ամբողջացումը և մեկ միասնական փաստաթղթի տեսքով շրջանառումը, ինչը զսպող գործոն կամ գանգատի փաստական հիմք կարող է դառնալ ներկայումս Արցախի Հանրապետության բռնազավթված տարածքներում և Ադրբեջանում անպատիժ մոլեզնող հայկական կուլտուրոցիդի դեմ:

ճարտարապետական նշանավոր համակառույցների, վանքերի, եկեղեցիների, բնակավայրերի, ամրոցների, ինժեներական և կենցաղային բնույթի հուշարձանների մասին: Շ. Մկրտչյանի աշխատության ատաղձն են կազմում հայ ճարտարապետության հանրագիտարան համարվող Գանձասարին, Դադի կամ Խութավանքին, Գուշավանքին, Ամարասին, Շուշիի Ս. Ամենափրկիչ եկեղեցուն և այլ հոյակապ պատմական կոթողներին նվիրված էջերը, որոնք ժամանակին կարևոր դեր են խաղացել հայ ժողովրդի հասարակական-քաղաքական ու հոգևոր-մշակութային կյանքում [Ավագյան, 1991, 96-98]:

Արցախի պատմաճարտարապետական հուշարձանների երկարամյա ուսումնասիրությունների արդյունքները անվանի հուշարձանագետը ամփոփել է ավելի ուշ հրատարակված վեհաշուք աշխատությունում [Мкртчян 2000]:

Արցախի նյութական մշակույթի տարբեր ճյուղերը գիտականորեն ուսումնասիրված են [Բարխուտարեանց, 1895, Ոսկեան, 1953, Բարխուդարյան, 1982, Հակոբյան, 1991, Հասրաթյան, 1992, Ղուլյան, 2001, Մինասյան, 2015]: Այդ ուսումնասիրությունները որակական նոր մակարդակի հասցվեցին Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության ջանքերով [Կարապետյան, 1999, Ղուլյան, 2001, Կարապետյան, 2004, Այվագյան; Կարապետյան, 2011, Կարապետյան, 2017], ուստի այստեղ վերստին դրանց անդրադառնալը նպատակահարմար չէ:

### **Լուսավորության գործը**

1922-23 թթ. ուսումնական տարում Լեռնային Ղարաբաղում լուսավորության գործի վիճակին անդրադարձել է Ինքնավար Մարզի ժողովրդական կրթության բաժնի վարիչը, որի զեկուցագիրը թարգմանաբար հրապարակվել է ժամանակի պաշտոնական մամուլում: Ըստ այդմ՝ Մարզում գործել է «79 առաջին աստիճանի դպրոց 4750 աշակերտությամբ և 153 ուսուցչով: Երկրորդ աստիճանի ոչ մի դպրոց» [Լուսավորության գործը Ինքնավար Լեռնային Ղարաբաղում, 1924, 2]: Ոլորտի պատասխանատուն ներկայացրել է դպրոցների նյութատեխնիկական բազայի անմխիթար վիճակը. «Դպրոցները գուրկ են եղել ամենանհրաժեշտ պարագաներից, բոլորովին չեն ունեցել դասագրքեր և գրենական պիտույքներ» [Նույն տեղում]: Լավատեսություն չէր ներշնչում մանկավարժական կադրերի բարոյահոգեբանական վիճակը: Ըստ նույն հրապարակման՝ անմխիթար պայմաններում «աշխատող, այն էլ մի քանի տարիների ընթացքում չափազանց ծանր տնտեսական վիճակ ապրած ուսուցչությունը բոլորովին անտարբեր վերաբերմունք է յուրացրել դեպի դպրոցը և չափազանց թերացել իր աշխատանքների մեջ» [Նույն տեղում]: Այդ իրադրության պատճառով «ուսուցչության մի մասը (ամենալավ) հեռացել է, իսկ ամենացավալին այն է, որ ստեղծվել է չափազանց բացասական վերաբերմունք դեպի դպրոցը գյուղացիության և տեղական-գյուղական իշխանության կողմից» [Նույն տեղում]:

Հետագա տարիներին, թեև որոշակի առաջընթաց նկատվել է, սակայն լիարժեք զարգացման մասին հավաստի փաստեր չկան, ընդհակառակը, Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների խտրական, հակահայկական քաղաքականությունը խոչընդոտում էր արցախցիների նախաձեռնությունների իրագործմանը: Այդ մասին են փաստում «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվում պահվող ԼՂԻՄ ժողովրդական կրթության վերաբերյալ պաշտոնական գրությունները և հաշվետվությունները [ԿԳԿԱ, ֆ. 79, գ. 11], որոնց մի մասը հրապարակել ենք «Կաճառ» տարեգրքում [Арутюнян, Мгдесян, 2017, 109–164]:

1924 թվականին Լեռնային Ղարաբաղում 15 քահանաներ դարձան ուսուցիչներ, սակայն նրանց նկատմամբ ցուցադրական անվստահություն էր արտահայտվում: Եկեղեցու նկատմամբ բռնությունները բացահայտ դարձան 1929 թվականից: Տեղական իշխանություններն, առանց հաշվի առնելու գյուղացիների ցանկությունները, 1930-ական թվականներին նրանց առջև փակեցին վանքերի ու եկեղեցիների դռները՝ հավատացյալներին քշելով Սիբիր:

Կողոպտվեց եկեղեցու ամբողջ հարստությունը, արժեքավոր գրքերը, սրբապատկերները այրվեցին, իսկ շինանյութերը օգտագործվում էին այլ, հիմնականում տնտեսական նշանակությամբ [Ասրյան, 2016, 104]:

1920-ական թվականներին Լեռնային Ղարաբաղում ընդլայնվեց տարբեր աստիճանների դպրոցների ցանցը: Գործում էր աշխատանքային միասնական դպրոցի երկու տիպ: Առաջին աստիճանի աշխատանքային դպրոց՝ 5-ամյա դասընթացով, երկրորդ աստիճանի աշխատանքային դպրոց՝ 4-ամյա դասընթացով: Նույն թվականին ստեղծվեցին նոր տիպի դպրոցներ՝ բանֆակներ, որոնք զգալի դեր կատարեցին արտադրության մեջ աշխատող բանվորներին միջնակարգ կրթություն տալու, ինչպես և բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու գործում: Նշված ժամանակաշրջանում մարզի մի շարք գյուղերում բացվում էին գյուղերիտ դպրոցներ, որոնք ընդհանուր գիտելիքներ տալուց բացի՝ սովորողներին ծանոթացնում էին գյուղատնտեսության հիմունքներին: Այստեղ սովորում էին չքավոր և միջակ գյուղացիների 13-18 տարեկան երեխաները: Եթե 1922-24 թվականներին Լեռնային Ղարաբաղում գործում էր 25 գյուղերիտ դպրոց, ապա 1928-29 թվականներին դրանց թիվը հասավ 87-ի [Հարությունյան Գ., 1985, 92]:

1920-ական թվականներին ԼՂԻՄ-ում ստեղծվեցին առաջին միջնակարգ-տեխնիկական հաստատությունները, որոնց թիվն արդեն 1930-ական թվականներին հասավ վեցի: Դրանցից արդյունավետ աշխատանք էին կատարում Ստեփանակերտի գյուղատնտեսական ու բժշկական, Շուշիի մանկավարժական, Հաղարծի ագրոնոմիական ու մանկավարժական տեխնիկումները և ուսումնարանները [Ավագյան, 1982, 59]:

### Գրականություն և մամուլ

Բարձրարվեստ գրականության հարուստ ավանդույթներ ունեցող պատմական Արցախի մի մասի վրա կազմավորված ԼՂԻՄ-ում 1920-1940-ական թվականներին գեղարվեստական խոսքը զարգանում էր պրոլետկուլտի գաղափարական կաղապարներով: Արդեն 1920-ականներին ԼՂԻՄ-ում գրասերների ջանքերով ու նախաձեռնությամբ վերակենդանացավ գրական կյանքը: 1923 թ. մարտին Ստեփանակերտում կազմակերպվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պրոլետգրողների ասոցիացիան [Ավագյան, 1982, 50]:

ԼՂԻՄ-ը ժառանգեց տպագրական աղքատ բազա: Ս. Օրջոնոկիձեի ցուցումով խորհրդային տարիներին Շուշիում գործում էր փոքրիկ տպարան: Տպարանը 1923 թ. հուլիսին տեղափոխվեց Ստեփանակերտ, որի հիման վրա հրատարակվում էր «Խորհրդային Ղարաբաղ» թերթը» [Ավագյան 1969, 214]: 1923 թ. ապրիլի 4-ից Շուշիում Սերո Մանուցյանի խմբագրությամբ լույս էր տեսել Ղարաբաղի կոմիտեի գավկուսկոմի օրգան «Ղարաբաղի գեղջուկ» թերթը, որի էջերում հիմնականում տեղ էին գտնում հողային հարցի վերաբերյալ նյութեր, պարբերաբար լուսաբանվում էր, թե ինչ միջոցառումներ են իրականացվում հողային իրավունքը կարգավորելու ուղղությամբ: «Ղարաբաղի գեղջուկը» մի քանի համարից հետո, երբ Լեռնային Ղարաբաղը ստանում է ինքնավար մարզի կարգավիճակ, վերանվանվում է «Խորհրդային Ղարաբաղ», իսկ 1940 թ. սեպտեմբերի 12-ին՝ «Սովետական Ղարաբաղ» [Ավագյան 1963, 5], 1992-ին՝ «Արցախ», 1994-ին՝ «ԼՂ Հանրապետություն», իսկ 1998-ին՝ «Ազատ Արցախ» [Հարությունյան Մ., 2010, 77, 81, 90-91]:

«Խորհրդային Ղարաբաղ» թերթը մանրակրկիտ ընտրում էր տպագրվող նյութերը: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում գրավոր խոսքի մշակույթին, տպագրվող հոդվածների բովանդակային ու ժանրային կառուցվածքին, ինչի շնորհիվ տարեցտարի բարձրանում էր թերթի մակարդակը: Խմբագրությունը փորձում էր օգնել իր թղթակիցներին, գրույցներ ու խորհրդատվություններ անցկացնել, որպեսզի թղթակիցները նյութերը պատրաստեն ճշմարտացի, ասելիքը ձևակերպեն դիպուկ, օգտագործեն թևավոր խոսքեր, ասացվածքներ, ժողովրդական իմաստություններ:

Հարկ է նշել, որ «Խորհրդային Ղարաբաղի» լույս ընծայման առաջին տարում թերթն ուներ ընդամենը 10-12 թղթակից, որոնց թիվը հետագայում ավելանալով հասնում է 300-ի: Եթե թերթը 1923-ին լույս էր տեսնում 400 օրինակով, ապա 1928-ին՝ արդեն 4600 օրինակով [Ավագյան 1963, 11]:

«Խորհրդային Ղարաբաղ»-ի բազմաթիվ թեմատիկ թերթիկներից համեմատաբար երկար կյանք է ունեցել «Կուլտարշավ» թերթը, որը լույս էր տեսնում 1931 թ. հուլիսից, ամիսը 2 անգամ պարբերականությամբ: Այդ թերթիկի լույս ընծայումը վկայում է, որ «Խորհրդային Ղարաբաղը» շարունակում էր պատշաճ ուշադրություն դարձնել մշակութալուսավորական օջախների գործունեությանը, մանավանդ՝ դպրոցական գործի կարգավորմանը, խրճիթ-ընթերցարանների, ակումբների, ինքնագործ խմբակների գործունեությանը, բնակչությանը գրագետ դարձնելուն: Թերթիկը մինչև 1937 թ. փետրվարի 18-ն ունեցել է 156 համար, որից հետո դադարել է լույս տեսնել [Ավագյան, 1963, 33]:

«Խորհրդային Ղարաբաղ»-ի թերթիկները համապատասխում էին ժամանակի ոգուն, հողվածները գրվում էին օրվա պահանջով, նրանց միջոցով լուսաբանվում էին Մարզի առօրյան, կառավարության որոշումները, ընդունված միջոցառումների կենսագործումը, մի խոսքով բարձրացնում էր աշխատավորների քաղաքական և աշխատանքային ակտիվությունը:

Գրական-գեղարվեստական նյութերը մարդու ներաշխարհի վրա ներգործելու ուժ են ունեցել: Ուստի, պատահական չէ, որ մարզկենտրոն Ստեփանակերտում, 1929 թ. հունվարից լույս էր տեսնում «Կայծ» գրական, գեղարվեստական, քննադատական և գյուղատնտեսական ամսագիրը, որի հինգ համարները լույս են տեսել 32-56 էջ ծավալով և 1000 օրինակ տպաքանակով: Ամսագրի խմբագրական կոլեգիայի մեջ մտնում էին Անդրանիկ Ավագյանը, Արմո Խաչումյանը և Գրիգոր Ներսիսյանը (պատասխանատու խմբագիր): «Կայծ» ամսագիրը գրական-գեղարվեստական գործերից բացի տպագրում էր միայն գյուղատնտեսությանը վերաբերող մի շարք հողվածներ:

1932 թվականից Ինքնավար Մարզի բոլոր շրջաններում ստեղծվում են մայրենի լեզվով շրջանային թերթեր: 1932 թ. հուլիսից սկսում է լույս տեսնել Կոմկուսի Ջրաբերդի (Մարտակերտ) շրջանային կոմիտեի և խորհրդի գործկոմի օրգանը՝ «Սոցիալիզմի ուղիով» թերթը: 1933 թվականից լույս է տեսնում Մարտակերտի մեքենատրակտորային կայանի քաղբաժնի օրգան «Կոլխոզային կայծ» թերթը [Ավագյան, 1963, 33]:

1935 թ. հունիսի 1-ին լույս է տեսնում Կոմկուսի Հաղորդի շրջկոմի և շրջգործկոմի թերթի՝ «Կոլխոզնիկ»-ի անդրանիկ համարը: Թերթը սկզբում հրատարակվում էր 2 էջով, իսկ 1936 թվականի ապրիլի 9-ից՝ 4 էջով [Հարությունյան Մ., 2010, 59]:

Կոմկուսի Մարտունու շրջկոմի և շրջխորհրդի գործկոմի օրգան «Բոլշևիկայն հաղթանակ» թերթի առաջին համարը լույս է տեսնում 1935 թ. հոկտեմբերի 13-ին և գոյատևում մինչև 1941 թվականը [Ավագյան, 1963, 33]:

1934 թ. փետրվարի 10-ին հիմնադրվում է ԼՂ-ի մարզկոմի օրգան «Երիտասարդ բոլշևիկ» հնգօրյա, ապա յոթնօրյա թերթը, որը լույս էր տեսնում սկզբում 2, ապա՝ 4 էջերով:

Թերթը լուսաբանում էր երիտասարդությանը հուզող հիմնախնդիրները, նրան օգնում էր ճիշտ կողմնորոշվել ուսման, դաստիարակության հարցերում: Թերթի կարևոր խնդիրներից էր երիտասարդության կրթական, գիտական մակարդակի բարձրացումը, նրա մտահորիզոնի ընդլայնումը: Թերթը քարոզում էր ընտանիքի և դպրոցի միջև սերտ կապ հաստատելու, մանկավարժների մասնագիտական վարպետությունը բարձրացնելու անհրաժեշտությունը, դպրոցներում կարգուկանոն ամրապնդելու, աշակերտների անհատական կարգապահությունը բարձրացնելու անհրաժեշտությունը: Թերթի էջերում առանձին հողվածներ էին տպագրվում ուսուցիչների մասին, խրախուսվում էր նրանց աշխատանքը, փոխանցվում առաջավոր փորձը: Թերթը իր գրական էջերում հաճախ էր անդրադառնում երիտասարդ ստեղծագործողներին, պատեհաժամորեն նշում գրողների հոբելյանները,

տպագրում նրանց գործերը՝ նպաստելով երիտասարդների գրական ստեղծագործական աշխարհի զարգացմանը [Ավագյան, 1963, 51-56]:

### **Թատրոն և երաժշտություն**

ԼՂԻՄ-ում թատերական կյանքի վերածնունդը կապվում է Բաքվի հայկական թատրոնի դերասան Կարո Ալվարյանի անվան հետ, որը 1923-ին գործուղվել էր Ստեփանակերտ՝ թատրոն կազմակերպելու նպատակով [Ալվերդյան, 1982, 3]: Անդրանիկ ներկայացման համար Կ. Ալվարյանն ընտրել էր Վ. Վաղարշյանի «Օղակում» դրաման: 1932 թ. օգոստոսի 11-ին Ստեփանակերտի նորաստեղծ պետական թատրոնը տվեց իր առաջին բեմադրությունը, ինչն ազդարարեց, որ հայ բեմադրչեստի ևս մի նոր օջախ է ծնունդ առնում Լեռնային Ղարաբաղում: Իր բեղմնավոր ստեղծագործական տարիների ընթացքում նա բեմականացրել է հայ և օտար հեղինակների 150 ստեղծագործություններ, հեղինակել տասնյակ բեմադրություններ, թարգմանել պիեսներ, դաստիարակել դերասանական սերունդներ և գլխավորել Ստեփանակերտի Մ. Գորկու անվան հայկական պետական դրամատիկ թատրոնը:

Կ. Ալվարյանը կրկնում էր հայ բեմի վետերան Հ. Արելյանի խոսքերը. «Դերասանը բեմից գնալով միայն ծափահարություններ է տանում, ոչինչ չթողնելով իր հետնորդներին, որովհետև նա ոչ գրող է, ոչ էլ գյուտարար, բայց ես բախտավոր եմ ինձ համարում, որ թատրոնից գնալով թողնում եմ իմ տասնյակ սաներին, որոնք այժմ կատարելագործված արվեստագետներ են» [Սովետական Ղարաբաղ, 1971, 4]:

Բացի «Օղակում» և «Պաղտասար աղբար» ներկայացումներից՝ թատերասեր հասարակայնության ջերմ ընդունելությանն արժանացավ նաև Նար-Դոսի «Սպանված աղավին» [Խորհրդային Ղարաբաղ, 1933, 3]:

1932-33 թվականներին Ստեփանակերտի թատրոնը տալիս է 10 բեմադրություն, ավելի քան 70 ներկայացում, ունենալով 20.000 հանդիսական: Մա մեծ թիվ էր, որովհետև քաղաքը նոր էր բռնել կուլտուրական զարգացման ճանապարհը [Հարությունյան Ս., 1972, 92]:

1936 թ. հունվարին ստեղծվեց մանկական թատրոն՝ Ստեփանակերտի պետական հայկական թատրոնի ֆիլիալի իրավունքով: Նորաստեղծ թատրոնի ռեժիսոր նշանակվեց թատերարվեստի հմուտ գիտակ, դերասան Մինաս Մինասյանը: Մանկական թատրոնի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1936 թ. մայիսի 5-ին պետթատրոնի շենքում [Ալվերդյան, 1982, 13]:

Լեռնային Ղարաբաղը հնուց ի վեր հանդիսացել է արվեստի օրրան, որտեղ արարել են հայտնի արվեստագետներ: Մասնավորապես, Շուշին հայտնի էր որպես երգիչների, տաղանդավոր երաժիշտների, խոշոր արվեստագետների ծննդավայր: Դարեր շարունակ ժողովրդական երգն ու երաժշտությունը, պարերն ու մեղեդիները, երգիչների և գուսանների արվեստը բնակչության լայն խավերի միջոցով պահպանվել և փոխանցվել են սերնդեսերունդ: Որպես արվեստագետների ամենասիրված վայր, ամառվա ամիսներին Շուշի հյուրախաղերի էին գալիս տաղանդավոր երաժիշտներ և համերգային խմբեր: Մշակույթի համար համապատասխան շենք չունենալու պատճառով քաղաք ժամանող համերգային խմբերն իրենց ելույթները ներկայացնում էին բաց երկնքի տակ:

Խորհրդային իշխանության երեք տասնամյակների ընթացքում Ստեփանակերտ և Շուշի քաղաքներում գործում էին երկու երաժշտական դպրոցներ, որոնք իրենց գործունեության ընթացքում տվել են մոտ 300 երաժիշտներ [Կարապետյան Սուր., 1962, 33]:

1925-ին Ստեփանակերտում Ռ. Մելիքյանը և Ա. Քոչարյանը հիմնել են «Հայ երաժշտանոց»՝ երաժշտական տեխնիկումը, որը սակայն երկու տարի հետո փակվեց:

Ստեփանակերտի մանկական երաժշտական դպրոցը հիմնադրվել է 1938 թվականին, Պերճ Հայրապետյանի ջանքերով: Սկզբում դպրոցի սաները ընդգրկված էին երկու խմբերում, բայց առաջընթացը հասցրեց նրան, որ հետագայում ներառվել են դաշնամուրի, քանոնի,



ջութակի, վոկալի և այլ խմբեր: Դպրոց ընդունվող 7-12 տարեկան երեխաների հետ աշխատում էին փորձառու դասատուներ: Հաճախ էին անցկացվում բաց դասեր և սեմինարներ: Դպրոցի սաները տարբեր ժամանակներում իրենց ուժերը փորձել են միջազգային մրցույթներում և հասել հաջողությունների [Ստեփանակերտ, 2000, 3]:

Երաժշտությունը Լեռնային Ղարաբաղում հնուց անտի մեծ ժողովրդականություն էր վայելում: Գրեթե յուրաքանչյուր ընտանիքում հանդիպում են կամ նվագողի, կամ երգողի կամ էլ արտասանողի: Այդպիսի բազում ընտանիքներից էր Հաղթության շրջանի Մեծ Թաղեր գյուղի Բ. Չիտչյանի ընտանիքը: 80-ամյա Չիտչյանի համբավը տարածված էր նաև Ղարաբաղից դուրս: Նա նվագում էր արցախցու սիրած երաժշտական գործիքներ՝ զուռնա, սրինգ և դուդուկ: Երաժշտասեր էին նաև շոշեցի Երամիշյանների, խերխանցի Միրզոյանների, նորշենցի Դանիելյանների, ստեփանակերտցի Առաքելյանների ընտանիքները, որոնք կարճես շարունակում էին Կոստանդին Մելիք-Շահնազարյանի (Տմբլաշի-Խաչանի) ձևավորած ավանդույթները:

Համաշխարհային համբավ էր ձեռք բերել մարտակերտցի Թամարա Պետրոսյանը (Թամարա Խանում): Նա համերգային ծրագրով ելույթ է ունեցել Ավստրիայում, Անգլիայում, Հունաստանում, Չինաստանում, Ֆրանսիայում: Նա իր 50-ամյակի առթիվ ելույթ ունեցավ Լեռնային Ղարաբաղի մի շարք գյուղերում [Կարապետյան Սուր., 1962, 36]:

### **Կերպարվեստ, քանդակագործություն, ճարտարապետություն, քաղաքաշինություն**

Շուշեցի նկարիչներ Ստեփան Աղաջանյանի և Միքայել Արուտչյանի, քանդակագործներ Հակոբ Գյուրջյանի և Սարգիս Բաղդասարյանի արվեստը հանրաճանաչ է ոչ միայն Հայաստանում:

Խորհրդային շրջանում շինարարական աշխատանքները հիմնականում կատարվել են Ստեփանակերտում, որը մարզի կենտրոնն էր: 1929-30 թվականներին հարց դրվեց քաղաքի կառուցման համար:

Ստեփանակերտ քաղաքի գլխավոր նախագծի աշխատանքները սկսվեցին 1938 թվականից: Նույն թվականի սեպտեմբերի 10-ին կնքվեց համաձայնագիր քաղաքում շինարարական աշխատանքներ սկսելու համար (ճարտարապետ Ա. Ժ. Սրբոյանիկ, ինժեներ-տնտեսագետ Ս. Ն. Ռամմ, նախագծի հեղինակներ Ն. Գ. Կաց, Ն.Ա. Նիկիտինա, Տ. Յ. Սրջևա և Ս. Ա. Ֆիզարովա) [Պապուխյան Ն., 1972, 25]:

Առաջին հերթին կառուցվեցին մշակութային հիմնարկություններ, արդյունաբերական ձեռնարկություններ: Ըստ նախագծի պետք է մշակութային հիմնարկությունները կառուցվեին այնպես, որ լրացնեին միմյանց, իսկ արդյունաբերական ձեռնարկությունները տեղ գտնեին ծայրամասային շրջաններում:

Իր ճարտարապետական ձևավորմամբ աչքի էին ընկնում թատրոնի, մարզային գրադարանի, երաժշտական ուսումնարանի, կուլտուրայի տան ձևերային երկու ու ամառային մեկ կինոթատրոնների, երկրագիտական թանգարանի, ինչպես նաև Արթիկի տուֆից կառուցված բազմաբնակարանային շենքերը:

### **Թանգարան ու գրադարան**

Առանձնակի ուշադրության են արժանի մարզում գործող ճարտարապետական և լուսավորչական նշանակություն ունեցող երկու օբյեկտները՝ թանգարանը և մարզային գրադարանը:

Թանգարանը երկրամասի գիտական, մշակութային, ազգագրական կարևոր օջախներից էր: Այն հիմնադրվել է 1938 թվականին:

Մարգային գրադարանի պատմությունը կապված է Ինքնավար Մարզի ստեղծման ժամանակաշրջանի հետ: 1924 թ. դեկտեմբերին մարզկենտրոնի աշխատավորության պահանջով ԼՂԻՄ-ի ժողկոմսովետի և լուսավորության մարգային բաժնի որոշմամբ բացվում է Մ. Գորկու անվան մարգային գրադարանը (հետագայում՝ Մ. Մաշտոցի անվան հանրային գրադարան) [Կարապետյան Սուր., 1962, 5]: Նույն թվականին խրճիթ-ընթերցարաններ, ակումբներ են բացվել նաև Ճարտար, Տումի, Այգեստան (Բալուջա) և մյուս գյուղերում: 1940-ին մարզի գյուղական բնակավայրերում գործում էին 15 գրադարան, 45 խրճիթ-ընթերցարան: Գրադարանի հիմնադրման առաջին տարում նրա ֆոնդում կար ընդամենը 2097, իսկ արդեն 1945-ին՝ 12413 կտոր գիրք: 1925 թվականից գրքային ֆոնդը սկսում էր հարստանալ պետության կողմից հատկացված միջոցներով, ինչպես նաև նվիրատվությունների միջոցով: Օրինակ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Ահարոն Մովսիսյանը Մոսկվայից ուղարկել է 300 կտոր մասնագիտական գրականություն: Այդպիսով, գրքային ֆոնդը հարստանում էր ծննդով արցախցի գիտնականների աշխատությունների հաշվին: Գրադարանի ստեղծման առաջին նախաձեռնողները եղել են Արմենակ Կարակոզովը, Շահեն Պողոսբեկյանը, Սերգեյ Հարությունյանը և ուրիշներ: Գրականության հարստացման հետ մեկտեղ ավելանում էր նաև աշխատողների ու ընթերցողների թիվը:

### Եզրակացություն

Այսպիսով, ԼՂԻՄ-ի գոյության տարիներին՝ ընդհանրապես, և 1920-1940-ական թվականներին՝ մասնավորապես, հայ մտավորականությունը մեծ ջանքերի ու արհեստական խոչընդոտների հաղթահարմամբ է կարողացել քաղաքակիրթ աշխարհին ներկայացնել պատմական Արցախում արարված հայկական մշակութային արժեքները:

Ինքնավարության կարգավիճակը անտեսելով՝ ադրբեջանական իշխանությունները խտրական քաղաքականություն են իրականացրել, կիրառել հնարավոր ամեն տեսակի ճնշումներ: Սպիտակ գենոցիդի սլաքը ուղղված էր նաև հայկական մշակույթի դեմ: Ադրբեջանական վայ-գիտնականները փորձում էին դարերի ընթացքում արցախցիների ստեղծած հայկական մշակութային արժեքները դարձնել աղվանական, ապա՝ ադրբեջանական: Եվ այդ քաղաքականությունը նպատակաուղղված էր Ադրբեջանի մատաղ սերնդին համոզելուն, որ «Ղարաբաղը իբր Հայաստանի անբաժանելի մասը չէ, որ խաչքարը խաչդաշ է, հայերը եկվորներ են»: Ոտնահարվում էին արցախցիների տարրական իրավունքները: Իսկ դրանց պաշտպանության ցանկացած փորձ որակվում էր որպես ազգայնամոլության արտահայտություն: Հայատյացության տասնամյակների քաղաքականությամբ դաստիարակվեց հայատյաց ու մոլեռանդ մի սերունդ Արցախի դեմ ագրեսիա իրականացնելու և բռնազավթելու նպատակով: Ահավասիկ, այդ չարանենգ նպատակի կանխարգելման առաքելությունն էին իրականացնում Արցախի ՊԲ զորամասերը ադրբեջանցի զավթիչներից պատմական Հայաստանի երբեմնի տարածքներն ազատագրելիս ու թշնամու վտանգավոր կրակակետերը հաջորդաբար ճնշելիս: Դժբախտաբար, դեպքերը հետագայում զարգացան հայկական պետականության համար բացասական հունով և չհաջողվեց պահել ու պահպանել 1991-1994 թթ. ռազմական հաջողությունների արդյունքները: Արցախի հարուստ մշակույթի խորհրդային շրջանի մշակութային ժառանգության մասին վերոշարադրյալ փաստերը թերևս ներկա սերնդին անդադար հիշեցնեն, որ Արցախի ազատագրումը հրատապ է ոչ միայն Հայաստանի Հանրապետության պաշտպանական-անվտանգային ու ռազմաքաղաքական առաջնահերթությունների առումով, այլ նաև հայկական մշակույթի կարևորագույն արեալներից մեկի՝ Հայոց Արևելից կողմանց հայ բնակչությանն իր բնօրրանը անհապաղ վերադարձնելու անհրաժեշտությունից ելնելով:

## SUMMARY

Resisting the aggression of the Azerbaijani Armed Forces and pursuing the enemy fleeing from the battlefield, the Artsakh Self-Defence Forces in 1991-1994 liberated the territories of the historical Syunik, Artsakh and Utik provinces, which had been illegally annexed to Soviet Azerbaijan. The latter, continuing the Turkish policy of Armenocide in Transcaucasia, depatriated the autochthonous Armenian population by criminal methods of massacres, ethnic cleansing and forced religious conversion, mercilessly destroyed or usurped in the occupied settlements the centuries-old heritage of Armenian culture, which for centuries had served to preserve the national identity of the autochthonous Armenian population of Artsakh.

The purpose of reinterpreting the cultural heritage of the Soviet period is to emphasise the urgency of liberating historical Artsakh based on Armenia's defence, security and military-political priorities and the need for the immediate return of the Armenian population in one of the most important territories of Armenian culture.

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Վաճառ» գիտական կենտրոնի արխիվ (ԿԳԿԱ), Ֆոնդ N 79 (Կրթությունը և գիտությունը Արցախում), Գործ N 11 (Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ժողովրդական կրթության մարզային բաժին), թթ. 1-283:
2. Karapetian S. Armenian cultural monuments in the region of Karabakh, RAA scientific research series book 3, Yerevan, “Gitutyun,” 2001, 272 pp. [Electronic Publication] URL: <https://raa-am.org/wp-content/uploads/2021/11/ARMENIAN-CULTURAL-MONUMENTS-IN-THE-REGION-OFKARABAKH.pdf>, 29.03.2024.
3. Арутюнян Ю., Мгдесян А. О деятельности ОБЛОНО Нагорно-Карабахской Автономной Области в 1923–1926 гг. (Документы) // «Վաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), 2014, Գիրք 8 (95-106), Շուշի, «Վաճառ» գիտական կենտրոնի հրատարակչություն, 2017, էջ 109-164:
4. Заргарян Р. Столетнее уничтожение Азербайджаном цивилизационного наследия Арцаха [Электронный ресурс] URL: [https://russia-armenia.info/node/75469?fbclid=IwAR0ZIINO-vPY7r7wg4LUTSDZtfqxJjU5rXYAFAomhoEdaeR9psNTe5se\\_P4\\_aem\\_AU2W5dOhARyR0moSXjhbHjX0f8tlq-zZLQ1TjFhas43Dcg1XGmzbqhrzvpUF\\_1dKsj5Ij3dJt\\_Cnizw-HcQakhMF](https://russia-armenia.info/node/75469?fbclid=IwAR0ZIINO-vPY7r7wg4LUTSDZtfqxJjU5rXYAFAomhoEdaeR9psNTe5se_P4_aem_AU2W5dOhARyR0moSXjhbHjX0f8tlq-zZLQ1TjFhas43Dcg1XGmzbqhrzvpUF_1dKsj5Ij3dJt_Cnizw-HcQakhMF), 29.03.2024.
5. Карапетян С. Памятники армянской культуры в зоне Нагорного Карабаха, Ереван, «Гитутюн» НАН РА, 2000, 240 с. [Электронный ресурс] URL: <https://inlnk.ru/Vozza6>, 29.03.2024.
6. Мкртчян Ш. Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Ред. В. М. Арутюнян, Б. А. Улубабян; пер. с арм. Л. Р. Багдасарян, Г. Л. Петросяна, Н. А. Аракелян, Ереван, «Айастан», 1989, 360 с.
7. Мкртчян Ш. Сокровища Арцаха: Географические сведения. Историко-культурный очерк. Карты, археология, архитектура. Эпиграфика, фреска, пейзаж. Поселения, этнография. Декоративное искусство. Миниатюра, Ереван, Тигран Мец, 2000, 271 с.
8. Ալավերդյան Ի. Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական հայկական դրամատիկ թատրոն, Բաքու, «Իշրգ», 1982, 78 էջ:
9. Այվազյան Ս., Կարապետյան, Ս. Դադի վանքի վերականգնումը, 1997-2011 թթ. = Реставрация монастыря Дад (Дади Ванк). 1997–2011 гг. = The restoration of the monastery of Dad. (1997 to 2011) / RAA Գիտական ուսումնասիրություններ, Գիրք ԺԷ, Երևան, ՀՃՈԻ հրատարակչություն, 2015, 112 էջ:
10. Ասրյան Գ. (սարկավագ) Արցախի թեմը Խորհրդային Ադրբեջանի բռնաճնշումների կիզակետում 1920-1933 թթ. // 21-րդ ԴԱԳ, 2016, N 5 (69), էջ 97-110, [Էլեկտրոնային հրատարակչություն] URL: <https://cyberleninka.ru/article/n/artsakh-diocese-as-a-target-for-repressions-of-soviet-azerbaijan-in-1920-1933/viewer>; 29.03.2024:
11. Ավագյան Ս. Սովետական Ղարաբաղի մամուլը, Բաքու, Ադր. պետ. հրատ., 1963, 82 էջ:

12. Ավագյան Ս. Արցախը հայ մշակույթի կարևորագույն օջախ, Երևան, «Գիտելիք», 1991, 198 էջ:
13. Ավագյան Ս. Էջեր Լեոնային Ղարաբաղի կուլտուր-կրթական կյանքի պատմությունից, Երևան, «Հայաստան», 1982, 108 էջ:
14. Ավագյան Ս. Նյութեր Ղարաբաղի նախասովետական շրջանի մամուլի պատմությունից, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1969, 232 էջ:
15. Բարխուդարյան Ս. Դիվան հայ վիմագրության: Պր. 5-րդ: Արցախ / Հնագիտության և ազգագրության ինստիտուտ ՀՍՍՀ ԳԱ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, 350 էջ:
16. Բարխուտարեանց Ս. Արցախ, Բագու, Տպարան «ԱԸՕԸ», 1895, 461 էջ:
17. Դիլանյան Ա. Ինքնություն, հուշարձան, վանդալիզմ (Ադրբեջանի և Թուրքիայի օրինակով) // «Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական գտումների քաղաքականությունը Լեոնային Ղարաբաղի դեմ, 2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ, Խմբ.՝ Մ. Ա. Հարությունյան, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), Գիրք 4 (47-58), Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2010, էջ 150-159:
18. Լուսավորության գործը Ինքնավար Լեոնային Ղարաբաղում 1923-23 ուս. տարում և մոտ ապագայի գործունեության սխեման // Խորհրդային Ղարաբաղ (ԱԿԿ Ղարաբաղի շրջանային կոմիտեի և կենտ. գործկոմի օրգան), 1924 թ. 17 օգոստոսի, N 11, էջ 2-4: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: [https://tert.nla.am/archive/NLA%20TERT/xorhrdayinxarabax/1924/11\\_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20TERT/xorhrdayinxarabax/1924/11_ocr.pdf), 29.03.2024:
19. Խորհրդային Ղարաբաղ, 1933, N 189, 23 օգոստոսի:
20. Կարապետյան Սամվել Ադրբեջանը քաղաքակրթությունից դուրս, Երևան, Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2017, 172 էջ:
21. Կարապետյան Սամվել Հյուսիսային Արցախ = Northern Artsakh = Северный Арцах / RAA գիտական ուսումնասիրություններ: Գիրք 2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2004, 584 էջ:
22. Կարապետյան Սամվել Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, 288 էջ:
23. Կարապետյան Սուր. Լեոնային Ղարաբաղի Մ. Գորկու անվան մարզային գրադարանում, Ստեփանակերտ, 1962, Ա.հ., 54 էջ, 19 թերթ նկ.:
24. Հակոբյան Հ. Արցախի միջնադարյան արվեստը = Искусство средневекового Арцаха = The Medieval Art of Artsakh, Երևան, Պարբերական, 1991, 96 էջ:
25. Հայ մշակույթը՝ Ադրբեջանի ազդեցության օբյեկտ, «ԼՂ հանրապետություն», 1997, 10 մայիսի:
26. Հասրաթյան Մ. Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը = Арцахская школа армянской архитектуры, պատ. խմբ.՝ Հարությունյան Վ., Երևան, ՀԳԱ հրատ, 1992, 121 էջ, 19 թերթ նկ.:
27. Հարությունյան Գ. Ժողովրդական կրթության զարգացումը Լեոնային Ղարաբաղում, Երևան, «Լույս», 1985, 164 էջ:
28. Հարությունյան Մ. Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագիտություն (1874-2009 թթ.), Պատմաքննական ներածությամբ, ծանոթագրություններով, մեկնաբանություններով, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս», 2010, 240 էջ:
29. Հարությունյան Մ. Հայ նորագույն թատրոնն Ադրբեջանում (1920-1970), Երևան, ՀԹԸ, 1972, 248 էջ:
30. Ղուլյան Ա. Արցախի և Սյունիքի մելիքական ապարանքները, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2001, 188 էջ:

31. Մինասյան Թ. Արցախի գրչության կենտրոնները, ալբոմ-ուսումնասիրություն, Երևան, «Նաիրի», 2015, 220 էջ:
32. Մկրտչյան Շ. Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները = Историко-архитектурные памятники Нагорного Карабаха, Երևան, 2-րդ վերամշ. և լրաց. հրատ., Երևան, «Հայաստան», 1985, 356 էջ:
33. Ոսկեան Հ. Արցախի վանքերը = Die kloster von Artzakh / Վիեննա, տպ. Միլիթարեան, 1953, 256 էջ:
34. Պապուխյան Ն. Ծ. Ստեփանակերտի կառուցապատման առանձնահատկությունները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1972, N 5, 24-34:
35. Պարսամյան Ս. Ադրբեջանի կողմից իրագործված հայկական հուշարձանների ոչնչացումը որպես մշակութային ցեղասպանություն // «Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, 2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ, Խմբ. ՝ Մ. Հարությունյան, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), Գիրք 4 (47-58), Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2010, էջ 160-171:
36. Պետրոսյան Գ. Մշակույթ. այսօրը և հեռանկարները, «Խորհրդային Ղարաբաղ», N 86, 1990 թ. 15 մայիսի:
37. Պետրոսյան Հ. Մշակութային էթնոցիդն Արցախում (մշակութային ժառանգության բռնա-յուրացման մեխանիզմը) // «Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական զտումների քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի դեմ, 2010 թ. մարտի 21-24-ը Ստեփանակերտում և Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ, Խմբ. ՝ Մ. Ա. Հարությունյան, «Կաճառ» (ԿԳԿ-ի տարեգիրք), Գիրք 4 (47-58), Շուշի, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 2010, էջ 137-149:
38. Սովետական Ղարաբաղ, 1971, N 95, 24 ապրիլի:
39. Ստեփանակերտ (Քաղաքապետարանի պաշտոնաթերթ), 2000, N 29, 27 սեպտեմբերի:

ԳՐԻԳՈՐ ՄԿԵՎՈՒԱՑՈՒ ԱՂՈԹՔՆԵՐԸ

**Բանալի բառեր՝** Գրիգոր Սկևռացի, Գրիգոր Սլիճեցի, աղոթքներ, ութ մեղքեր, Եվագր Պոնտացի, Մարիամ Աստվածածին, պատարագ:

**Keywords:** Grigor Skevratsi, Grigor Mlichetsi, prayers, eight sins, Evagrius Ponticus, Saint Mary, Mass.

Աղոթագրությունը՝ իբրև գեղարվեստական ստեղծագործության բարձրագույն տեսակ, հայ միջնադարյան մատենագրության մեջ սկզբնավորվել է դեռևս Ե դարում՝ հայ դպրության արշալույսին և, հիմնվելով քրիստոնեական վարդապետության, Ս. Գրքի և հայ եկեղեցու դավանաբանության վրա:

Ի թիվս աղոթագիր հեղինակների (Հովհան Ոսկեբերան, Եփրեմ Ասորի, Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Անանիա Նարեկացի, Գրիգոր Նարեկացի, Հովհաննես Սարկավագ, Ներսես Շնորհալի և այլք), ձեռագիր աղբյուրները հիշում են նաև ԺԳ դարի մատենագիր, հասարակական-քաղաքական և եկեղեցական գործիչ, Լևոն Բ թագավորի դիվանադպիր Գրիգոր վարդապետ Սկևռացու անունը:

Գրիգոր Սկևռացու անունով մեզ հասած աղոթքները թեև սակավաթիվ են, բայց արժանի տեղ են գրավում հայ միջնադարյան աղոթագրության և դավանաբանական գրականության մեջ: Գրիգոր Սկևռացու աղոթքներում (և ոչ միայն դրանցում) զգացվում է նարեկյան ազդեցությունը, Ղ. Ալիշանի բնութագրմամբ. «Աղոթասիրտեան նորա պտուղ է և խոկումն վարուց գերագոյն աղօթկերի մերոյ՝ Ս. Գրիգորի Նարեկացույ, գորոյ զվարս գրեաց Սկևռացի» [Ալիշան, 1885, 100]: Ե. Դուրյանը նույնպես նկատել է Գրիգոր Նարեկացու և Գրիգոր Սկևռացու երկերի միջև եղած նմանությունները. «Հեղինակը նարեկյան ոճի նմանողությամբ կը ձգտի մերթ ընդ մերթ, և երբեմն ալ արձակը թողլով՝ չափական տողեր կը հիւսէ, ինչպէս կ'ընեն նաև Լամբրոնացին իր ճառերուն մէջ» [Դուրեան, 1933, 233]:

Որո՞նք են Գրիգոր Սկևռացու աղոթքները:

Սկևռա վանքի միաբան Պետրոս քահանայի խնդրանքով Գրիգոր Սկևռացին գրել է. «Ամէնօրինեալ Աստուածածին, տաճար բարձրելոյն...» սկզբնատողով մի աղոթք՝ նվիրված Սուրբ Կույսին [Պողարեան, 1971, 203]: Աղոթքը չափածո է: Ըստ էության, այն Հիսուս Քրիստոսին ուղղված Տիրամոր աղաչանքն է՝ ի հիշատակ Տիրոջ չարչարանքների և խաչվելու: Ղ. Ալիշանը աղոթքից մի հատված հրատարակել է «Սիսուանում» [Ալիշան, 1885, 100]:

«Ամէնօրինեալ Աստուածածին...» աղոթքը մեզ է հասել ուշ շրջանի ընդօրինակությամբ և առկա է Երուսաղեմի 1487 (ԺԸ դ., գրիչ՝ Մարտիրոս արեղա), Վենետիկի 2362 (1781 թ., գրիչ՝ Գևորգ դպիր Պալատնեցի), Վիեննայի թիվ 923 (1860 թ., գրիչ՝ անհայտ) ձեռագրերում:

ՄՄ 7238 ձեռագրով մեզ հասած Աստվածածինն նվիրված աղոթքը տարբեր է վերոհիշյալ աղոթքից: Այն ոչ այլ ինչ է, քան Աստվածածինն նվիրված ներբողի «Բարեբանեալ ես ամենասրբուհի Աստուածածին» տողով սկսվող փառաբանության հատվածը [ՄՄ ձեռ. 7238, թղ. 224ա-227բ]: Դժվար է ասել, հեղինակն ի՞նչ է ներբողը վերածել աղոթքի, թե այն այնքան սիրված է եղել, որ աղոթողի շուրթերից հնչել է նաև որպէս խնդրանք ու աղերսանք:

«Բարեբանեալ ես ամենասրբուհի Աստուածածին»-ը այնքան գեղեցիկ է հորինված, որ այն կարելի է դիտել որպէս արձակ բանաստեղծություն: Հետևելով Սուրբ Գրքին, Հայ եկեղեցու դավանաբանությանը և ավանդույթին՝ Գրիգոր վարդապետը ամենաջերմ ու սրտառուչ

կերպով, գովաբանական և փառաբանական ամենագեղեցիկ մակդիրներով է դիմում Տիրամորը: Աստվածամայրը ներկայացվում է իր բոլոր շնորհներով՝ սրբությամբ, կուսությամբ, բարությամբ, մայրական քնքշությամբ ու նրբագեղությամբ. շրջանառվում են կանոնիկ պատկերներ: Սուրբ Կույսը որակվում է «որովայն աստուածակրող, մայր աստուածածնող, աստուածաշոշափ ձեռք, աստուածահանգիստ գիրկ, աստուածադիպած ստինք, աստուածապաճոյճ ձեռք, աստուածաբարձ բազուկ, աստուածամերձ բերան, աստուածահամբոյր շուրթն, աստուածահայեաց աչք, աստուածախոս լեզու, աստուածակերտ խորան, աստուածաբնակ տաճար, աստուածընկալ տաղաւար» [ՄՄ ձեռ. 7238, թղ. 225ա]: Տիրամայրը դրվատվում է որպէս իմաստության աղբյուր, որտեղից բխում են արդարությունն ու ճշմարտությունը և ճանաչում է կենաց լույսը: Մարդկության համար կենսական ու բարերար նշանակություն ունեցող արեգակ է Աստվածամայրը, ծաղկող ծառ, դրախտ և բարունակ որթ է նա. «Արեգակն՝ յորմէ արարածք պայծառացան, լոյս՝ որով խաւարեալք լուսաւորեցան, դրախտ՝ յորմէ գեղեմայ տնկողն տեսաք, ծառ՝ ուստի անթառամ ծաղիկն վայելեցաք, բարունակ՝ յորմէ քաջագուարթ ողկոյզն կթեցաւ, ողկոյզ, ուստի ուրախարար գինին բոխեաց, երկիր, ուստի ճշմարտութիւն բուսաւ, երկին, յորմէ արդարութիւն երևեցաւ» [ՄՄ ձեռ. 7238, թղ. 224բ]:

Տիրամոր բնութագրումների մեջ, ինչպէս նկատում է Վ. եպս. Միրզախանյանը, Սկևռացին դիմում է արևելաքրիստոնեական աստվածաբանությանը հատուկ անտինոմիկ սկզբունքին. «Սկևռացին օգտվում է միջնադարյան գրականության մեջ լայնորեն կիրառվող գեղարվեստական այդ հնարքից: Այն արտահայտվում է մեկ մեկու տրամաբանորեն բացառող երկու իրադրությունների հակադրամիասնությամբ, ինչն իր համապատկերի մեջ արդեն հայտնութենական բնույթ ունի: Ահա դրանցից մի քանիսը. տեղի անտանելոյն, ժամանակ անժամանակ էին, սահման անսահմանելոյն, մայր ընդ մարմնոյն անհորն առ ի քէն, որ ի Հօրէ անմայր անմարմնաբար» [Է. սարկավագ Միրզախանյան (Վազգեն եպս. Միրզախանյան), 2018, 71]: Վերջում Սկևռացին, իր ջերմեռանդ աղոթքն ուղղելով առ Տիրամայրը, խնդրում է միջնորդ լինել իր միածին Որդու մոտ՝ մշտապէս բարեխոսությամբ. «Բարեխօսեա առ Որդիդ քո և Աստուածդ իմ, վասն յոգնամեղ և բիրապարտ պատժապարտիս, թողուլ զյանցանս զոր գործեալ եմ: Եւ մատնու հաշտութեան զանճառելի խոնարհութիւն... և նովաւ յայցես զթողութիւն պարտեաց աւագատիպ և լեռնահանգետ սխալանց եղեռնականիս» [ՄՄ ձեռ. 7238, թղ. 226ա]:

Գրիգոր Սկևռացու աղոթքների մեջ առավել ուշագրավ են նրա երեք մեծ աղոթքները՝ նվիրված Ս. Երրորդությանը, Ս. Պատարագին և ութ մահացու մեղքերին<sup>6</sup>:

Սկևռացու այս երեք աղոթքները առանձին գրքով՝ 1742 թվականին Կ. Պոլսում «Գիրք աղօթից» ընդհանուր վերնագրով հրատարակել է Հ. Նալյանը և գրել փոքրիկ առաջաբան՝

---

<sup>6</sup> Սույն երկի հեղինակային պատկանելության հարցին է անդրադարձել Հ. Միրզոյանը: Նա «Աղոթագիրքը» վերագրում է Գրիգոր Մլիճեցուն՝ ելնելով այն փաստից, որ հայագիտության մեջ ոչ ճիշտ պատկերացում կա երկու Գրիգոր Սկևռացիների՝ Մլիճեցու և Լամբրոնացու անձերի հարցում: Նա գրում է. «Ըստ այդմ վերջինիս են վերագրվել թե՛ «Գիրք աղօթիցը» (Կ. Պոլիս, 1742), թե՛ «Ներբողեան ի սուրբն Ներսէս Լամբրոնացի», և թե՛ համանման այլ ստեղծագործություններ: Մինչդեռ լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ դրանցից մի մասը, օրինակ՝ «Գիրք աղօթից»-ը պատկանում է Մլիճեցու գրչին: Սակայն այս հարցը կարիք ունի բանասիրական և աղբյուրագիտական հանգամանալից ուսումնասիրության, ուստի առայժմ ավելին ասել չենք ցանկանում»: (Հ. Միրզոյան, Նարեկացու լեզվական ազդեցությունը հետագա դարերի մատենագրության վրա, «Բանբեր Երևանի համալսարանի», 2006, թիվ 1 (118), էջ 110, ծնթ.): Որ Ներսէս Լամբրոնացուն նվիրված ներբողյանն իրապէս պատկանում է Լամբրոնացի Գրիգորին, անհերքելի իրողություն է, հաստատված է ձեռագրերով և ապացուցման կարիք չունի: Այն ԺԲ դարի մշակութային և հոգևոր նշանավոր գործչի կյանքին և գործունեությանը վերաբերող ամենահավաստի աղբյուրն է և լավագույններից մեկը հայ միջնադարյան ներբողագրության մեջ: Իսկ համանման այլ ստեղծագործություններից կոնկրետ որո՞նք նկատի ունի Հ. Միրզոյանը և ի՞նչ լուրջ հիմք ունի «Աղոթագիրքը» Գրիգոր Մլիճեցուն վերագրելու, դժվարանում ենք ասել: (Տե՛ս **Սովերք հայկականը**, ԺԵ, 1854):

աղոթողին ուղղված ուղերձ՝ աղոթքի անհրաժեշտության, կարևորության և ընդունելի ձևերի մասին [Գրիգոր Սկևռացի, 1742]: Գ. Թերզյանի աշխարհաբար փոխադրությամբ և Հ. Քյոսեյանի խմբագրությամբ «Աղոթագիրքը» լույս է տեսել 2018 թվականին [Գրիգոր Սկևռացի, 2018:]

Այս աղոթքների՝ մեզ հասած ձեռագրերի թիվը նույնպես մեծ չէ: Անկիրիոն վանքի թիվ 146 ձեռագիրը կոչվում է «Աղոթք Գրիգորի Սկևռացոյ արհեստ գրչութեան Արիստակէս գրչի» [Բարգեն աթոռակից կաթողիկոս, 1957, 727-728]: Գրվել է երկու գրիչների կողմից: Առաջինի անունը անհայտ է, հավանաբար Արիստակեսն է, իսկ երկրորդը՝ Ներսեսն է: Գեղեցիկ բոլորգիր ձեռագիր է եղել, շատ գործածությունից, սակայն, թերթերը դեղնել են ու կեղտոտվել, խոնավությունից իրար են կպել:

Վիեննայի կայսերական մատենադարանի թիվ 10 ձեռագրում Ներսես Շնորհալու և Եփրեմ Խուրու աղոթքների հետ Գրիգոր Սկևռացու երեք աղոթքներն են: Ձեռագիրը 1364 թ. Եկեղյաց գավառի սուրբ Կիրակոս անապատում Նորոգես քահանայի խնդրանքով օրինակել է Անանիաս գրիչը [Տաշեան, 1891, 16-17]:

Սկևռացու Պատարագին նվիրված աղոթքի մի օրինակ էլ հանդիպում ենք Օշին թագավորի Ժամագրքում: Ձեռագիրը 1319 թվականին Օշին թագավորի պատվերով գրել են Տեր Հակոբ քահանան և Թորոս քահանա Հռոմկլայեցին: Սա մագաղաթյա արքայական ձեռագիր է, եղել է Կիլիկյան թագավորների աղոթագիրքը, Կիլիկիո հայրապետների ժամագիրքը, Կիլիկիո հայ ավագանու ժամակարգությունը, երեցները գործածել են որպես շարակնոց, սարկավագները՝ տոնացույց: Ձեռագիրը ԺԷ դարից գործածվել է եկեղեցում՝ հասարակ ժամակարգությունների ժամանակ, դրա համար էլ հնացած է: «Մինչդեռ հարկ է խնամքով պահել իբրև արքայական թանկագին յիշատակ», - հորդորում է Արտավազդ արքեպիսկոպոսը [Արտավազդ արքեպիսկոպոս, 1933, 981]:

Իր բոլոր աղոթքներում Գրիգոր Սկևռացին խիստ կարևորում է աղոթքի նշանակությունը, քանզի ամենքս կարիք ունենք աղոթքի: Ըստ Սկևռացու՝ բոլոր առաքինություններից աղոթքն առավել ընտանի և մերձավոր է Աստծուն, քանզի մյուս բոլորն իբրև հանդերձանք և պատրաստություն են Աստծու մոտ մտնելու, իսկ սա Աստծու հետ դեմ հանդիման խոսակցություն է:

Առաջին աղոթքը, որի հիմքում հավատո հանգանակն է, Սուրբ Երրորդությանը նվիրված աղոթքն է՝ հետևյալ վերտառությամբ «Գրիգորի Սկևռացոյ ճգնագեաց վարդապետի Աղոթք ի Սուրբ Երրորդութիւնն»:

«Նորին Գրիգորի վարդապետի Սկևռացոյ Աղոթք որ ի խորհրդական ժամու Սրբոյ և մեղսաքաւիչ Խորհրդոյն մատուցանի» խորագրով երկրորդ աղոթքը նվիրված է պատարագին:

Պատարագը քրիստոնեական եկեղեցու արարողակարգում ամենահինն է, միաժամանակ ամենաքանչելին, ամենագեղեցիկն ու ամենավեհը: Հնագույն պատարագներին հատուկ է եղել դավանաբանական որոշակի ուղղվածություն: Ըստ ժամանակի պահանջի՝ պատարագը փոփոխություն է կրել՝ խմբագրվել, մեկնաբանվել, լրացվել է նոր միավորներով:

Հայկական պատարագը, որ հիմնված է Երուսաղեմ-Անտիոքյան պատարագի վրա [Գաթրճեան, 1897, 3], կանոնակարգվել է Դ դարում՝ Գրիգոր Լուսավորչի կաթողիկոսության ժամանակ: Հայոց հայրապետը պատարագում ավելացրել է Նիկիո հանգանակը և «Իսկ մեք փառաւորեսցուք» գոհաբանական հատվածը: Այս մեր հայկական պատարագի կազմավորմանն ու ամբողջացմանը մասնակցել են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Հովհան Մանդակունին, Հովհան Օձնեցին, Խոսրով Անձևացին, Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին:

Ժ դարում Խոսրով Անձևացին գրել է Պատարագի մեկնություն [Խոսրով Անձևացի, 1869]: Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի ժամանակներից հայոց պատարագ են ներմուծվում օտարամուտ տարրեր, իսկ ԺԲ դարում այն այնքան էր աղճատվել, որ միջնադարյան նշանավոր գործիչ և աստվածաբան Ներսես Լամբրոնացին, մտահոգված եկեղեցու ժամակարգության անաղարտությամբ, գրում է պատարագի մեկնություն [Ներսես Լամբրո-



նացի, 1847]: Այդ մեկնության նպատակն էր հայոց պատարագը մաքրել օտար տարրերից և վերականգնել ավանդական կարգը: Նույն նպատակն է հետապնդում Գրիգոր Սկևռացու պատարագին նվիրված աղոթքը: Աղոթքի հիմքում պատարագի ողջ խորհուրդն է:

Երրորդ աղոթքը, որն ամենաձավալունն է, կոչվում է «Նորին Գրիգորի Սկևռացույ գիտնական Վարդապետին. Աղօթք ի վերայ ութ խորհրդոցն մեղաց»: Այստեղ Գրիգոր Սկևռացին հետևում է եվագրյան ութ խորհրդի տեսությանը՝ մարդու մաքրագործումը արատավոր մեղքերից համարելով հոգևոր պատերազմ [Зарин, 1907, т. 1, кн. 2, 349]<sup>7</sup>: Աղոթքում հեղինակի խորհրդածություններն են ութ մահացու մեղքերի և նրանց բերած ծանր հետևանքների մասին: Երբ պակասում է հավատը, և խախտվում է կապը Աստծո և մարդու, մուտք են գործում մեղքերը: Ինչպես Եվագր Պոնտացին, Սկևռացին նույնպես մեղքերը բաժանում է ութ խմբի: Դրանք են՝

- ա) որովայնամոլություն
- բ) պոռնկություն
- գ) արձաթասիրություն
- դ) տրտմություն
- ե) ցասում և բարկություն
- զ) ձանձրություն
- է) փառամոլություն և սնափառություն
- ը) հպարտություն և ամբարտավանություն:

Հեղինակը իմաստուն խոհականությամբ նախ մեկ առ մեկ ներկայացնում է և պարզաբանում, թե ինչ արատներ են որկրամոլությունից մինչև հպարտություն, ապա կանգ է առնում այն ծանր հետևանքների վրա, որոնք առաջ են բերում մեղքերը: Սկևռացին ասում է, որ այդպիսի երևույթներին նայում է զարհուրանքով ու դողով և լսելով Տիրոջ այրող հուրի մասին՝ վախենում է գործած մեղքերից և սովորեցնում է արժանիներին ու անարժաններին գթություն, ողորմություն, արդարություն, աննախանձ և անցասում ընթացք: Իր անձը համեմատելով երկրագործի հետ՝ Սկևռացին ասում է, որ աշակերտները ըստ սերմանողի պիտի բարի պտուղ տան: Այնպես ինչպես երկրագործն է հավաքում բարիքը, այդպես էլ ինքը հետամուտ է լինում անխոնջ տաժանությամբ հունձը հավաքելու: Բոլոր մեղքերի պատճառը խոհականի մոլորությունն է: Մեղքը հաղթել է, և ողջախոհությունը տեղի է տրվել վավաշոտության, խոհականությունը՝ անհանճարության, արդարությունը՝ անիրավության, խոնարհությունը՝ ամբարտավանության, գթությունը՝ անողորմության, սերը՝ ատելության, քաղցրությունը՝ դառնության, ճշմարտությունը՝ ստին: Եվ քանի որ մարդկությունը ոչ թե մասամբ էր մեղքերով ապականված, այլ ամբողջովին՝ հոգով, մարմնով ու մտքով, ուստի Բանն ամբողջն առավ իր վրա, որպեսզի իր անմեղությամբ ու անապականությամբ մեղանչականն անմեղ դարձնի, ապականվածը՝ անապական: Որպեսզի արմատախիլ արվեն մեղքերը, որպեսզի արատներ ու մեղքեր չծնվեն, շատ կարևոր է զգայարանների ճիշտ պահվածքը: Հեղինակը հորդորում է ամուր փակել զգայարանների դռները, որպեսզի ախտավոր ցանկությունները մուտք չգործեն, և խորհուրդ է տալիս դրանք բացել առաքինի գործերի համար: Սկևռացին խնդրում է աղոթել, զղջալ ու ապաշխարել՝ չարից, մոլորությունից, զանազան ախտերից ազատվելու համար: Իսկ ով ուզում է հոգին ապրեցնել, ով չի ուզում հոգու կործանումը, պետք է հեռու մնա մեղսալի բաներից:

Գրիգոր Սկևռացին շատ է կարևորում արտասովոր աղոթելը՝ դրա մեջ տեսնելով մարդու մաքրագործման և փրկության խորհուրդը: Սկևռացու՝ աղոթքի տեսության հարցում մենք գործ ունենք ավանդույթի շարունակականության հետ: Զղջումով և արտասուքով

---

<sup>7</sup> Ծնթ. Ութ մեղքերի արևմտյան ուսմունքին զուգահեռ Զ-Է դարերում գործում էր նաև յոթ մեղքերի տեսությունը, դրանք են՝ հպարտություն, ազահություն, բարկություն, նախանձ, բղջախոհություն, որկրամոլություն, ծուլություն:

աղոթելը Նարեկյան և Կիլիկյան գրական դպրոցների սկզբունքներից է: Նարեկյան դպրոցի լավագույն գիտակ Հ. Թամրազյանը, ի հայտ բերելով ուղղակի առնչություններ, նկատում է, որ Կիլիկյան դպրոցը ձևավորվել է Նարեկյան դպրոցի հիմքի վրա և նրա ուղղակի շարունակությունն է [Թամրազյան, 2007]: Դա լավագույնս տեսանելի է աղոթքի տեսության հարցերում: Խոսքով Անձևացին մարդու հոգևոր մաքրագործության համար կարևորում է մաքուր սրտով և մտքով աղոթել [Թամրազյան, 1999, 68-94]: Անանիա Նարեկացու խրատներում քննության է առնվում աստվածացման գաղափարը, որն ուղեկցվում է ներքին աղոթքով: Վերջինս «Յաղագս գղջման և արտասուաց» խրատում կոչ է անում ճգնել պահքով, արտասուքով, անդադար աղոթքով, քանի որ արտասուքը հաշտեցնում է մարդուն և Աստծուն [Թամրազյան, 1986, 236]: Գրիգոր Նարեկացին «Մատյանում» բազմիցս անդրադառնում է այն խնդրին ու գաղափարին, որ խոստովանությամբ, գղջումով և արտասուքով կարելի է հասնել փրկության [Գրիգոր Նարեկացի, 1985, Բան Գ-գ, ԻԶ-բ, ԼԲ-բ և այլն]: Ջղջումով և արտասուքով աղոթելու մեջ մարդու մաքրագործումն են տեսնում նաև Կիլիկյան դպրոցի նշանավոր այրերը՝ Ներսես Շնորհալին, Գրիգոր Տղան, Ներսես Լամբրոնացին [Թամրազյան, 2007]: Գրիգոր Սկևռացու աղոթքի տեսությունն ուղղակի բխում է Նարեկյան և Կիլիկյան դպրոցների սկզբունքներից:

Ամփոփելով ասենք, որ Գրիգոր Սկևռացին, որպես աղոթագիր հեղինակ, իր տեղն ունի հայ միջնադարյան գրականության մեջ: Նրա գործերում աղոթքի վերաբերյալ տեսակետները ուղղակի բխում են Հայ առաքելական եկեղեցու դավանաբանությունից, ուր պարզորոշ երևում է այդ եկեղեցու ճշմարիտ գաղափարախոսը: Գրիգոր Սկևռացին գործով ու թողած գրական վաստակով է վկայում իր ունեցած խոր հավատի և հոգևոր զարգացման բարձր աստիճանի մասին:

## SUMMARY

Grigor Archimandrite Skevratsi, a follower of the famous clergyman and theologian Nerses of Lambron, was one of the outstanding public, political and cultural figures of medieval Armenia, who in his literary, cultural, religious, social and pedagogical activities was a worthy disciple of his teacher and carried on the traditions established by him. Grigor Skevratsi is a multi-genre author. He wrote in practically every genre of spiritual literature and left a legacy of odes and Church Hymns (sharakan), orations and sermons, exhortations and prayers, interpretations and translations.

The current paper presents the prayers of Grigor Skevratsi. His theory of prayer is directly derived from the teaching of the school of Narek Monastery which is evidence of a continuity of tradition. Grigor Skevratsi expressed his views on prayer as the highest moment of spiritual life in a number of works, in the theological poem “Instruction on the true Faith and the Virtuous and Pure Life” (“Khrat” (exhortation) «Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ և մաքուր վարուց առաքի-նութեան» («Խրատ»)), sermons, several small and large prayers. Skevratsi's prayers testify to his deep faith and high spiritual level.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Зарин С. Аскетизм по православно-христианскому учению, т. 1, кн. 2, Санкт-Петербург, тп. Б. О. Киршбаума, 1907, 716 с.
2. Ալիշան Ղ. Միսուան, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1885, 592 էջ:
3. Գաթրճեան Յ. Սրբազան պատարագամատոյց հայոց, Վիեննա, տպ. Մխիթարեան, 1897, 746 էջ:
4. Գրիգոր Նարեկացի Մատեան ողբերգության, գիտական աշխատասիրությամբ Պ. Խաչատրյանի և Ա. Ղազինյանի, Երևան, ԳԱ հրտ., 1985, 1122 էջ:

5. Գրիգոր Սկևռացի Աղոթագիրք, Երևան, Զորավոր Մբ. Աստվածածին եկեղեցի, 2018, 142 էջ:
6. Գրիգոր Սկևռացի Գիրք աղօթից, Կ. Պօլիս, տպ. Մահտեսի Աստուածատուրի, 1742, 192 էջ:
7. Դուրեան Ե. Պատմություն հայ մատենագրության, Երուսաղեմ, սբ. Յակոբեանց, 1933, 463 էջ:
8. Թամրազյան Հ. Անանիա Նարեկացի, Երևան, ԳԱ հրտ., 1986, 362 էջ:
9. Թամրազյան Հ. Գրիգոր Նարեկացին և Կիլիկիայի բանաստեղծական արվեստի դպրոցը, Երևան, «Նաիրի», 2007, 182 էջ:
10. Թամրազյան Հ. Նարեկյան դպրոցը, Երևան, «Հայաստան», 1999, 233 էջ:
11. Խոսրով Անձևացի, Մեկնություն աղօթից պատարագի, Վենետիկ, տպ. Ս. Ղազար, 1869, 67 էջ:
12. Կյուլեսերեան Բ. Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1957, 1350 էջ:
13. Միրզախանյան Է. սարկավագ (Վազգեն եպս. Միրզախանյան) Գրիգոր վարդապետ Սկևռացու Մատենագրական ժառանգությունը, ավարտաճառ (1990), Երևան, Մայր Աթոռ Մբ. էջմիածին, 2018, 112 էջ:
14. Միրզոյան Հ. Նարեկացու լեզվական ազդեցությունը հետագա դարերի մատենագրության վրա // Բանբեր Երևանի համալսարանի, 2006, թիվ 1 (118), էջ 109-119:
15. ՄՄ ձեռ. 7238, թղ. 224ա-227բ:
16. Ներսես Լամբրոնացի Խորհրդածություն ի կարգս եկեղեցւոյ և Մեկնություն խորհրդոց Պատարագի, Վենետիկ, Ս. Ղազար, 1847, 557 էջ:
17. Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր ժամագրքին, նկարագրեց Արտաւազդ արքեպիսկոպոս առաջնորդ հայոց Բերիո, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, 1933, 104 էջ:
18. Պողարեան Ն. Հայ գրողներ (Ե-ԺԷ դդ.), Երուսաղեմ, Մբ. Յակոբեանց, 1971, 548 էջ:
19. Սոփերք հայկականք, ԺԵ, Վենետիկ, տպ. Մխիթարեանց, 1854, 145 էջ:
20. Տաշեան Հ. Ցուցակ հայերէն ձեռագրաց կայսերական մատենադարանին, Վիեննա, տպ. Մխիթարեանց, հ. Ա, 1891, 43 էջ:

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՑԱԽ-ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍԻՆ ԸՍՏ «ՎԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ» («ОТЧЕТЪ ИМПЕРАТОРСКОЙ  
АРХЕОЛОГИЧЕСКОЙ КОММИССИИ») ՏԵՂԵԿԱԳՐԵՐԻ

բ) 1973 թ. 11-րդ համարում՝ «Հայրենիք եւ հայրենասիրություն» (հեղինակ՝ Լուիեր Մասպանաճյան) հոդվածի «Գաղութահայությունը երկու հայրենիք ունի՝ Հայաստանը եւ մեր ապրած երկիրները: Երկու հայրենիք ունենալու պարագան մեր վրայ կը դնէ կրկնակի պարտաւորություն՝ սիրել եւ ծառայել երկուքին ալ, մինչեւ որ իրականանայ ազատ եւ անկախ Հայաստանի ստեղծումը» եզրակացությունը վիճարկելի է: Պաղեստինի նախագահ (1993-2004) Յասեր Արաֆաթն (1929-2002) ասում էր, որ Բնօրրան կորցրած հայության ճակատագրական սխալը օտար երկրների քաղաքացիություն ընդունելն ու գույք գնելն է: Նա ազգակիցներին, հայերի օրինակով, նախազգուշացնում էր չկորցնել Բնօրրանի հետ գենետիկ կապը:

գ) 1974 թ. 1-2-րդ համարում տպագրված է «Լիբանանէն Գանատա... Ի՛նչ տարածություն» խորհրդածությունը (հեղինակ՝ Մհեր Աճեմյան): Հակոբն անցել է այդ հսկայական տարածությունը եւ ստիպված է անկեղծորեն ինքն իրեն պարզաբանել «ամէն հայու համար» կենսական երկու հարց՝ հակասությունը միջավայրի հետ եւ հայ լինելու պարտադրանքը: Լուծումը սա է. «Առաջին հակասութեանս համար պէտք է համոզեմ ինքզինքս, «որ վաղը լաւ կ'ըլլայ»: Երկրորդ հակասութեանս համար պէտք է սպասեմ, որ «վաղը» գայ:

Սպասեմ, չարչարուիմ ու մինչ այդ ապրիմ իբրեւ անասուն: Ուտեմ, խմեմ, պառկիմ եւ աշխատիմ: Կրկին ուտելու, խմելու եւ աշխատելու համար ... Անհեթեթ պատրանք ...

Լիբանանէն Գանատա ... ի՛նչ տարածություն, ուր հայ հոգիներ կը ճախրեն՝ իրենց հիմնական երկու հակասությունները շալկած իրենց թելերուն մէջ: Խաբկանքներու մէջ օրօրուելով, հայապահպանում խաղալով՝ փորձել երկարաձգել հոգեվարքը, եւ հետեւաբար Հայ Դատ կոչուած «երազը» ...

Իսկ արդեօք «երազները» ... կ'իրականանա՞ն:

Լիբանանի մէջ՝ ոչ: Գանատայի մէջ ... տակաւին չեմ գիտեր ...» [«Արձագանգ» ամսաթերթ, 1974, № 1-2, 55]:

գ) 1974 թ. 5-րդ համարում տպագրված «Մարտի հաշուեյարդարը յունիսին» (ստորագրված է՝ Ա.) հոդվածում անդրադարձ կա 1974 թ. մարտի 6-ին: Այդ օրը ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնախումբը քննարկել է ցեղասպանության եւ խտրականության դեմ միջոցառումների տեղեկագիրը, որից հանել են Հայոց ցեղասպանության մասին հատվածը՝ 30-րդ կետը: «Հայրենիք» (Բոստոն) օրաթերթը 1974 թ. մարտի 10-ի համարի «Ամօթալի, սեւ օր մը ՄԱԿ-ի համար» հոդվածում (հեղինակ՝ Լեւոն Քեշիշյան) արձանագրում է, որ «միջպետա-



կան հաշիւներու բերումով, բազմաթիւ երկրներ կը պաշտպանեն թրքական տեսակէտը» [«Հայրենիք» (Բոստոն) օրաթերթ, 1974, մարտի 10-ի համար]: «Արձագանգ»ի հոդվածին հաջորդում է խմբագրության խոսքը՝ «Օտարէն չկայ փրկութիւն» վերնագրով. հայության փրկությունը միասնականությունն է:

դ) 1975 թ. 12-րդ համարի «Մփիւռքահայութեան անտարբեր տարրը» (հեղինակ՝ Սեդո Պոյաճյան) հոդվածն անկեղծ գրույց է ընթերցողի հետ. թող ամեն սփյուռքահայ որոշի՝ ինքը ո՞ր խմբում է՝ «անմիջական կարիքներով կլանուած»նե՞րի, թե՞ «ընդհանրական կարիքներով եւ ձգտումներով կլանուած»ների: «Նուիրեալներու սահմանափակ թիւով ներկայացող փաղանգի» առջեւ շատ բարդ խնդիրներ են ծառանում ...

Այս հեղինակի «Հայը գաղթող արարած չէ» խորագրով հոդվածը, որ հրատարակված է «Արձագանգ»ը 1975 թ. 10-11-րդ համարում, ներգաղթի կոչ է սփյուռքահայությանը:

ե) 1975 թ. 9-րդ եւ 10-11-րդ միացյալ համարներում տպագրված է Ս. Սրապի «Թուրքը եւրոպացի չի դառնար, բայց Եւրոպան կրնայ թուրքանալ» ծավալուն հոդվածը: Հեղինակը Զարեանդի (Զավեն Նալբանդեան, 1890-1973) «Ի՞նչ կը ծրագրեն թուրքերը կամ Միացեալ, անկախ Թուրանիա» (հայերէն՝ 1926 թ., անգլերէն՝ 1971 թ.) գրքից հիշեցնում է «Թուրքիան եզան սայլով նապաստակ կրնայ որսալ» [«Արձագանգ» ամսաթերթ, 1975, №9, 24] ժողովրդական խոսքը, որն այլաբանական խորքով սպառնալիք է հարեւան ու ոչ հարեւան ժողովուրդներին: Հեղինակը փորձում է գտնել «Արդ, թուրքը իր չունեցած բարոյական, մարդկային ո՞ր արժէքին միջոցաւ կրցաւ բոլոր այդ եւրոպացիներուն քուէները ունենալ հայկական ջարդերուն ուրացման համար: Ի՞նչ բաներով թուրքը կրցաւ անոնց պարտադրել իր կամքը եւ անոնց բարեացկամութիւնը շահիլ...» [«Արձագանգ» ամսաթերթ, 1975, № 10-11, 14-15] հարցի պատասխանը, որը կա հենց հարցի ձեւակերպման մեջ՝ «քաղաքակիրթ» բառի միջոցով:

Ամսաթերթի 1-ին համարից հաճախադեպ են հանդիպումները Շաւարշ Նարդունու գրական էջերին: Երբ գրուցում էի Մարգար Շարաբխանյանի հետ, հասկանում էի՝ այս գրողի նկատմամբ պարոն Մարգարի սերն ու խոնարհումը պայմանավորված էր ոչ միայն ազգակցական կապով (Նարդունին Մարգար Շարաբխանյանի մայրիկի եղբորորդին էր), պատանեկան տարիների հիշողություններով, երախտագիտությամբ, այլեւ աշխարհայացքային նմանություններով, առաջին հերթին՝ «Հայաստանը ամէնէն առաջ» ապրելակերպ դարձած սկզբունքով:

Հետաքրքիր դեպք պատահեց վերջերս: «Արձագանգ»ի 1972 թ. 11-րդ համարում տպագրված է «Վերապրումներ» հուզիչ հոդվածը: Հեղինակը Մարգար Շարաբխանյանն է: Հոդվածի շարվածքն ուղարկեցի տիկին Էլիզին: Պարզվեց՝ երկմտել է. Նարդունի՞ն է հեղինակը: Պարզաբանեցի. անկեղծ ու ազնիվ գիրը միշտ էլ նարդունիական շունչ ունի՝ անկախ այն հանգամանքից, թե ո՞վ է գրիչ վերցնողը:

Ամսաթերթի բոլոր համարներն աչքի են ընկնում հարուստ բովանդակությամբ:

Որպէս ապացույց՝ համառոտ ներկայացնեմ ամսաթերթի մշտական բաժիններից մի քանիսը՝

1. Խմբագրական հոդվածները հայության եւ հատկապէս՝ կանադահայության կյանքի հուզող հարցերի մասին են:

2. ՀՅԴ նշանավոր գործիչների կյանքին ու գործունեությանը նվիրված էջեր կան ամսաթերթի գրեթե բոլոր համարներում, գաղափարական ինչ-ինչ հարցերի նվիրված էջերը, հասկանալի պատճառներով, հաճախադեպ են:

3. Պարբերաբար ներկայացված է կուսակցական զանազան մարմինների եւ կանադահայ բազմազան կազմակերպությունների գործունեությունը: Բացառիկ ուշադրություն է նվիրված ՀՕՍ-ի ձեռնարկներին, ամառային դպրոցների եւ Տորոնտոյի «Հայ կեդրոն»ի գործունեությանը:

4. Հայ եւ համաշխարհային մշակույթի ճանաչված դեմքերին նվիրված բազմաթիվ էջեր եւ նրանց ստեղծագործություններից հատվածներ կան ամսաթերթում: «Արձագանգ»ի

էջերում, հասկանալի պատճառներով, ավելի շատ են չափածո ստեղծագործությունները՝ հայ հին ու միջնադարյան քնարերգությունից մինչև Պարույր Սեւակ:

5. Թարգմանական էջերից թվարկեմ երկուսը՝

ա) 1972 թ. 4-րդ համարում՝ «Նիւ Եոթք Թայմզ»ի 1972 թ. ապրիլի 2-ի համարում Փիթըր Գոլիերի հոդվածը Ուիլյամ Սարոյեանի «Վայրերը, ուր եղել եմ ես» գրքի մասին «Ես նոյնն եմ, բայց տարբեր» խորագրով: Հոդվածը թարգմանել է Էլիզ Հասրճյանը:

Հավելեմ՝ այս հոդվածը լույս է տեսել նաև «Սփիւոք» (Բեյրութ) շաբաթաթերթի 1972 թ. հուլիսի 2-ի համարում:

բ) 1973 թ. 11-րդ համարում հրատարակված «Հպարտ ենք հայերով» (հեղինակ՝ Ճաք Պիլ) հոդվածը Ֆրեզնոյի «Ֆրեզնո Պի» օրաթերթի 1973 թ. օգոստոսի 21-ի համարում տպագրված անգլերեն հոդվածի թարգմանությունն է: «Այս հպարտ ժողովուրդը ամենէն յաջողածներէն է բոլոր մարզերու մէջ», – այսպես է գնահատում ամերիկացին հայության դերը իրենց երկրում [«Արձագանգ» ամսաթերթ, 1972, № 11, 24]:

6. Ամսաթերթը պարբերաբար անդրադարձել է մանկավարժական հարցերի քննությանը, ուներ նաև մանկական էջ:

7. Ամսաթերթում մշտական էին «Լուրեր Հայրենիքէն» եւ «Լուրեր Սփիւոքէն» էջերը:

8. Ժամանցի էջերը հիմնականում խաչբառեր են:

9. «Արդի հայ գրականութեան հետքերով», «Արեւելահայ գրականութիւն», «Գանատական գրականութիւն», «Ամերիկեան գրականութիւն», «Յունական արդի գրականութիւն» բաժինները հերթագայել են ամսաթերթի էջերում:

«Արդի հայ գրականութեան հետքերով» շաբթի 18 հոդվածների հեղինակը Մարգար Շարաբխանյանն է. այս հոդվածները լույս են տեսել ամսաթերթի 1972 թ. 1-ին համարից մինչև 1973 թ. 11-րդ համարը:

«Արեւելահայ գրականութիւն» շաբթը կազմել է Սոնա Հովհաննեսյանը՝ ըստ Մինաս Թեղլեոյանի «Դար մը գրականութիւն» հատորների: Շաբթի յոթ մասերը լույս են տեսել ամսաթերթի 1974 թ. համարներում՝ սկսած 4-րդ համարից: Նշվում է՝ «Ամփոփեց Սոնա Յովհաննեսեան»):

10. Տրոնտո այցելած նշանավոր մարդկանց հետ (Արամ Հայկազ, Պողոս Սնապյան, Հակոբ Կարապենց, Վահե Օշական, Մուշեղ Իշխան, Կարապետ Փոլատյան, Սիլվա Կապուտիկյան եւ այլք) հանդիպումների, նրանց հիշատակին նվիրված ձեռնարկների մասին պատմող էջերը շատ հետաքրքիր են, ինչպես նաև Հակոբ Օշականի, Եղուարդ Պոյաճեանի, Պարույր Սեւակի հիշատակին նվիրված հոդվածները:

Հավելեմ՝ «Սփիւոք» (Բեյրութ) շաբաթաթերթի 1972 թ. հունիսի 18-ի համարում տպագրված է Մարգար Շարաբխանեանի՝ Պարույր Սեւակի հիշատակին նվիրված հոդվածը:

11. Արա Պալիոզյանի ստորագրությամբ անգլերեն նյութեր կան ամսաթերթի՝ 1973-ի 5-րդ, 8-րդ, 12-րդ, 1974-ի՝ 1-2-րդ, 8-10-րդ, 12-րդ համարներում, իսկ 1974 թ. 6-7-րդ միացյալ համարում տպագրված է անգլերեն հոդվածը Պալիոզյանի հետ հանդիպման մասին:

12. Մամուլից կարելուք եւ հետաքրքիր էջեր կան:

Այսպես՝ «Արձագանգ»ի 1975 թ. 6-7-րդ եւ 8-րդ համարներում անդրադարձեր կան «Հայրենիք» օրաթերթի երկու խմբագրական հոդվածներին՝ «Կենսունակ Թորոնթոն հոգատարութեան կարօտ է» (օր-ամիս-տարի չի նշվում) եւ «Գանադահայութեան հետ» (հուլիս 11 1975 թ.): Այդ հոդվածներում արժեւորվում են կանադահայության ջանքը եւ ակնառու ձեռքբերումները, բայց տազնապի ահազանգ կա՝ «նորահաստատ գաղութը» ոչ միայն նիւթական միջոցների, այլև փորձառու մարդկանց օգնության կարիքն ունի:

Երկրորդ հոդվածը ավելի է խորացնում տազնապի շերտերը՝ անդրադառնալով սփյուռքահայության կյանքի երկու հակադիր եզրերին՝ «ազգային ինքնապահպանումի գաղափարին», որը «փրկութեան լաստ է» հայության համար, եւ «անձնատրութիւնը ինքնագոհութեան զգացումին», որը «ապաստերումի գաղիթափ մը»ն է:

Ամսաթերթի 1974 թ. 5-րդ համարում արտատպված է Էրեբունի թանգարանի մասին ծավալուն հոդված՝ «Սովետական Հայաստան» թերթից:

13. Շատ հետաքրքիր հոդվածներ կան արվեստի տարբեր ճյուղերի մասին:

Ամսաթերթի 1972 թ. 1-ին համարի հայերեն մասն ավարտվում է Տորոնտոյի «Յ. Մանուկեան» գրադարանի (բացվել է 1971 թ. հոկտեմբերին) գրքերի մասին հայտարարությունով: Նշենք, որ այս գրադարանի աշխատանքները միշտ եղել են ամսաթերթի խմբագրության աշխատակիցների ուշադրության կենտրոնում: Պահպանվել են նաև գրադարանի գրքերի մասին տվյալներով առանձին թերթիկներ, բազմաթիվ անդրադարձեր կան ընթերցողների համար կազմակերպված ձեռնարկների մասին:

1972 թ. 5-րդ համարում հրատարակված է «Յարութին Մանուկեան» գրադարանի գործունեության մասին հոդված:

1973 թ. 1-ին համարում «Պատասխան Ս. Սրային» խորագրի տակ տպագրված է Էլիզ Հասրճյանի «Հայ գիրքերու հանդէպ ծո՞ւռ եւ սխա՞լ մօտեցում» հոդվածը, որտեղ հայ գրքին առնչվող շատ լուրջ հարց է քննարկվում: Ս. Սրայը իսկապես ծուռ հայելու մեջ է տեսնում տորոնտոյահայության եւ հատկապես «Յարութին Մանուկեան» գրադարանի աշխատակիցների ջանքերը՝ հայ գրքի տարածման հարցում: Գաղտնիք չէ, որ սփյուռքահայերը ստիպված են ամեն օր հաղթահարել նորանոր խոչընդոտներ: Նա գրադարանի աշխատակիցների գործունեությունն անվանում է «մուրացկանութիւն», որին հակադրում է «Հայ գրականութեան բարեկամներու միութեան» գովաբանումը:

Համոզված եմ՝ Տորոնտոյի հայության ձեռքերումների կարելուր նախապայմանը գրքի նկատմամբ հարգանքն է (եւ ի՞նչ համեմատություն կարող է լինել մեր օրերում գետնանցումների աստիճաններին կուչ եկած գրքերի հետ ... ազատ ու անկախ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում): Գրքին նվիրված ձեռնարկներից անբաժան են ամենատարբեր ձեւաչափերով կազմակերպված հանդիպումները գրողների հետ. անունները թվարկելն անգամ դժվար է:

14. Ամսաթերթում «Նամակներ խմբագրութեան», «Ի՞նչ գրեցին մեզի» եւ «Ի՞նչ գրեցին մեր մասին» խորագրի տակ հետաքրքիր տվյալներ են հրատարակել՝ կապ հաստատելով ընթերցողների հետ:

«Արձագանգ»ի խմբագրական կազմի մասին հետաքրքիր տեղեկություններ կան Օննիկ Շարաբխանյանի Մարգար Շարաբխանյանի հոր «Կամաւոր բանակ» հոդվածում, որ տպագրված է ամսաթերթի 1976 թ. 12-րդ համարում: Հոդվածագիրն արձանագրում է կամավոր աշխատակիցների աշխատանքի մի քանի դժվարություններ, քանի որ ամսաթերթը «չունի (վճարովի) բաժանորդագրութիւն, նաեւ վճարովի պաշտօնեութիւն. կամաւոր աշխատաւոր, կամաւոր վճարող»:

Ներկայացնենք ամսաթերթի աշխատակիցներից մի քանիսին:

Սիմոն եւ Լեւոն Հասրճեանների ստորագրությամբ տպագրված են բազմաթիվ հոդվածներ, արձակ եւ թարգմանական էջեր՝ 1972 թ. 3-րդ համարում՝ «Ապրիլ 24-ը ազգային «գործիք» եւ «Հ. Ե. Դ.-ի Պատգամաւորական ժողովը» (ստորագրված է՝ Ս. Հ.), 5-րդ համարում՝ «Հանդիպում», 6-րդ համարում՝ «Ամառնային վարժարան», 7-րդ համարում՝ «Կէս լուրջ, կէս կատակ. Թորոնթահայ կատակերգութիւն», 11-րդ համարում՝ «Նուագախումբի Բ. Ձեռնարկը», 1972 թ. 12-րդ համարում՝ «Վայրագ բնութիւն», 1973 թ. 1-ին համարում՝ «Արձանագործը», 5-րդ համարում՝ «Անիծուած կածանը», 7-րդ համարում՝ «Հնդիկին օձը», 9-րդում՝ «Ամէնօրեայ ամառնային վարժարանի հանդիսութիւնը», 1974 թ. 1-2-րդ համարում՝ «Մե կատուն», (Էդգար Ալան Պո-ի պատմվածքը թարգմանել է Սիմոն Հասրճյանը), 3-րդ համարում՝ «Դէպի քաղաքականացում», «Մարդանման գաղութ» եւ «Մշակութային ձեռնարկ», 9-րդ համարում՝ «Հ. Ե. Դ.-ի անկիւն», 1975 թ. 1-ին համարում՝ «Որոշումը», (Հիու Կարնըր-ին թարգմ. է Սիմոն Հասրճյանը), 2-րդ համարում՝ «Աճպարարը», 6-7-րդ միացյալ համարում՝ «Մեր ամէնօրեան ու հանդէսը» հոդվածները:

Ամսաթերթի գործուն թղթակից Հակոբ Կետիկյանը տեղեկություններ է տալիս տարբեր ձեռնարկների մասին՝ 1972 թ. փետրվարի 26-ի «Գրական-արտասանական երեկոյ»ի (1972, №2), նույն տարվա ապրիլի 15-ին եւ 30-ին «Պաղտասար աղբար»ի ներկայացման մասին (1972 №4՝ «Վերջը»), «Ապրիլ 24-ի խոհեր» (1972, №3), «Պարոյր Մեւակի յիշատակին» (1972, №5), ««Արձագանգ»ի հանդիպումներէն» (1972, №8, ստորագրված է՝ Յ. Կ.), «Հանդիպում» (1972, №10), «Գործակցութեան ոգի» (1972, №11), «Լուծուած հարցը» (1973, №2), «Հ. Ե. Դ.-ի Պատգամաւորական ժողովի առթիւ» (1973, №4), «Հ. Օ. Մ.-ի դպրոցի պարախումբի ելոյթը» (1973 թ. 5-րդ համար), «Քաղաքական լուծում» (1974, №1-2 (միացյալ)):

Լուրեր Մասպանաձյանի հողվածներից հիշատակեմ մի քանիսը՝ «Փուտպոլիստներուն եւ հանդիսատեսներուն» (1972, №7), «Միջազգային 20-րդ ողիմպիականը» (1972, №8), ««Արձագանգ»ի Ա. Տարեդարձին առթիւ» (1973, №1), «Սերունդէ սերունդ» (1973, №3), «Մայիս 28-ի 55-ամեակի առթիւ» (1973, №4), «Եկեք ու տեսեք» (1973, №8), «Ողիմպիական խաղերէն վերջ» (1973, №9), «Հայրենիք եւ հայրենասիրութիւն» (1973, №11), Վարդան Մամիկոնյանի հիշատակին նվիրված «Ինկաւ, բայց յաղթեց» (1974, №1-2-րդ (միացյալ)), ««Արձագանգ»ի երրորդ տարուան սեմին» (1974, №1-2, (միացյալ)), «Անգութ բորենիներ» (1974, №3), «Մայիս 28-ի առթիւ» (1974, №4), «Անյեղի սկզբունքներ» (1974, №8), «Կարգապահութիւն» ծավալուն հողվածը (1975, №2 եւ №3), «Հայ երգն ու երաժշտութիւնը» (1975, №6-7 (միացյալ)):

«Արձագանգ»ի 1976 թ. 8-9-10-րդ միացյալ համարը նվիրված է Լուրեր Մասպանաձյանի հիշատակին: Այդ համարում տպագրված են Լուրեր Մասպանաձյանի «Հ. Յ. Դ.-ի դերը հայ կեանքին մէջ» հողվածը եւ Հրայր Մասպանաձյանի «Կենսագրական տողեր»ը՝ հոր մասին:

Գալուստ Պապյանը հանրաժանութ լուսանկարիչ էր եւ բարձրաճաշակ մտավորական: Նրա հրատարակած հողվածներից հիշատակեմ՝ «Խորհրդածութիւններ «Քօրրատօ»ի բեմադրութեան առիթով» (1974 , №11), «Հաւատամքի մը արձագանգը (1975, №1), 1975 թ. հոկտեմբերի 25-ին Մուշեղ Իշխանին նվիրված ձեռնարկի ժամանակ Գալուստ Պապյանի խոսքը՝ «Պատիւ ւ հաւատաւոր Իշխանին» (1975, №9): Առաջին հողվածին արձագանքել է Սոնա Հովհաննեսյանը «Գալուստդ բարի՛» (1975, №12) հողվածով: Նա դժգոհում է, որ Պապյանը տեղյակ չէ տորոնտահայության կյանքի դժվարություններին եւ կոչ է անում քննադատության փոխարեն միանալ նրանց, ովքեր ամեն օր հաղթահարում են նորանոր խոչընդոտներ ու փորձում կենդանի պահել հայ թատրոնի ոգին:

\*\*\*

Ամսաթերթի խմբագիրը՝ երջանկահիշատակ Մարգար Շարաբխանյանը (1937-2023), ստորագրել է՝ Մ. , Մ. Շ., համոզված եմ՝ նաեւ բազմաթիվ անստորագիր հողվածների եւ գեղարվեստական էջերի հեղինակն է: Խմբագրականների վերլուծությունն առանձին եւ ծավալուն քննարկման նյութ է: «Արձագանգ»ի 1972 եւ 1973 թթ. համարներում հրատարակված են Մարգար Շարաբխանյանի «Արդի հայ գրականութեան հետքերով» ծավալուն ուսումնասիրության 18 մասերը: Մարգար Շարաբխանյանի հեղինակած «Յունական արդի գրականութիւն» շարքն սկսվում է ամսաթերթի 1972 թ. 5-րդ համարում եւ շարունակվում 1973 թ. 5-րդ համարում:

Հայ գրողների մասին Մարգար Շարաբխանյանի հողվածները լույս են տեսել ամսաթերթի բազմաթիվ համարներում: Թվարկեմ՝ 1972 թ. 5-րդ համարում՝ «Երթ մահաբեր (Պարոյր Մեւակի մահուան տարելիցին)», 8-րդ համարում՝ «Հայ գրականութեան կորուստներէն» խորագրի տակ՝ «Խորհրդածութիւններ Նշան Պէշիկթաշլեանի մահուան առթիւ», 1973 թ. 1-ին համարում՝ «Նոր գրքեր» խորագրի տակ՝ «Կարթագէնի դուստրը», 2-րդ համարում՝ «Որակաւոր բանաստեղծներ» խորագրի տակ՝ «Նիկողոս Սարաֆեան», 1974 թ. 9-րդ համարում՝ «Շահան Շահնուր եւ իր սերունդը» հողվածները:

1974 թ. 1-2-րդ միացյալ համարի «Մամուլ: Միրելի ձայներ ... (Փուշերը եւ վարդերը՝ մամուլյ անդաստանին մէջ)» հոդվածը ստորագրված է՝ Մ., 6-7-րդ համարի «Գարաւան 74» խորագրի տակ «Դէպի լաւագոյնին ձգտող ձեռնարկ մը» հոդվածը ստորագրված է՝ Մարգար:

Մարգար Շարաբխանյանն օժտված էր բանաստեղծական շնորհով. 1973 թ. 6-րդ համարում «Յիշենք մեր հերոսները» խորագրի տակ «Խանասորի – 1897 – արշաւանքի առթիւ» հարգանքի ու խոնարհումի մի քանի տողերին հաջորդում է անստորագիր «Խանասորի արշաւանքը» բանաստեղծությունը: 1973 թ. 8-րդ («Հայ հերոսներուն»), 10-րդ («Քայլերգ») համարներում կան անստորագիր բանաստեղծություններ:

Հետաքրքիր է 1974 թ. 12-րդ համարի «Օրերուն հետ» խորագրի տակ «Ներածութիւն հայ քրիստոնէական գրականութեան» հոդվածը Գարեգին արքեպիսկոպոս Մարգիսյանի<sup>8</sup> նույնանուն անգլերէն գրքուկի մասին (ստորագրված է՝ Մ.):

Մի քանի օտար լեզուների լավ իմացությունը Մարգար Շարաբխանյանին օգնում էր հարստացնել ամսաթերթի բովանդակությունը հունարենից եւ իտալերենից կատարած թարգմանություններով: Այսպէս, ամսաթերթի 1972 թ. 7-րդ համարում տպագրված են «Գոնդանտինոս Գավաֆիս» հոդվածը եւ հուլյն գրողի «Քաղաքը» Մարգար Շարաբխանյանի թարգմանությամբ, 1973 թ. 5-րդ համարում՝ «Անտոնիոս Սամարագիս» հոդվածը եւ նրա «Յոյս կ'ուզուի» բանաստեղծությունը, 1974 թ. 5-րդ համարում՝ «Օտար բանաստեղծներ» խորագրով՝ «Գանատանթինոս Գավաֆիս (1863-1933)» հոդվածը եւ «Պարիսպներ», «Պահուրտած բաներ» ստեղծագործությունները, 1975 թ. 8-րդ համարում՝ «Երկու բանաստեղծութիւն «Նոպէլ» մրցանակաւոր յոյն բանաստեղծէն. Երկիրու Սէֆէրիս»: Հունարենից թարգմանությունների թագն ու պսակը եղավ Նիկոս Կազանձակիսի «Ճգնութիւն» խոհափիլիսոփայական երկի հայերէն հրատարակությունը, որի մասին Մարգար Շարաբխանյանն ընթերցողին ավետում է ամսաթերթի 1973 թ. 5-րդ համարի 29-րդ էջում, իսկ 9-րդ համարում «Միջագային գրականութիւն» խորագրով Մարգար Շարաբխանյանի ստորագրությամբ տպագրված է «Չեզարէ Փավէզէ» հոդվածը:

Ներկայացնեմ նաեւ Էլիզ Հասրըճյանի՝ տիկին Շարաբխանյանի (Շարաբխաններն ամուսնացել են 1975 թ. սեպտեմբերի 7-ին)՝ ամսաթերթում հայերէն ու անգլերէն հրատարակած հոդվածների ընդհանուր պատկերը:

Սկսեմ Ուիլյամ Սարոյանից. 1972 թ. 4-րդ համարում՝ թարգմանություն, 6-րդ համարում՝ «Գրքեր մեր մասին» անգլերէն հոդվածը, 7-րդում՝ հատված «Հայը և հայը» խոհագրությունից, 8-րդում եւ 11-րդ համարներում՝ անգլերէն հոդվածներ գրողի մասին:

1973 թ. 1-ին համարում տպագրված է «Պատասխան Ս. Սրապին» սուր հրապարակախոսական հոդվածը, 6-րդ համարում՝ «Հայաստանը Թորոնթոյի մէջ», 7-րդ համարում՝ «Գինովցի՛ր» բանաստեղծությունը (թարգմանություն է), 9-րդում՝ «Այս պատմութեան մէջ ո՞ր մէկն է ճիշդը», 10-րդում՝ «Չորս տարի Քիւրտիստանի լեռներուն մէջ» գրախոսությունը եւ «Գանատական գրականութիւն» խորագրով մի քանի թարգմանություններ, 11-րդում՝ «Հ.Յ.Դ. 83-րդ ամեակ», 12-րդ համարում՝ «Դաւաճանութիւն» եւ «Գանատական գրականութիւն» հոդվածները:

Ամսաթերթի 1974 թ. համարներում տիկին Էլիզի ստորագրությամբ տպագրված են՝ 1-2-րդ միացյալ համարում՝ «Ամերիկեան գրականութիւն», «Եւ նաւը սուլեց...» գրախոսականը, նաեւ անդրադարձ ՀՕՄ-ի ամենօրյա ամառային վարժարանի Ճաշկերույթին, 3-րդ համարում՝ «Հաղորդութիւն հայութեան հետ», 4-րդ համարում՝ «Հայկական իրականութեան նորոյթը Նոր աշխարհի ամերիկայում», «Հ. Ե. Դ. «Ս. Զաւարեան» ուխտի 10-ամեակի տօնակատարութիւն» եւ «Պատշգամը՝ սիմէնթէ տանիքներու վրայ» հոդվածները, 6-7-րդ համարում՝

<sup>8</sup> 1973-1977 թթ. Ամերիկայի Արեւելյան նահանգների եւ Կանադայի թեմի առաջնորդ, հետագայում՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ (1983-1994) եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա (1995-1999) Գարեգին Մարգիսյանն է (1932-1999):

«Ըսեմ ձեզի...» (թարգմանություն է), 8-րդ համարում՝ ««Մուսա լերան քառասուն օրերը» եւ ճամբորդակիցս» եւ «Տարեկան հանդէս» հոդվածները, 9-րդում՝ «Գանատական գրականություն», 10-րդում՝ «Գրական երեկոյ Եդուարդ Պոյաճեանի հետ» հոդվածը:

«Արձագանգ»ի 1975 թ. 2-րդ եւ 12-րդ համարներում տպագրված են տիկին Էլիզի «Գանատական գրականություն» հոդվածները, 3-րդ համարում՝ «60-ամեակի խորհուրդը», 8-րդ համարում՝ «Նոր աշխարհի հին սերմնացանները» գրախոսականը, 4-5 միացյալ համարում՝ «Ապրիլեան Եղեռնի յուշատօն Թորոնթոյի մէջ» եւ «Մինաս Թէօլէօլեան մեր մէջ» հոդվածները (տպագրված է նաեւ «Մինաս Թէօլէօլեանի մտքերէն»):

Ամսաթերթի 1976 թ. 1-2-րդ միացյալ համարում Էլիզ Շարայիանեան ստորագրությամբ տպագրված են «Հ. Ե. Դ» եւ «Հայ գրքի մեծարանքի ...» հոդվածները:

Հավելեմ՝ «Սփիւռք» (Բէյրութ) շաբաթաթերթի 1972 թ. հուլիսի 2-ի համարում տպագրված է Փիթեր Գոլիերի (Ֆրեզնո) «Ուիլեամ Սարոյեան» հոդվածն Էլիզ Հասրըճյանի թարգմանությամբ, իսկ 1974 թ. հոկտեմբերի 20-ի համարում՝ նրա «Հայկական իրականութեան նորոյթը՝ Նոր Աշխարհի ավերուն» հոդվածը:

\*\*\*

Սա «Արձագանգ» ամսաթերթի առատ հունձքի սոսկ մոտավոր պատկերն է:  
Հուսամ՝ պակասը լրացնելու հնարավորություն կունենամ:

## SUMMARY

From 1672 to 1976 in Toronto the AYF “Simon Zavarian” chapter published the “Ardzagank” (Echo) monthly newspaper. The 58 issues were presented in 48 volumes: 8 volumes had two issues and one had 3 issues.

Many exceptional articles were published in this monthly, which can still interest not only the readers but also the specialists dealing with issues of the Armenian Diaspora and the press. The rich material presented in this monthly is the diary of five years of the lives of Armenians in Toronto. Many names were immortalized on the pages of “Ardzagang.” Due to their efforts and devotion the publication of the newspaper was realized without paid subscription and sizable financial means.

The literary pieces were chosen meticulously from Mesrop Mashtots to Paruyr Sevak, materials representing prominent figures of the world culture and Diaspora, book reviews, interpretations of interesting aspects of local and Armenian life.

All issues of the monthly newspaper are notable for their rich content.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Արձագանգ» (Տորոնտո) ամսաթերթ, 1972 թ. 1-ին, 3-րդ եւ 11-րդ համարներ:
2. «Արձագանգ» (Տորոնտո) ամսաթերթ, 1973 թ. 11-րդ համար:
3. «Արձագանգ» (Տորոնտո) ամսաթերթ, 1974 թ. 1-2-րդ, 5-րդ եւ 12-րդ համարներ:
4. «Արձագանգ» (Տորոնտո) ամսաթերթ, 1975 թ. 9-րդ եւ 10-11-րդ համարներ:
5. «Հայրենիք» (Բոստոն) օրաթերթ, 1974 թ. մարտի 10-ի համար:
6. «Յառաջ» (Փարիզ) օրաթերթ, 1971 թ. սեպտեմբերի 11-ի եւ 12-ի համարներ:
7. «Սփիւռք» (Բէյրութ) շաբաթաթերթ, 1971 թ. նոյեմբերի 21-ի համար:

ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԳԾԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ  
ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ «ԱՇԽԱՏԱՆՔ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷԶԵՐՈՒՄ  
(1910-1915 ԹԹ.)

**Բանալի բառեր`** Զմյուռնիա, ազգային դիմագիծ, հայկական մամուլ, «Աշխատանք» թերթ, հայկական կրթօջախներ:

**Keywords:** Smyrna, national identity, Armenian periodical, “Ashkhatank” newspaper, Armenian educational centers.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության հայաշատ բնակավայրերում տարվող պետական հատուկ մշակված հայահալած քաղաքականության պայմաններում հայության համար առաջնահերթ խնդիր էր ազգային դիմագծի պահպանումը: Այդ նպատակին էին ծառայում ազգային-հոգևոր, կրթական և մշակութային բոլոր կառույցներն ու հաստատությունները: Այս գործընթացն ուներ իր յուրահատկությունները մասնավորապես զմյուռնիահայության կյանքում, ինչը պայմանավորված էր տվյալ գաղթօջախի ձևավորման և կենսապահովման առանձնահատկություններով [Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր, 2006, 155-156]: Դրանում ի սկզբանե սեփական կնիքն էր դրել տեղի հայկական մամուլը [Խառատյան, 2022, 425-429], որը փորձել էր հասարակական կարծիքի ձևավորման միջոցով հասնել հիշյալ հիմնահարցի լուծմանը: Դրան անմասն չէր մնացել նաև Զմյուռնիա քաղաքում 1910-1915 թվականներին հրատարակված «Աշխատանք» պարբերականը: Այն լույս է տեսել չորեքշաբթի և շաբաթ օրերին «Քեշիշյան» տպարանում: Հիմնական աշխատակիցները ժամանակի հայտնի հասարակական-քաղաքական գործիչներն ու մտավորականության ներկայացուցիչներն էին` Է. Ակնունին, Ավետիս Ահարոնյանը, Մկրտիչ Պարսամյանը, Մարգպետը, Համբարձում Համբարձումյանը, Վահե Տիճյանը և այլք [Աշխատանք, 1910, №11]: Պարբերականի տերը և տնօրենը Սեդրակ Թոքաճյանն էր:

**«Աշխատանք» թերթի մտահոգությունների առաջին տեղում հայկական  
Դիմագծի պահպանման եվ ազգային կրթօջախների խնդիրներն էին**

1908-1914 թվականներին Զմյուռնիայում և Կ.Պոլսում հրատարակվել է ավելի քան 120 պարբերական, իսկ Արևմտյան Հայաստանում ու Կիլիկիայում` շուրջ 30 թերթ և ամսագիր [Հայ պարբերական մամուլի պատմություն 1900-1922, 2017, 213-214]: Հենվելով զմյուռնիահայ մամուլի ավանդույթների վրա, որոնք ձևավորվել էին դեռևս 19-րդ դարի 40-ական թվականներից, «Աշխատանքը» դարձել էր դրանց շարունակողը և արժարժեք էր մեր ժողովրդին հուզող տարաբնույթ խնդիրներ, անդրադարձել էր իշխանությունների հայահալած գործելակերպին, արևմտահայության հանդեպ թույլ տրվող անիրավություններին և թալանին, սոցիալական պայմաններով պայմանավորված արտագաղթին հայրենի բնակավայրերից, Հայկական հարցի զարգացումներին, ընթերցողների մշակութային հետաքրքրություններին և բազմաթիվ այլ հարցերի: Խմբագրակազմի համար այդ ամենը կարճես դարձել էր հայեցի կրթության, ազգային ավանդույթներին հավատարիմ մնալու, հայության դիմագիծը պահպանելու,

ներքին կյանքն առավելապես ինքնուրույն վարելու և հայ մնալու առաջնային նպատակին հասնելու միջոց:

Շեշտենք, որ այս թերթի դիմագիծը և որդեգրած քաղաքականությունը պայմանավորված էին հրատարակության ժամանակահատվածով, որն ընդգրկում էր 1908 թվականի երիտթուրքական հեղաշրջմանը և իշխանազավթմանը հաջորդող տարիներից մինչև Հայոց ցեղասպանության սկզբնական փուլն ընկած շրջանը: Այդ տարիներին առերևույթ թույլ էր տրված նաև մամուլում արտահայտել տեսակետներ ու կարծիքներ, ներկայացնել հանրային տրամադրությունները պետական կառույցների գործունեության և ծրագրերի վերաբերյալ: Չպետք է մոռանալ, որ միևնույն ժամանակ մամուլի նյութերը, գրական ստեղծագործություններն անցնում էին գրաքննության ծանր մամուլիչի տակով:

«Աշխատանքի» համար ռազմավարական նշանակություն ունեին ազգային դիմագծի պահպանման, աճող սերնդի հայեցի դաստիարակության և կրթության խնդիրները: Ընդ որում, խմբագրակազմը դրանք փոխկապակցված էր համարում ու հայկական դիմագծին հավատարիմ մնալու հարցերին անդրադառնում էր կրթադաստիարակչական թեմայի շրջանակում: Չկար որևէ համար, որտեղ խմբագրությունն առնվազն երկու հոդված չնվիրեր հիշյալ հարցերին: Անգամ 1915 թվականին Հայոց ցեղասպանության շրջանում թերթում դրանք կրկին առաջնային էին:

Ի տարբերություն ժամանակի արևմտահայ այլ պարբերականների՝ «Աշխատանքը» քննարկում էր ոչ թե ուսուցիչների ցածր աշխատավարձին կամ նյութական անձուկ կացությանն առնչվող խնդիրները, այլ ազգային կյանքում նրանց դերի ու պատասխանատվության հարցերը [Աշխատանք, 1913, №2]: «Գավառի ուսուցչության շուրջ» թղթակցության հեղինակ Վահե Տիճյանի կարծիքով՝ մի շարք բնակավայրերում ուսուցչի կոչմանն անհամապատասխանությունն էր արևմտահայ գավառի ուսուցիչների արգահատելի դիրքի պատճառը [Նույն տեղում]: «Դպրոցէն կերպով մը իյնալու վախէն ահաբեկ, չգէտ Թաղական կամ Ուսումնական խորհուրդներու և Հոգաբարձուներու բերանէն կախուող, քծնող ուսուցիչներու չափազանց շատ գոյութիւնը գաւառու մէջ ամենամեծ պատճառն է այս բարոյական ողբալի սնանկութեան», - գրում էր Վ.Տիճյանը [Նույն տեղում]: Ուսուցիչ-ուսուցչուհիները, եթե համարձակվում էին ընդվզել տիրող անառողջ մթնոլորտի, դպրոցներում կիրառվող կամայականությունների և անօրինությունների դեմ, ապա ենթարկվում էին անարգանքի ու հալածանքի: Ուսուցիչ բառը շատ վայրերում հոմանիշ էր համարվում հալածանքի և զրկանքի առարկա բառերին [Նույն տեղում]: «Աշխատանքը» բերում էր փաստեր, երբ ուսուցիչները պատժվում էին իրենց համարձակ պահվածքի համար [Նույն տեղում]: Թերթը Ջմյունիայի մեկից ավելի վարժարանների ու դպրոցների «ընկած» վիճակի համար պատասխանատու էր համարում հիմնականում Իզմիրի հոգևոր առաջնորդ Մատթեոս Ինճյանին: Մատթեոս ծայրագույն վարդապետ Ինճյանը ծնվել էր 1878 թվականին Կ. Պոլսում: Նախնական կրթությունն ստացել էր պատրիարքարանի, ապա Ղալաթիայի ազգային կենտրոնական վարժարաններում: 1904 թվականին նա դոկտորի աստիճանով ավարտել էր Փարիզի իրավաբանական համալսարանը: 1909 թվականին ձեռնադրվել էր կուսակրոն արեղա՝ հետագայում դառնալով ծայրագույն վարդապետ [Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, 2001, 951]: Նա, ըստ այդ հրապարակումների, ամեն ինչ անում էր, որ կրթօջախներից անձնական շահույթ ունենար [Աշխատանք, 1913, №3]:

Պարբերականի համար անընդունելի էր Հռիփսիմյան օրիորդաց վարժարանում սովորական դարձած այն երևույթը, որ ավարտական քննությունների ժամանակ աշակերտուհիներն իրարից արտագրում էին հանձնարարությունների պատասխանները: «Հռիփսիմեանը իր ամբողջ ուսուցչական կազմին մէջ մէկ հատիկ վարժուհի իսկ չունի՝ Իզմիրի համար զարգացած հայուհիներ պատրաստելու կարող», - գրում էր «Աշխատանքը»՝ ավելացնելով, թե կանանց դաստիարակությունը և կրթությունն այն ներուժ կռվաններն էին, որոնց վրա բարձրանում էր ազգի գոյության վերնաշենքը [Աշխատանք, 1913, №5]:



Հայեցի դիմագծի պահպանման գործում ազգային կրթօջախների դերի արժևորման տեսանկյունից կարևոր էր Մելքոն Հովսեփյանի «Մի ձեռքը ծափ չի տար. մանկավարժական հարցեր» երկմասանի հոդվածը [Աշխատանք, 1913, №25-26]: Հեղինակն այդտեղ իրավիճակը շտկելու ուղիներ էր մատնանշում՝ գրելով, թե դպրոցն, առանձին վերցրած, ոչինչ չէր կարող անել. «Մեկ ձեռքը ծափ չի տար, և անհրաժեշտ է ընտանիքի աջակցությունը» [Աշխատանք, 1913, №26]: Ըստ այդմ՝ դպրոցը և ընտանիքը պետք է ձեռք ձեռքի տային և միասին զբաղվեին երեխաների կրթության ու դաստիարակության գործով: «Աշխատանքը» նշում էր, որ կրթությունը ազգային դիմագիծը պահող կենսական անհրաժեշտություն էր հայության համար [Աշխատանք, 1914, №55]: Ներկայացնում էր գավառում հաջողության հասած ազգային վարժարանների օրինակներ, ի թիվս որոնց՝ Վանի Սանդուխտյան օրիորդաց դպրոցի 40-ամյա փորձառությունը [Աշխատանք, 1914, №52]: «Աշխատանքը» մինչև վերջին համարը անդրադարձել էր այս թեմային: Ասվածի վկայությունը 1915 թվականի գրեթե բոլոր համարներում առկա վերլուծական հոդվածներն էին:

Ներկայացված հիմնախնդիրներին զուգահեռ՝ «Աշխատանքը» փորձում էր հրապարակումների միջոցով բացատրել, որ ազգային լիարժեք կրթություն ստանալու և հայկականությունը պահելու համար անհրաժեշտ էր բարեփոխել երկրի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանները: «Հայ ժողովուրդը ենթարկուած է քաղաքական անլուր ճնշումներու, հայահալած ու ջնջող վարչութեան մը, իրաւագրկութեան ամենէն գռեհիկ տեսակին, ասոնք մէկ կողմէն, իսկ միւս կողմէն քրդական զինուած հրոսակներու դէմ ան կանգնած է բոլորովին անպաշտպան և անզէն», - գրում էր պարբերականը [Նույն տեղում]: Դիմում էր նաև ընթերցողներին, որ նրանք գործադրեին բոլոր միջոցները՝ հայրենիքը չլքելու և ազգային դիմագիծը պահպանելու համար:

### **«Աշխատանքը» կարեվորել էր ազգային համախմբման եւ Միասնական պայքարի դերը հայեցի դիմագծի պահպանման գործում**

Թերթն անդրադարձել էր արտագաղթի և բնօրրանի դատարկման կործանարար հետևանքների դեմ պայքարելու նպատակով 1913 թվականի ամռան վերջին Ջմյուռնիայի հայ քաղաքական երեք կուսակցությունների («Դաշնակցութեան Իզմիրի Կոմիտէի, Հնչակեան Իզմիրի մասնաճիւղի, Սահմանադիր-Ռամկավար ակումբի») մի շարք խորհրդակցական ժողովներից հետո ստեղծված միջկուսակցական համերաշխության մարմնի՝ «Հայկական դատի շուրջ միասնաբար պայքարելու համար» իրականացվող աշխատանքներին [Աշխատանք, 1913, №19]: Նրանք դա հիմնավորում էին «քաղաքական ներկայ բացառիկ կացութեամբ և մանաւանդ խրատուած այն դառն փորձերէն, որոնք անցեալին մէջ այնքան ոյժեր վատնել տուին» [Նույն տեղում]:

«Աշխատանքը» տպագրել էր Իզմիրահայության համերաշխության մարմնի ծրագիրը [Աշխատանք, 1913, №28], որտեղ մանրամասն շարադրված էին նաև այդ կառույցի նպատակները: Հիշյալ մարմինը ձգտելու էր հաշտարար եղանակով լուծել տարածաշրջանում ծագող ազգային վեճերը, նպաստել համերաշխության մթնոլորտի պահպանմանը և այդ կերպ օգտակար լինել ազգի կենսական շահերին [նույն տեղում]: Թերթը նաև լուսաբանել էր Ջմյուռնիայի Միջկուսակցական համերաշխության մարմնի աշխատանքները: Հրապարակումներից պարզ էր դառնում, որ անպտուղ էին մնում ազգային ուժերը համախմբելու ջանքերը, և այդ կառույցը դատապարտված էր անգործության [Աշխատանք, 1913, №23]:

«Աշխատանքը» անբարենպաստ և կործանարար էր համարում այդ իրավիճակը, քանզի գիտակցում էր, որ թեև Հայկական հարցի լուծման համար նպաստավոր (մինևնույն ժամանակ վտանգավոր) պայմաններ էին ստեղծվել, բայց կառավարող «Իթթիհատ վե թերագգ» կուսակցությունը չէր հանդուրժում այլախոհությունը և ազգերի ինքնավարությունը, առաջնորդվում էր «միատիրական անյազ ախորժակով» [Աշխատանք, 1913, №25]: Հոդվածներից մեկում

հայությանը կոչ էր արվում լինել աչալուրջ [Աշխատանք, 1913, №29], որովհետև բարդ էր Հայկական հարցի լուծման գործընթացը. տարբեր պետություններ այստեղ հետապնդում էին իրենց շահերը: Հողվածագրի կարծիքով՝ հայ ժողովրդին մնում էր ապավինել իր իսկ ուժերին և ինքնօգնության դիմել [Նույն տեղում]: Է. Ակնունին, օրինակ, հայ հանրության ուշադրությունը հրավիրում էր մտահոգիչ այն հանգամանքների վրա, որոնք բարդացնում էին Հայկական հարցի լուծման գործընթացը և խանգարում էին սեփական հայրենիքում հայ մնալուն: «Այժմ մի կողմից թիրքական սահմանների նւազեցումը և պետական քաղաքականութեան ձախողանքը, իսկ միւս կողմից եւրոպական շահերի նոր դասաւորումը հայկական դատը դարձրել են օրվան մեծ խնդիրը, այն կեղրոնական կէտը, դէպի որը իր հայեացքն է սեւեռած ոչ միայն հարեւան Ռուսիան, այլև հեռաւոր Գերմանիան, մի հարց, որ իր համեստութեամբն հանդերձ՝ եւրոպական շահերը շօշափելու գաղտնիքն ունի», - կարծում էր Ակնունին [Աշխատանք, 1913, №17]: Նա առաջարկում էր աշխարհաքաղաքական այդ կարևոր ժամանակահատվածում ուժերը չվատնել մանր-մունր կենցաղային խնդիրների վրա, այլ՝ համախմբվել և միասնաբար գործել [Նույն տեղում]:

Թերթում ազգային համախմբման անհրաժեշտությունը հատկապես շեշտվում էր՝ 1913 թվականի կեսերից սկսած: Բերենք բնորոշ օրինակ: «Երեսփոխանական ընտրությունները և հայերը» հարցազրույցում Է. Ակնունին Տիգրան Զավենի հետ քննարկում էր Պատրիարքարանի՝ Բ. Դուռ ներկայացրած թագիրում երեսփոխանական ընտրությունների վերաբերյալ արևմտահայության պահանջները. «Մենք պահանջած էինք համեմատական ներկայացուցչություն և հայ երեսփոխաններու ընտրությունը հայ ժողովրդին կողմէն: Կառավարական կուսակցությունը հայերու թիւին համաձայն երեսփոխաններ չկրնալով ապահովել, ատոր պատասխանատուությունը ձգած է իալամ ընտրողներուն վրայ: Այս դեպքում ցնորք մը պիտի ըլլայ ընտրական իրավունքը», - փաստում էր Ակնունին [Աշխատանք, 1913, №46]: Նա իրավացիորեն պնդում էր, որ Իթթիհատի կողմից նշանակված հայ երեսփոխանները կլինեին ա՛յդ կուսակցության և ոչ թե հայ ժողովրդի ներկայացուցիչները Օսմանյան Թուրքիայի խորհրդարանում: Բնական էր, որ հայերը պահանջում էին իրենց ձայներով կատարել հայ պատգամավորների ընտրությունը: Քանի որ Թուրքիայում 1913 թվականին մեկ երեսփոխանը 50.000 անձի ներկայացուցիչն էր, իսկ «Աշխատանքի» տվյալներով՝ այդ օրերին այդ երկրում 2.000.000 հայ էր ապրում, հայերը պահանջում էին քսան երեսփոխան օսմանյան խորհրդարանի համար [նույն տեղում]: Արևմտահայությունն իր քաղաքական պայքարը կազմակերպել էր քաղաքակիրթ եղանակներով, այն է՝ խորհրդարանում հայ պատգամավորներ ունենալու նպատակով թուրքական կուսակցությունների հետ համագործակցելու և տարածաշրջանում հետաքրքրություններ ունեցող պետությունների հետ բանակցելու միջոցով: Անգամ պայքարի այս ճանապարհն արևմտահայության դեմ ավելի էր գրգռել թուրքական իշխանություններին, որոնք 1913-1914 թվականներին արդեն բացահայտ կերպով սկսել էին սպառնալ հայերին, ընդ որում՝ ոչ միայն խոսքով, այլև կոնկրետ ջարդերով: «Աշխատանքում» այդ կարգի սպառնալիքների բազմաթիվ օրինակներ կային: Օրինակ՝ թերթի Վանի թղթակից Ա. Հրահատը տեղեկացնում էր, որ Հայոց ձորի Անգո գյուղի մոտակայքում երկու հայի և երկու քրդի միջև ծագած զինված միջադեպից հետո թուրք ոստիկանները ազատ էին արձակել քրդերին և ձերբակալել էին ոչ միայն այդ երկու հային, այլև Անգո գյուղի ևս տասնյոթ հայ բնակիչների: Երբ անգոցիները բողոքով դիմել էին Հայոց ձորի թուրք մյուտիքին, նա պատասխանել էր սպառնալիքով. «Հայե՛ր, ձեր բոլոր ջանքն է, որ Ռուսիան միջամտե, բայց գիտցե՛ք, որ այդ պարագային ձեզմե՛կ ոչ մեկը ողջ չպիտի թողունք» [Աշխատանք, 1913, №15]:

Խուճապի մթնոլորտ էր տիրում Արևմտյան Հայաստանում՝ 1913 թվականի վերջերից սկսած: Թերթը վկայում էր, թե ինչպես էին արևմտահայերը «գլուխն առած՝ խուճապով խոյս տալիս հայրենի աշխարհից» [Աշխատանք, 1913, №20]: Հայրենիքը ճգնաժամի մեջ էր, իսկ նրանք հեռանում էին, լքում էին հայրենի աշխարհը, երբ անհրաժեշտ էր համախմբել ուժերը.

այսպես էր կարծում հոդվածի հեղինակ Տարազիրը: Նա համոզված էր, որ այս դեպքում հայրենիքն իրավունք ուներ ասելու. «Փախեք դուք, բոլոր անարիներդ, բոլոր վատերդ: Հայ աշխարհի փրկության մեջ դուք դեր չունիք: Փախե՛ք, միայն զգոյշ, մի՛ անցեք այն նուիրական վայրերով, ուր հանգչում են Պետոներն ու Մարտիկները, Աւետիսեաններն ու Վազգէնները, Սերոբ ու Գէորգ Չաուշ, Արաբո ու Տարօնի Առիծ Սերոբ իր զոյգ կորիւններով ու բոլոր նրանք՝ անյայտ ու յայտնի, որոնք մի օր ընկան ձեզ համար, ձեր ճակատից ստրկութեան ամօթը, ձեր թիկունքից բռնութեան անարգ բեռը վերցնելու համար» [Նույն տեղում]: Հայրենիքը ծանր պահին լքողներին Տարազիրը դասալիք էր համարում: Միննույն ժամանակ «Արտագաղթի առիթով» հոդվածում է. Ակունին դիմում էր տարագրված հայերին. «Հայրենիքը ձեզ է սպասում, վերադարձեք: Դարձը կեանքն է Վաթանի, փախը՝ սկիզբը նրա մահուան» [Աշխատանք, 1913, №21]: Քաղաքական նման հայացքներ ունեցող խմբագրակազմը, պարզ է, որ 1915 թվականին նույնպես պիտի շարունակեր պնդել, թե հայրենիքը չպիտի լքել, եթե այնտեղից թուրքական իշխանությունները քեզ բռնի չէին տեղահանել կամ կոտորել:

1915 թվականին «Աշխատանքը» կոչ էր անում Զմյուռնիայի գավառի բնակիչներին օգնել Հայոց ցեղասպանությունից մազապուրծ եղած իրենց հայրենակիցներին ամեն տեսակետով: Հոդվածներից մեկում նշվում էր, որ Իզմիրի «Աղքատխնամ» կազմակերպությունը չէր մտածում օգնության ձեռք մեկնել գավառի հեռավոր անկյուններում թաքնվող անտերանտիրական հայերին, որոնցից շատերը մի կերպ գոյատևում էին սարերում ու ձորերում [Աշխատանք, 1915, №96]: «Զո՞վ մեղադրենք» հարցով էր «Աշխատանքը» դիմում ընթերցողներին՝ ներկայացնելով նրանց անտարբերությունը և խստասրտությունը, քանի որ մի կտոր հաց չէին տալիս սոված որբերին ու այրիներին [Նույն տեղում]:

«Աշխատանքը» մինչև 1915 թվականի՝ մեզ հասած վերջին համարները բարձրացրել էր ազգային դիմագիծը չկորցնելու և բռնագավթված հայրենիքում հայ մնալու խնդիրները:

Ամփոփելով՝ կարելի է փաստել հետևյալը.

- Զմյուռնիայի «Աշխատանք» պարբերականն իր հրատարակության ողջ ընթացքում բարձրաձայնել էր ազգային միասնության անհրաժեշտության մասին՝ այն դիտարկելով իբրև օսմանյան տերության մեջ հայկական դիմագծի ու հայապահպանության հիմնական և անհրաժեշտ միջոց,
- Թերթը ողջունել էր 1913 թվականին Զմյուռնիայում գործող հայ ավանդական կուսակցությունների մասնաճյուղերի միասնական գործելու նախաձեռնությունը, թեև շուտով արձանագրել էր գործնականում դրա ձախողման փաստը, ինչը կործանարար էր համարել հայության համար ստեղծված աշխարհաքաղաքական անբարենպաստ ու ցեղասպանության վտանգով լի պայմաններում,
- պարբերականն առավելապես ազգային կրթությունն էր համարել հայեցի դիմագիծը չկորցնելու կռվան, ինչով էլ պայմանավորված էր եղել խմբագրակազմի առանձնակի մոտեցումը այդ թեմայի նկատմամբ,
- «Աշխատանքի» վերլուծական հոդվածներում և խմբագրականներում երբեմն տրվել էին ծայրահեղ գնահատականներ՝ դրանցում բարձրացվող համահայկական և ներհամայնքային խնդիրների վերաբերյալ, թեև պետք է փաստել, որ հիմնականում արդարացված ու փաստարկված էին առավելապես չեզոք դիրքորոշումներ որդեգրած այս պարբերականի մտահոգությունները մասնավորապես ազգային դիմագծի պահպանման առումով:

## SUMMARY

The core concerns of “Ashkhatank” newspaper of Smyrna were issues on national identity preservation in Ottoman Turkey. The periodical intertwined them with Armenian upbringing and national education issues, and national education viewed as a necessary pre-requisite to remain

Armenian. The newspaper referred to these issues in the field mostly in the frame of educational and upbringing problems.

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Խառատյան Ա. Զմյուռնիայի և Էգեյանի առափնյակի հայկական այլ գաղթօջախները (XVI-XIX դ. I կես), Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, 533 էջ:
2. Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր, հ.1, Կահիրե, 2006, 701 էջ:
3. Հայ պարբերական մամուլի պատմություն 1900-1922, հ. 2, Երևան, ԳԱԱ պատմության ինստիտուտի հրատ., 2017, 786 էջ:
4. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գ.8 (Ը), Երևան, Հայաստան, 2001, 972 էջ:
5. «Աշխատանք», Իզմիր 1910, թիվ 11, 1913, թիվ 2, 3, 5, 15, 17, 19, 20, 21, 23, 25, 26, 28, 29, 46, 1914, թիվ 52, 55, 1915, թիվ 96:

**ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

**Բանալի բառեր`** Ռումինիայի հայ համայնք, հայ մամուլ, «Հայ մամուլ» շտեմարան, սփյուռքահայ տպագիր-մշակութային ժառանգություն:

**Keywords:** Armenian community of Romania, Armenian periodicals, “Armenian Continuing Recourses” database, printed-cultural heritage of Armenian Diaspora.

Սույն հոդվածի նպատակն է լուսաբանել ու արժևորել Ռումինիայի հայ մամուլը, դրա դերն ու առաքելությունը, ռումինահայ համայնքի կյանքում արձարձված թեմաները և հարակից այլ հարցեր: Պատմական անդրադարձ է կատարվել նաև նշյալ երկրի հայ համայնքին:

Հոդվածում առաջադրված խնդիրներն են ռումինահայ մամուլի ազգապահպան դերի և նշանակության կարևորումը հայոց ինքնության, լեզվի, մշակույթի և պատմության, ինչպես նաև այդ համայնքի ու Մայր հայրենիքի միջև առնչությունների ու փոխգործակցության տեսանկյունից:

**Հայ սփյուռք. Ռումինիայի հայ համայնքը**

Դարերի ընթացքում հայերի, ինչպես և այլ ժողովուրդների արտագաղթը հայրենիքից պայմանավորված է եղել երեք հիմնական գործոններով` տնտեսական, կրոնական և քաղաքական, որոնք ինքնուրույն պետականության բացակայության պայմաններում մշտապես ուղեկցվել են օտարազգի իշխանությունների կողմից իրականացվող բռնաճնշումներով և հալածանքներով [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 7]:

«Հայկական պետութիւնք հնագոյն ժամանակներէն վեր ներքին Ասիայէն եւ Ափրիկէն եկող ազգայնութեանց ասպարեզ էին: Մղուլք, Եգիպտացիք, Պարսիկք, Տաճիկք եւ Թաթարք արշաւեցին այս երկիրներն, աւար առին, աւերեցին եւ նաեւ ատեն ատեն տիրապետեցին» [Տան, 1891, 1]: Հայ համայնքները դարավոր պատմություն ունեն: Նրանց առաջացումը սերտորեն կապված է մեր ժողովրդի պատմական ճակատագրի հետ: Հանրահայտ ճշմարտություն է, որ հայ ժողովուրդը համաշխարհային նշանակություն ունեցող մշակութային արժեքներ է ստեղծել ոչ միայն իր Մայր հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս, աշխարհի գրեթե բոլոր երկրներում [Գասպարյան, 1962, 3]:

Ռումինիայի հայկական գաղութը Եվրոպայում հնագույններից է: Ենթադրվում է, որ Բյուզանդական կայսրության կազմակերպած բռնագաղթերի հետևանքով արդեն 5-12-րդ դդ. հայերի հոծ զանգվածներ են բնակեցվել Ռումինիայի տարածքում: Ակքերմանում գտնվել է 967 թ. թվագրված մի արձանագրության բեկոր, որը նույնպես վկայում է հայերի գոյությունը Ռումինիայում` նախքան Բագրատունիների թագավորության անկումը [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 440]:

Հայերի առաջին գաղթը Ռումինիա դարերի պատմություն ունի: Առաջին մեծ գաղթը կապված է Բագրատունիների թագավորության և Անիի անկման հետ և հայտնի է «Անիի գաղթականություն» անունով [Գասպարյան, 1962, 203]:

Ռումինիայում հայերի վաղեմի և սովոր բնակության վկայությունն են հայկական բազմաթիվ տեղանունների, երբեմնի հայաշատ գրեթե բոլոր քաղաքներում հայկական թաղամասերի ու փողոցների առկայությունը: Ռումինիայում հայերի հաստատման պաշտոնական տարեթիվը համարվում է 1350 թ.:

Մեծ թվով հայեր Ռումինիա են եկել, երբ թուրքերը գավթել են Կ.Պոլիսը (1453 թ.) և Ղրիմը (1475 թ.) [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 440]:

Ռումինահայ գաղութը կրկին համալրվել է 1894-1896 թթ. համիդյան ջարդերի, 1909 թ. Ադանայի կոտորածի և 1915 թ. Մեծ եղեռնի հետևանքով: Հայերի վերջին խոշոր գաղթը Ռումինիա տեղի է ունեցել 1922 թ., երբ քեմալական զորքերը կոտորել են Ջոնիոնիայի քրիստոնյա բնակիչներին [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 441]: Ըստ հանրագիտարանի տվյալների Ռումինիայում բնակվում է շուրջ 2.5 հազար հայ: Հայեր են բնակվում Բուխարեստում, Բոտոշանում, Բրբիլայում, Գեռլայում, Գալացում, Եդիսաբերուպոլսում, Հայաքաղաք (այժմ՝ Դումբրվենի), Կլուժ-Նապոկայում, Կոնստանցայում, Կուրտեա դե Արձեշ քաղաքում (սկզբնական անվանումը՝ Արձեշ), Յասսիում, Պիտեշտիում, Ջուրջովում, Մեպլիզում, Սիրետում, Սուչավայում, Տրբոու Օկնայում, Տուլչայում: Ռումինահայ համայնքում գործում են նաև հայկական եկեղեցիներ՝ Բոտոշանի Ս. Երրորդություն եկեղեցին, Ռոմանի Ս. Աստվածածին եկեղեցին, Ս. Գրիգոր Լուսավորիչ մատուռը Բուխարեստի հայկական գերեզմանատանը, Սուչավայի Ս. Օգսենտ (Ջամկա) վանքը, Տուլչայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Գեռլայի Ս. Երրորդություն մայր տաճարը, Մեպլիզի Ս. Երրորդություն եկեղեցին, Ջուրջովի Ս. Աստվածածին եկեղեցին, Պիտեշտիի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, Յասսիի Ս. Աստվածածին եկեղեցին, Բուխարեստի Ս. Հրեշտակապետաց մայր տաճարը [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 442-450]:

«Բուքրեշի մեջ հայերը 1581-են սկսյալ իրենց եկեղեցին ունեին կաթոլիկ հայերուն հետ ընկերակցովի» [Սիրունի, 1966, 47]: 1927 թ. ռումինահայոց թեմի առաջնորդարանին առընթեր հիմնադրվել է Ռումինահայ կենտրոնական մատենադարան-գրադարան ու թանգարան [Գալփագեան, 2021, 6]:

Ռումինահայ համայնքներում եկեղեցիների հետ հիմնվել են նաև դպրոցներ: Հայկական դպրոցներ են գործել Յասսիում (Հայկազյան), Ֆոկշանում (Ղևոնդյանց և Հռիփսիմյանց), Ռոմանում (Սողոմոնյան), Գալացում (Մահակ-Մեսրոպ), Բագարջիկում (Մամիկոնյան): Բուխարեստում առաջին հայկական դպրոցը բացվել է 1800 թ.: Հայտնի է Յասսիում հիմնված գիշերօթիկ դպրոցը (Գարագաշի դպրոց), նախակրթարան մանկապարտեզը [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 450]: Ռումինահայ շրջանում դպրոցների բացման և հայ մանուկների հայեցի դաստիարակության վրա հատուկ ուշադրություն է դարձվում 19-րդ դարի 40-50-ական թվականներին: Այս տարիները, ինչպես իրավացի նկատաել է Վ. վարդապետ Պալճյանը, Ռումինիայի հայ գաղթավայրի համար «Տեսակ մը վերածննդի շրջան եղած են մշակութային և ազգային իմաստով» [Աբրահամյան, 1967, 140]:

Ռումինիայի մի շարք բնակավայրեր պահպանել են իրենց հայկական ծագումը: Ռումինիայի շատ պատմաբաններ իրենց աշխատություններում նշում են հայերի զգալի ավանդը արհեստների, առևտրի, ճարտարապետության և մշակույթի այլևայլ բնագավառներում [Գասպարյան, 1962, 203]:

Ռումինիայում մինչև 1960-ական թթ. սկիզբը գործել են հայ ազգային կուսակցությունների տեղական կազմակերպությունները, բարեգործական, մարզական, երիտասարդական, մշակութային ընկերություններ և միություններ, որոնց գործունեությունը կասեցվեց համայնավարական վարչակարգի կողմից: Բազմաբնույթ ազգային կյանքը սահմանափակվեց «Ստեփան Շահումյան» մշակույթի տան գործունեության շրջանակներում: Հայտնի են Ռումինիայի հայոց միությունը, Հայ մշակույթի տունը [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 451]:

19-րդ դարում Ռումինիայի հայ գաղթավայրում գործել են մի շարք հասարակական կազմակերպություններ: Բուխարեստում կազմակերպված միություններից կարելի է հիշել «Արարատյան ընկերություն»-ը՝ 1838 թ., «Արարատ» ուսումնասիրաց ընկերությունը՝ 1843 թ., «Հայրենասիրաց» ընկերությունը՝ 1887 թ., Սուչավայում՝ «Անի» ընկերությունը, Կոստանցայում «Արաքս» գրադարանային ընկերությունը և այլն [Աբրահամյան, 1967, 141]:

Ռումինահայ համայնքում զարգացած են գիտությունը, մշակույթը, թատրոնը, երաժշտությունը, կերպարվեստը կինոընկերությունը: Հայտնի են «Սոխակ», «Արաքս», «Նադեժդա», «Արշալույս», «Աստղիկ», «Ջեփյուռ», «Հակոբ Պարոնյան» թատերախմբերը: Ժամանակակից

երաժշտության աստղերից է Անդա Կարուզարյանուն, ռումինական ջազի հայտնի անուններից է Հարրի Դավիդյանը, ռումինական կինոյի հիմնադիրներից է Յո. Շահիկյանը, ճանաչված են նկարիչներ Օ. Սեխպոսյանը, բեմանկարիչներ Պողոսին (Պողոսյան), Յո. Սավան և ուրիշներ [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 452-454]:

### **Ռումինիայի հայ մամուլը**

Հայոց պարբերական մամուլն արտացոլում է հայ ժողովրդի բազմադարյա պատմական ուղին [Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), 1970, 5]:

19-րդ դարի վերջերից Ռումինիայի Ֆոքշան, Յասսի, Գալաց, Բրըիլա, Տուլչա, Բուխարեստ քաղաքներում գործել են հայկական տպարաններ, որտեղ լույս են տեսել շուրջ 50 անուն պարբերականներ, ինչպես նաև գեղարվեստական, պատմական, կրոնական գրքեր [Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, 2015, 924]:

Ռումինահայ մամուլի ավելի քան հարյուրամյա պատմության ընթացքում լույս են տեսել շուրջ 50 անուն հայերեն պարբերականներ, որոնց զգալի մասը կարճատև կյանք է ունեցել («Օր», «Հրագրան», «Հայաստան», «Նոր ուղի», «Հայ հայրենասերների միություն», «Երկիր» և այլն) [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 454]: Հրատարակչական արդյունավետ գործունեություն է ծավալել Գալացի հայկական հրատարակչությունը, որ կազմակերպել է Ղ. քահանա Փափազյանը: Այս տպարանը կոչվել է «Անի»: Փափազյանն է առաջին անձնավորությունը, որ հիմք է դրել հայ պարբերականի հրատարակչությանը Ռումինիայի գաղթավայրում [Մբրահամյան, 1967, 140]:

Ռումինահայ առաջին պարբերականը՝ «Հայկական տարեցույցներ» խորագրով, լույս է տեսել 1895-1899 թթ. Գալացում:

Կարևոր պարբերականներից են՝

**«Անի»**, հայագիտական հանդես (ռումիներեն): Լույս է տեսել 1935-1938 թթ. (եռամսյա), 1941-43 թթ. (տարեգիրք), Բուխարեստում: Տպագրել է նյութեր հայ ժողովրդի պատմության ու մշակույթի վերաբերյալ, անդրադարձել հայ գրականության հարցերին, ներկայացրել հայերի դերը Ռումինիայի մշակութային, հասարակայան կյանքում, ծանոթացրել հայազգի քաղաքական գործիչներին, գրողներին ու արվեստագետներին:

**«Արագ»**, շաբաթաթերթ, ապա՝ եռօրյա: Լույս է տեսել 1932-1944 թթ. Բուխարեստում: Տպագրել է քաղաքական լուրեր, տեղեկություններ սփյուռքահայության և Հայաստանի առօրյայից, թարգմանաբար ներկայացրել ռումին և հունգար գրողների գործեր:

**«Արարատ»**, հայագիտական հանդես (ռումիներեն): Լույս է տեսել 1924-1942 թթ. Բուխարեստում, վերահրատարակվում է 1990 թ.-ից: Լուսաբանում է ռումինահայության, հայ սփյուռքի կյանքը, ծանոթացնում Հայաստանի առօրյային: Տպագրել է հայագիտական ուսումնասիրություններ, գրախոսություններ, երգիծական նյութեր:

**«Աուրորա»** («Արշալույս»), հայագիտական կիսամսյա հանդես (ռումիներեն): Լույս է տեսել 1906 թ. Բուխարեստում: Տպագրել է Վ. Մեշտուճյանի հայոց պատմությանը նվիրված ընդարձակ ուսումնասիրությունը, թարգմանություններ հայ դասականներից (Պետրոս Դուրյան, Գրիգոր Զոհրապ, Մկրտիչ Պեշիկթաշյան): Զետեղել է պատմաբանասիրական նյութեր, ռումինահայ արվեստին ու ճարտարապետությանը, հայկական գաղթավայրերի պատմությանը նվիրված ուսումնասիրություններ:

**«Հայ հանրագիտակ»**, հանրագիտական տեղեկատու: Լույս է տեսել 1938-1940 թթ. Բուխարեստում: Պարունակում է հոդվածներ և տեղեկություններ հայ ժողովրդի պատմության, տնտեսության, աշխարհագրության, արվեստի, գրականության, պարբերական հրատարակչությունների վերաբերյալ, ծանոթացնում հայ գործիչների կյանքին ու գործունեությանը: Ներկայացված են նաև օտարազգի հայագետները:

«**Նոր արշալույս**», քաղաքական, գրական և մշակութային եռօրյա, ապա՝ շաբաթաթերթ: Լույս է տեսել 1922-1934 թթ. Բուխարեստում: Նպաստել է հայապահպանության գործին, սփյուռք-հայրենիք կապերի հաստատմանը: Լուսաբանել է Ռումինիայի հայկական դպրոցների, թատերախմբերի, մշակութային մյուս հաստատությունների գործունեությունը, հրապարակել Հայաստանի առօրյային վերաբերող տեղեկություններ: Աշխատակցել են Երվանդ Օտյանը, Լևոն Շաթրյանը, Մկրտիչ Պոտուրյանը, Արշակ Չոպանյանը, Հրաչ Երվանդը և ուրիշներ:

«**Նոր կյանք**», հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային շաբաթաթերթ: Լույս է տեսնում 1950 թ.-ից Բուխարեստում: 1982 թ.-ից՝ ամսաթերթ, 1990 թ.-ից՝ երկվեզվյան (10 էջը՝ հայերեն, 6-ը՝ ռումիներեն): Արտացոլում է ռումինահայ համայնքի կյանքը, հաղորդում տեղեկություններ Հայաստանից, սփյուռքի իրադարձություններից: Գրական-մշակութային բաժինը ներկայացնում է ռումինահայ գրողներին, ռումին գրականությունն ու արվեստը, տպագրում ճանաչված հայագետների հոդվածներ:

«**Շեփոր**», գրական-պատմագիտական պատկերազարդ հանդես: Լույս է տեսել 1912-1913 թթ. Բուխարեստում: Նպաստել է հայապահպանությանը, կրթական գործի կազմակերպմանը: Հանդեսում տեղ են գտել Շահեն Նաթալիի, Հ. Խանլարյանի, Ա. Տիրոյանի, Վ. Փափազյանի, Ե. Տեմիրճիպաշյանի գրական ստեղծագործությունները, Կ. Բասմաջյանի, Մ. Պոտուրյանի, Վ. Թորգոմյանի հայագիտական ուսումնասիրությունները: Թարգմանաբար տպագրվել են ռումին գրողների գործեր [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 455]:

«Լեւոն Լանիս 1913-1914 տարիներին Պուրբէշի մէջ հրատարակեց «**Հայաստանի Արձագանգը**» շաբաթաթերթը, հայ եւ ռումէն լեզուներով:

1915թ.-ին կը հրատարակուի «**Արաքս**» շաբաթաթերթը, որուն պատասխանատուն եղած է Մ.Պալթազար:

Յաջորդ տարի՝ 1916 թ.-ին լոյս կը տեսնէ ուրիշ կիսաշաբաթաթերթ մը՝ «**Ինքնավար Հայաստան**», հայ եւ ռումէն լեզուներով:

1920-1922 տարիներուն Հ. Մկրտիչ Պոտուրեան ասպարէզ կ'իջնէ հրատարակելով «**Մասիս**» շաբաթաթերթը:

1921 թ.-ին, կարճ շրջանի մը համար կը հրատարակուի «**Խարազան**» շաբաթաթերթը:

1923 թ.-ին Հ. Մ. Պոտուրեան լոյս կ'ընծայէ «**Դիցաւան**» տարեգիրքը:

Դարձյեալ 1923 թ.-ին, Հ. Մ. Պոտուրեան կը հրատարակէ «**Գաղութի Ձայնը**» շաբաթաթերթը, որ հազիւ 5 թիւ լոյս կը տեսնէ:

Հ. Մ. Պոտուրեան 1924 թ.-ին կը հրատարակէ «**Դիցաւան**» գրական ամսագիր մը, որմէ 3 թիւ միայն լոյս կը տեսնէ:

1923-1925 տարիներուն Պուրբէշի մէջ կը հրատարակուի «**Նաւասարդ**» գրական պարբերաթերթը 32 մեծադիր էջերէ կազմուած: Պարբերականը՝ գրականութեան եւ արուեստի մեծադիր էջերով պատկերազարդ գեղեցիկ հանդես մըն էր:

«**Գարուն**» մանկական եւ պատանեկան պատկերազարդ ամսագիր մը հրատարակուեցաւ 1925 թ.-ին, միայն 3 թիւ լոյս տեսնելով:

1923-1926 տարիներուն լոյս տեսաւ «**Արի**» ամսօրեան պաշտօնաթերթը Հ.Ս.Ը.Մ.-ի Ռումանիոյ շրջանին, որուն արտօնատէրն էր Յ. Գ.Աթանասեան:

Նոյնպէս կարճ ժամանակաշրջանի մը համար, կը սկսի հրատարակուիլ 1925 Սեպտեմբերէն սկսեալ «**Մեղու**» ազգային-քաղաքական երգիծաթերթ մը:

1924 թ.-ին՝ Հ. Մ. Պոտուրեան, ընկերակցութեամբ Վ. Մեստուճեանի, հրատարակեցին 5 թիւ «**Փարոս**» ազգային անկախ շաբաթաթերթը:

1925թ.-ին լոյս կը տեսնէ «**Ռումանահայ Տարեցոյցը**»՝ խմբագրութեամբ Հ. Մ. Պոտուրեանի եւ Ատրուշանի (Յ. Գ. Աթանասեան):

1927 Մարտ, Ապրիլ եւ Մայիս ամիսներուն լոյս տեսած է «**Հրագդան**» ամսագիրը 24 մեծադիր էջերով:



1928 թ.-ին հրատարակուեցաւ թիւ մը **«Դաշնակցութեան Օր»** անունով թերթին:

**«Հայաստան»** անունով ազգային, քաղաքական եւ գրական շաբաթաթերթ մը կը հրատարակուի 1927 Դեկտ.-1930 տարիներուն:

1930-1931 թուականներուն Յ.Գ. Աթնասեան կը հրատարակէ **«Գիտութիւն եւ Գիտելիք»** ամսագիրը Ֆրուստասայի մէջ:

1933 թ. լոյս կը տեսնէ քանի մը թիւ չափածոյ զաւեշտական **«Քնարեր»** շաբաթաթերթը:

1934-1935 թթ. լոյս կը տեսնէ **«Կոկոն»** մանկական եւ պատանեկան ամսաթերթը:

1937-1938 տարիներուն լոյս կը տեսնէ **«Հերկ»** ամսագիրը:

1943 Սեպտեմբեր-1945 Օգոստոս կը հրատարակուի **«Ճակատ»** շաբաթաթերթը [Գալփագեան, 2021, 147-148]:

**«Պահակ»** (համայնավարական կողմնորոշումով) գրական, հասարակական-քաղաքական երկլեզվյան (հայերէն եւ ռումիներէն) շաբաթաթերթ: Լոյս է տեսել 1935-1941 թթ., 1944-1946 թթ. Բուխարեստում: 1946-1950 թթ. լոյս է տեսել «Հայաստանյան ճակատ» անվանումով:

**«Մեւան»** պատկերազարդ ամսագիր: Լոյս է տեսել 1950-1958 թթ. Բուխարեստում (հայերէն եւ ռումիներէն): Լուսաբանել է ռումինահայ համայնքի կյանքը, մասնավորապէս Բուխարեստի Հայ մշակույթի տան եւ նրա ստեղծագործական խմբերի գործունեությունը: Տպագրել է Եղիշե Չարենցի, Սարմենի, Հովհաննես Շիրազի, Գուրգեն Բորյանի, Հակոբ Պարոնյանի, Միսաք Մեծարենցի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի եւ երիտասարդ գրողների ստեղծագործություններ, հայ գեղանկարիչների բազմաթիվ գործեր [Հայ սփյուռք հանրագիտարան, 2003, 455-456]:

Այժմ ներկայացնենք վերոնշյալ երկրում տպագրված հայ մամուլից որոշ արժեքավոր նյութեր եւ հոդվածներ:

**Շեփոր** (Բուխարեստ, 1912, №4-5) տպագրված է «Ռումանահայերը դպրոցներ չունին» վերնագրով հոդվածը (Ռումինահայ համայնքում հայկական դպրոցների, դաստիարակչական ձեռնարկների բացակայության մասին):

**Նոր արշալոյս** (Բուխարեստ, 1926, №371) տպագրված է Խ. Եգանեանի «Մանկական գրադարան»ի անհրաժեշտութիւնը» վերնագրով հոդվածը (Ռումինահայ համայնքում մանկական գրադարանի անհրաժեշտության մասին):

**Նոր կյանք** (Բուխարեստ, 2009, №3) «Դեպքեր ու դեմքեր» խորագրի ներքո տպագրված է Հ. Սիրունիի «Նպաստը Ջոր Ընծայեց Ռումանահայը Հայ Գիրքին» վերնագրով հոդվածը (Ռումինիայում հայ գրքի տպագրության, հայ գրքի տպագրության գործում մեծ ավանդ ունեցած Պողոս Սեբաստյանի, Գրիգոր Պըլըզլիուի մասին):

**Նոր կյանք** (Բուխարեստ, 2010, №10-11) տպագրված է Արշալոյս Պարոնյանի «Ամստերդամում հայկական տպագրության հիմնադրման 350-ամյակը» վերնագրով հոդվածը:

**Նոր կյանք** (Բուխարեստ, 2011, №9-10) տպագրված է Տաթև Վարդապետ Հակոբեանի «Ռումինահայ երիտասարդության ինքնության հիմնախնդիրները: «Ընթերցվել է Սփյուռք-Հայաստան Համաժողովին 19 Սեպտեմբեր 2011» վերնագրով հոդվածը (Ռումինահայ համայնքի խնդիրների մասին):

**Նոր կյանք** (Բուխարեստ, 2011, №9-12) տպագրված է Վարդան Դերիկյանի «Անիական փայլի մշտաշող մի ճաճանչը» վերնագրով հոդվածը (Ռումինահայ համայնքում գտնվող հայկական եկեղեցիների մասին):

**Նոր կյանք** (Բուխարեստ, 2012, №3-4) տպագրված է «Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը թարգմանվում է աշխարհի տարբեր լեզուներով» վերնագրով հոդվածը:

**Նոր կյանք** (Բուխարեստ, 2013, №1-2) տպագրված է «Սիրանոյշի մանկութիւնը» վերնագրով հոդվածը (Դերասանուհի Սիրանոյշի մասին):

**Նոր կյանք** (Բուխարեստ, 2023, №5-6) տպագրված է «Ն. Ճ. Սիրունի ականավոր գրող և պատմաբան» վերնագրով հոդվածը (Հրատարակախոս, հայագետ և գրող, Ռումինիայում հայագիտության և արևելագիտության զարգացման գործում մեծ ավանդ ունեցած Հակոբ Ճոլոյան Սիրունու մահվան 50-ամյակի առթիվ) [«Հայ մամուլ» շտեմարան]:

Ռումանահայ մամուլը իր դերը ունեցավ նախ գաղութին ինքնապահպանութեան գործին մէջ, յետոյ ազգային գոյութեան պահպանման սատար հանդիսացավ, համոզուած, որ լեզուն ազգային գոյութեան կենսական ոյժը կը ներկայացնէ. ազգակիցներուն եւ օտարներուն ծանօթացուց ու անոնց մէջ արթնացուց հետաքրքրութիւն հանդէպ մեր ժողովուրդին պատմութեան եւ մշակոյթին [Գալփագեան, 2021, 149]:

Հայաստանի ազգային գրադարանի կայքի շտեմարանների շարքում կարևոր է նաև «Հայ մամուլ» շտեմարանը, որտեղ մուտքագրված են պարբերականների հիմնական մատենագիտական տվյալները՝ պարբերականի հերթական համարները պարունակող կից աղյուսակով: «Կարդալ առցանց» հղման ներքո գետեղված են պարբերականների թվային պատճենները:

## SUMMARY

In this article we touched upon the Armenian community of Romania, the Armenian press, as well as the Armenian press of Romania. Under the dictates of historical and political circumstances, Armenians also settled in Romania. They have created their respective community structures, published the Armenian press, etc. This press touches upon various issues: community life, Homeland-Diaspora relations, etc. The coverage of the problems of the Armenian press in general is of great relevance. The Armenian press of Romania is also developing activities in the Armenian community to preserve the Armenian identity, especially among the younger generation, contributes to the preservation of the Armenian language, traditions and customs. The “Armenian Press” database on the website of the National Library of Armenia contains bibliographic data of the Armenian periodicals of Romania in serial numbers. There is a link “read online” where digital copies of periodicals are available.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ա. Գիրք Բ / Խմբ.՝ Ե. Սարգսյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1967, 424 էջ:
2. Գալփագեան Յովհ. Ռումանահայ գաղութը / Հրատարակության պատրաստեց Տեր Հեթում քահանա Թարվերդյանը, Երկրորդ հրատարակություն, Երևան, Էդիտ Պրինտ, 2021, 248 էջ:
3. Գասպարյան Ս. Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր: Մշակութային կյանքի ուրվագիծ, Երևան, Հայպետհրատ, 1962, 248 էջ:
4. Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2015, 1120 էջ:
5. Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967): Համահավաք ցանկ: ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրություն, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի կոմպլեկտավորման բաժին / Կազմ.՝ Ա. Կիրակոսյան, Երևան, ա.հ., 1970, 621 էջ:
6. Հայ սփյուռք հանրագիտարան / Խմբ. հանձնաժողով՝ Հ. Այվազյան և ուրիշ., Երևան, Հայկական հանրագիտարան հրատ., 2003, 731 էջ:
7. Սիրունի Հ. Հայ եկեղեցին Ռումեն հողի վրա: Նիկոլա Յորգա = Biserica armeană pe pamantul românesc: Nicolae Iorga / Խմբ.՝ Ա. Հատիտյան, Էջմիածին, տպ. Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1966, 268 էջ:
8. Տան Դեմետրիոս Արեւելեան Հայք ի Պուրովինա / Թարգմ.՝ Հ. Գրիգորիս վ. Գալէմքեարեան Միխիթ. ուխտէն, Վիեննա, տպ. Միխիթարեան, 1891 79 էջ:
9. «Հայ մամուլ» շտեմարան, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://is.gd/HqptRU> 27.03.2024:

<https://doi.org/10.52027/18294685-fba2024.1>

ԱԲՐԱՀԱՄԵԱՆ ՔՆԱՐԻԿ

Խ. Աբովեանի անուան հայկական պետական  
մանկավարժական համալսարան

ՖԵԼԻՔՍ ԲԱԽՉԻՆԵԱՆԻ «ՀԱՅՐԱԿԱՆ» ՄԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
(ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ «ՀԱՅՐԸ» ՀԱՏՈՐԻ)

**Բանալի բառեր՝** Ֆելիքս Բախչինեան, «Հայրը», միջտեքստային դրսևորումներ, խորհրդանիշ, երկխոսություն, ընթերցում, ապամիֆականացում, սերունդների բախում, հայրական մոդել:

**Keywords:** Felix Bakhchinyan, “Father”, intertextual manifestations, symbol, dialogue, reading, demystification, clash of generations, paternal model.

Տեսնես ի՞նչ մտածումների ու նորաբանությունների կը հանդիպես, ի՞նչ նոր գրական ու մշակութային խաչմերուկներում կը յայտնուես հերթական նոր գիրքը բացելիս: Այսպիսի հարցականների առջև է կանգնում Ֆելիքս Բախչինեանի հաւատարիմ կամ հետետողական ընթերցողը: Այս սպասումն է թերեւս կարելորդ ընթերցողի համար, որին այս անգամ՝ քննութեան ենթակայ «Հայրը» վէպում (սա հեղինակային ժանրային բնորոշումն է) կարծես թէ որոշել է «հաշուի չառնել» հեղինակը, թէպէտ իրեն «այդպէս չեն դաստիարակել. ես միշտ պէտք է հաշուի առնեմ «ինչ կ'ասեն»ը», որը տարիների հեռուից համարում է «բարդոյթների գերեզմանոց» [Բախչինեան, 2023, 4-5], ուր գուցէ եւ թաղուած են եղել իր գլուխգործոցները: Ու անմիջապէս օգնութեան են կանչում մեծ նախորդները՝ «սխրալի» Չարենցն ու նրան այդպէս բնորոշողը՝ Վահան Թէքէեանը, որ Ֆ. Բախչինեանի ուղեկից արուեստագէտն է (յիշենք թէկուզ միայն «Վերջին մանկություն» վիպակը): Այդպէս նրան յաճախակի օգնութեան է գալիս եւ Վարուժանը, որի մասին դատողությունների շարքը երբեմն վերածում է փոքրիկ վերլուծութեան, որը մի դէպքում կարելի է «շեղում» դիտել, միւս պարագային, սակայն, միաձուլում բնագրին, ինչն օգնում է սիւժետային տարրի ամբողջացմանը [Բախչինեան, 2023, 65-68]: Նմանատիպ միջտեքստային դրսևորումները, ի դէպ, ոչ միայն հայ, այլեւ համաշխարհային հեղինակների հետ (Հումբերոս, Ռոմէն Ռոլան, Ժան Ժիոնո, Ռեյ Բրեդբերի, Էյժեն Վեվերիս), յաճախադէպ են Բախչինեանի բնագրերում («Déjà Vu. Հալէպ՝ սիրոյ եւ մահուան հովիտ», «Մի գիշեր Աթաթուրքի սենեակում» եւ ուրիշներ) եւ ըստ էութեան՝ մէկ այլ խօսակցութեան նիւթ: Եւ սա բոլորովին էլ չի նշանակում, թէ հեղինակը ուղիղ իմաստով «ապաւինում է» այդ արուեստագէտներին: Այս առումով մենք համակարծիք ենք գրականագէտ, տեսաբան Թոմաս Ֆոսթերի հետ, թէ «Այս ինտերտեքստուալ երկխոսությունը խորացնում ու հարստացնում է ընթերցանութեան փորձը՝ տեքստին հաղորդելով իմաստային բազմաթիւ շերտեր, որոնցից մի քանիսն ընթերցողները նոյնիսկ չեն նկատել» [Ֆոսթեր, 2021, 24]: Իսկ եթէ այս երկխոսութեան մէջ «նմանություններ ու համապատասխանություններ ենք նկատում», «գիրն աշխուժանում է» [Նոյն տեղում]:

Չնայած ստեղծագործութեան անմիջապէս մուտքին հնչող «բարդոյթների» շարանին, ընթերցողը պիտի այնքան էլ հաւատ չընծայի հեղինակային տարակոյսներին, քանի որ քիչ անց հնչում է գրեթէ հակադիր միտքը. «Ես գրող եմ, ունեմ նաեւ կիկլոպեան աչք...» [Բախչի-

նեան, 2023, 7], այսինքն՝ կարողանում է կարդալ այն, ինչ դժուարընթեռնելի է սովորական մարդկանց համար:

Ֆելիքս Բախչինեանի գրականությունն ընթերցելիս, եւ սա վերաբերում է ոչ միայն քննութեան ենթակայ «Հայրը» երկին, անընդհատ խորհրդանիշների փնտռուք եւ ունենում: Սովորաբար գրողն ինքը աւելի շատ է տեղեակ իր խորհրդանիշներից, քան ընթերցողը: Բախչինեանի ստեղծագործութեան պարագայում, սակայն, երկու կողմն էլ «շահառու» են: «Եւ մտնում եմ խոր գետը՝ լողալ չիմանալով... Խոր գետերը անաղմուկ են հոսում ու անաղմուկ էլ տանում են... Այլաբանությունները ստացում են ինքնաբերաբար: Գետը... ի՛նչ հզօր, ի՛նչ ահասարսուռ գեղեցիկ խորհրդանիշ է» [Բախչինեան, 2023, 5],- յայտարարում է հեղինակն ու աւելացնում գետին վերագրուող անհաշուելի խորհրդանիշներին իր իմացածը: Աւելին, առաջ ընկնելով նկատենք նաեւ, որ «ահասարսուռ» այս խորհրդանիշին գալիս է միանալու «ջրափոսը», որ կեանքի դասերի մի ամբողջ խորհրդանշային համակարգ է ներկայացնում:

Խորհրդանիշներից մէկն էլ, օրինակ, Սուրբգրային ու դիցաբանական պատումներից մինչեւ այս պատումում հանգրուանած այգին է, «որ ի վերջոյ հենց կեանքն է» (սա կարծես նորություն չէ գրականութեան համար), որի զարկերակն անպայման ուզում է զգալ հեղինակը: Հակառակը անտարբերությունն է, որ իր՝ արուեստագէտի համար կարող է համազօր լինել մահուան, իսկ այս հասողութեանը ինքը եկել է իր համար այնքան կարեւոր հայրական ճանապարհով. «Հայրս ասում էր՝ անտարբերությունը յանցագործություն չէ, մահ է: Ստուգում եմ՝ հո՞ չեմ մեռել» [Բախչինեան, 2023, 9]:

Առհասարակ այս «կիկլոպեան աչքը» շրջապատի կողքին հակուած է նաեւ ինքնաքննութեան, որտեղ ակնյայտ է հեզմանքը: «Այդ օրը իսկապէս բացառիկ էր, ու ես չգիտէի, որ ինձ վիճակուած էր շատ մեծ գիւտ անել՝ տակնուվրայ անելով ուղեղիս մենթալ կառուցուածքները: ...Ամէն գիւտ բացառիկ է նախ գիւտարարի համար կամ միայն գիւտարարի համար» [Նոյն տեղում]: Վիպակի միւս հերոսների հանդէպ, մինչդեռ, նման վերաբերմունք չի նկատում:

«Մտքերի տարափ». այսպէս կարելի է բնորոշել Ֆելիքս Բախչինեանի՝ բնագիրն սկսելու սովորոյթը: Իսկ սա նշանակում է, որ երկար կարելի է յամենալ այս խաղարկումների վրայ: Մակայն այսքանն արդէն բաւարար կը լինի՝ համարելու, որ «Հայրը» ստեղծագործութեան ընթերցման «նախադրանն» ենք, այսինքն՝ պատրաստ գնալու հեղինակային «գիւտի» ետեւից, որ այս անգամ բացում է սիւժետային երկու, կամ եթէ կ'ուզէք, հեղինակին էլ հաշուած [Բախչինեան, 2023, 49], երեք տարբեր հանգրուաններով: Մի քիչ աւելի հաշուարկների մէջ խորանալու առումով պատումում հայրերի թիւը շատ աւելին կարող է լինել: Դիցուք եթէ դիմենք այս «հայրաբանութեան» ու սերունդների բախումի հետաքրքիր օրինակին, որտեղ իր որդին՝ «միջին սերունդը», «ամենադրամատիկը մեր երեքի մէջ», «ամենամեղքն է, որովհետեւ այդ նա պիտի հասկանայ ու հանդուրժի ե՛ւ ինձ, ե՛ւ իր որդուն» [Բախչինեան, 2023, 11]:

Թէ որքան քննութիւն կը բռնի հայրապատումի առաջարկուող մոդելը, որ խորքի մէջ թերեւս դարձ է ի շրջանս իւր, այսինքն՝ Հայր Աստծոյ գաղափարի նորովի վերախաղարկում, ցոյց կը տայ ժամանակը: Եւ այս կրկնակի ապամիջականացումը Բախչինեանը կատարում է՝ հնարաւորինս բացատրելով իր կռուանները: Այսպէս, շարադրանքի ընթացքում նա փորձում է երեւան բերել հօր ու մօր տարբերութիւնը՝ մեկնելով ընդհանրականից, որը երջանկութեան զգացումն է: Բայց մի ոչ երկրորդական տարբերութեամբ. «Մայրերը երեխաներին ունենում ու մեծացնում են իրենց համար, իրենց երջանկութեան: Հայրերը... երեխային պատրաստում են երջանիկ լինելու հենց երեխայի համար, ոչ թէ իրենց» [Բախչինեան, 2023, 28]: Իսկ սրա մէջ, չի կարելի չհամաձայնել, ճշմարտութիւն կայ:

Ի հա՛րկէ, Բախչինեանը չի բարձրաձայնում, բայց ուշադիր ընթերցողը չի կարող չնկատել այն ներքին հակադրութիւն-երկխօսութիւնը, որ վարում է իր նախորդներից Աւետիք Իսահակեանի հետ, երբ վերջինս «մայրական գիրկը» համարում էր «սուրբ», իսկ հօրը յայտարարում մեղսաւոր («Իմ հայրը իմ դէմ մեղանչեց» [Իսահակեան, 1974, հ. 2, 59]): Ի դիմաց սրա՝

Բախչինեանը առնուազն պահանջում է «մօրը եւ հօրը նոյն պատուանդանին ու հաւասար հարթութեան վրայ դնել» [Բախչինեան, 2023, 29]:

Պայմանականօրէն առաջին՝ մեր օրերի հօր պատումն առաջ տանողը հեղինակային են է, որ թերեւս աւելի հաւաստի դարձնելու համար ասելիքը, կամ որ աւելի ճիշդ կը լինի ասել, ստուգելու համար իր դատողութիւնների ընկալումը փորձում է ինքնակենսագրական տարրեր մտցնել գեղարուեստական տարածք եւ իբրեւ լսող կողմ ընտրում է թոռանը (թէպէտ տեքստում նկատում է, որ ինքնակենսագրական տարր չպէտք է որոնել): Ինչո՞ւ իր դէպքում ոչ թէ տղային, այլ՝ թոռանը: Գիտակցականօրէն կամ ենթագիտակցաբար ընթերցողը փորձում է պատասխանը գտնել հենց իր խոստովանական տեքստում. «Յետադարձ հայեացքը սպանում է ինձ. ախր ես չեմ բռնել երեխաներիս ձեռքը, չեմ թողել աստիճաններից ընկնել, խաղալ կեղտոտ ջրափոսում... Ես ինչպէ՞ս եմ հաւատացել, որ մայրերն ամէն ինչ անում են հայրերից աւելի լաւ ու աւելի ճիշդ» [Բախչինեան, 2023, 49], որտեղ ինքը չի կարող համեմատուել իր բերած «օրինակելի» հայրերին:

Իսկ այդ օրինակելի հայրերի միջոցով բացւում է մի ամբողջ դաստիարակչական շղթայ, որ լի է մանկան հոգեբանութեան (երեխայի՝ աստիճաններով վազվզելու կամ ջրափոսում ցեխոտուելու տեսարանները), դաստիարակութեան մոդելների (հօր «անթոյլատրելի անտարբերութիւնը»), մարդկայնութեան դասերի (ուրիշի, օտար(ներ)ի երեխաների համար Տիգրան Աբովեանի «չտեսնուած» հայրութիւնը<sup>9</sup>) ցուցադրութեամբ:

Երկու պատումներ են մեր առջեւ (նկարիչներ Տիգրանի եւ Տիգրան Աբովեանի), որոնք առաջին հայեացքից չեն փոխլրացնում իրար իբրեւ սիւժետային մէկ միասնական կառոյց: Բայց կայ մի կարեւոր հանգամանք՝ հայրական տարբեր մոդելների խաղարկման հնարաւորութիւնը: Եթէ առաջինում իր (ընթերցողն ազատ է այս իր-ը կապելու կամ չկապելու հեղինակի կենսագրութեանը) եւ կենսաբանական հայր Տիգրանի միջոցով բերում է սերունդների երկխօսութիւնը, ապա երկրորդ հանգրուանը հեղինակին «պէտք է» ընդլայնելու «Հայր» հասկացութեան կամ արքեոտիպի սահմանները՝ այս անգամ հասնելու համար «Հայր Աստծոյ», «տիրոջ, աղայի խորհրդանիշի» [Բախչինեան, 2023, 129] ըմբռնումին, որ հնարաւոր չէ անձնական սովորական պատմութեան միջոցով: Այսպիսով՝ մասնաւորից ընդհանուրին, կամ փոքրից մեծին հասնելու յանձնառութեամբ է թերեւս արդարացւում պատումների միջեւ ժամանակային խախտումը (առաջինի սիւժէն վերաբերում է մեր օրերին, երկրորդինը՝ 1985-ին):

Եւ այնուամենայնիւ, մեզ դժուար է թուում ստեղծագործութիւնն անուանել վէպ: Այս երկու պատումները միաւորողը ապամիֆականացման վերոնշեալ գաղափարն է: Այս դէպքում, եւ սա էլի կարող ենք նկատել հեղինակային կայուն նախասիրութիւն, ժանրային բնորոշումը կարող է լինել կամ վիպակը, կամ իստիպիտութիւնը, մանաւանդ եթէ նկատի առնենք նաեւ վերջին՝ «Երկրորդ պատուանդանը՝ առաջինից բարձր» գրութիւնը, որը մի կողմից ամբողջացնում է նիւթը, միւս կողմից ինքնուրոյն միաւորի իրաւունք ստանում:

«Հայրը» երկում ոճաւորման կարեւոր հնարանք է կրկնութիւնը: Թէպէտ եւ ընթերցողը լաւ գիտի Աստուածաշնչեան յայտնի շարակարգութիւնը, բայց հեղինակը չի զլանում եւս մէկ անգամ յիշեցնել-կրկնել. «Հայր Աստուած. որդի Աստուած, առաջին մարդը Ադամն էր, յետոյ միայն Եւան... Եւան նրա կողից էր... Առաջին երեխաները տղաներ էին, հայրեր...» [Բախչինեան, 2023, 48]: Բայց սա բաւարար չէ հեղինակի համար՝ յաղթահարելու անորոշութիւնը, «իմ մէջ բարձրացող հակառակութիւնը» [Բախչինեան, 2023, 49]: Ճանապարհը. պիտի կրկին կարդայ Աստուածաշունչը, եւ ոչ միայն. դրա կողքին Ղուբանը, վեղայական գրականութիւն, յունական դիցաբանութիւն: Արդէն գրքի վերոնշեալ վերջին էսսեում հեղինակը հաւաստում է, որ կատարել է ընթերցումները եւ իր խօսքը տանում է հոգեվերլուծաբան Կարլ Յունգի տեսութեան հիմնաւորումներով:

<sup>9</sup> Դրուագի ընթերցումը յիշեցնում է Շիրվանզադէի «Որն է մայրը» պատմուածքը:

Ի՞նչ է ուզում վերջապես հեղինակը. քանդե՞լ մայրական միջը. յամենայն դեպս այդպես է թույլ նրա յորդորից՝ «փոխել աշխարհի դրուածքը, աշխարհակարգը, մարդակարգը» [Բախչինեան, 2023, 143]: Մնացեալը ընթերցողի իմանալիքն է, որը եթէ անգամ անվերապահօրէն «չհաւատայ» հեղինակի դատումներին, գոնէ մտորելու առիթ հաստատ կ'ունենայ:

## SUMMARY

The review is dedicated to Felix Bakhchinyan's novel "Father". There are references to the manifestation of intertextuality, dialogues with other artists, which is a stable preference for the writer and is also found in previous works. («Déjà Vu. Aleppo: Valley of Love and Death», "One Night in Ataturk's room" and others). An attempt is made to highlight the logic of the author's judgements about the archetype of the father, which is often based on the contrast of the mother figure. The features of the stylization of the work are also taken into account.

## ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1. Բախչինեան Ֆ. «Հայրը» / վեպ, Երևան, «Գիտութիւն» հրատ., 2023, 148 էջ:
2. Ֆոսթեր Թոմաս Ս. Ինչպէս ընթերցել գրականութիւն պրոֆեսորի պէս / անգլերէնից թարգմանեց Աստղիկ Աթաբեկեանը, Երևան, Էդիթ Պրինտ, 2021, 272 էջ:
3. Իսահակեան Ա. Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 2, Երևան, Հայաստան, 1974, 336 էջ:

<https://doi.org/10.52027/18294685-hle2024.1>

ԵՂԻԳԱՐՅԱՆ ԼՈՒՍԱԲԵՐ  
Հնաբերդի միջնակարգ դպրոց

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ ՎԻՔԻՊԵԴԻԱՅՈՒՄ

**Բանալի բառեր՝** Վիքիպեդիա, Հայաստանի ազգային գրադարան, գրադարան, գրադարանավար, վիքիգրադարանավար, հանդես, հոդված, ուսանող, շտեմարան:

**Keywords:** Wikipedia, National Library of Armenia, library, librarian, wiki librarian, journal, article, student, database.

Ինտերնետային ամենահայտնի հանրագիտարանը՝ Վիքիպեդիան, գոյություն ունի արդեն քսաներեք տարի: Վիքիպեդիան հանրագիտարան է, որը ստեղծվել և զարգանում է մեզ նման այցելուների կողմից: Այստեղ գործում է «մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի համար» սկզբունքը:

Վիքիպեդիան առաջնորդվում է հիմնարար սկզբունքներով, իսկ բովանդակությունը հրապարակվում է Creative Commons BY-SA արտոնագրի ներքո: Այն կարելի է պատճենել և օգտագործել՝ պահպանելով սույն արտոնագրի պայմանները: Վիքիպեդիայում ողջ տեղեկատվությունը ներկայացված է ազատ, առանց գովազդի և իր օգտագործողների անձնական տվյալների օգտագործման:

Վիքիպեդիան հանրագիտարանային գիտելիքների տարածմանն աջակցող գիտակրթական հասարակական կազմակերպություն է: Դա նշանակում է, որ հոդվածի հեղինակ կարող է դառնալ յուրաքանչյուր ոք: Այն նաև ռազմավարական ծրագիր է, որն ունի իր առաքելությունը և խնդիրները: Վիքիպեդիան՝ համագործակցելով Հայաստանյան տարբեր գիտակրթական կազմակերպությունների հետ, ստեղծում է գիտելիքների պաշարը և հասանելի դարձնում հանրությանը: Նրա նպատակն է.

1. Ստեղծել և տարածել ազատ և հասանելի բովանդակություն,
2. Նպաստել գիտելիքի տարածմանը և կրթության զարգացմանը,
3. Խթանել կամավորական սկզբունքներով համագործակցությունը,
4. Ներգրավել հասարակության ավելի լայն շերտեր՝ վիքիբովանդակության ստեղծման գործում,
5. Հարստացնել վիքիպլատֆորմը՝ տեղայնացված և ընդլայնված գործիքաշարերով:

Մրանք համահունչ են նաև Հայաստանի ազգային գրադարանի նպատակներին: Այն Հայաստանի գլխավոր գրադարանն է՝ գիտակրթական, մշակութային, տեղեկատվական խոշոր հաստատություն, որը հավաքում, պահպանում և սպասարկում է տպագիր արտադրանքի տարբեր տեսակներ (գիրք, ամսագիր, թերթ, բրայլյան գրեր, քարտեզ, պլակատ, ատենախոսություն, նոտա, ձայնապնակ, դրամանիշ, բացիկ, բուկլետ, բրոշյուր և այլն): Ազգային գրադարանը գրադարանագիտական, մատենագիտական, մեթոդական, միջգրադարանային բաժնույթի, տեղեկատվության և գրքափոխանակության, տպագիր արտադրանքի թվայնացման համապետական կենտրոն է:

Գրադարանները և գրադարանային թեմաները բավարար չափով ներկայացված չեն հայկական Վիքիպեդիայում: Առանձին հոդվածներով ներկայացված են միայն խոշոր ազգային, ակադեմիական գրադարանները, ինչպես նաև մարզային գրադարանները, սակայն հայ գրքի պատմությանը, գրադարանային գործին, ընթերցանությանը վերաբերող նյութերի զգալի պակաս կա: Մինչդեռ գրադարանների համար շատ օգտակար է ներկայացված լինել Վիքիպեդիայում: Երբ գրադարանը Վիքիպեդիայում իր մասին գրված հոդված ունի, ապա նրա տեսանելիությունն ավելի բարձր է, քան այն գրադարաններինը, որոնք ներկայացված չեն Վիքիպեդիայում: Գրադարանների համար շատ օգտակար է ներկայացված լինել Վիքիպեդիայում: Ներկայումս Վիքիպեդիայում առանձին հոդվածով ընդամենը ՀՀ 26 գրադարան է ներկայացված, ինչպես նաև 4 գրադարան Արցախից:

Քանի որ ամեն ոք կարող է մասնակցել Վիքիպեդիայի բովանդակության ստեղծմանը, հանրության մեջ որոշակի անվստահություն կա Վիքիպեդիայի հոդվածների նկատմամբ: Ուսումնական հաստատություններում դասավանդողները ուսանողներին հետ են պահում Վիքիպեդիայի նյութերի օգտագործումից: Ուսանողները դրանք չեն կարող ընդգրկել իրենց գրավոր աշխատանքների օգտագործած գրականության ցանկերում: Չենք խոսում հետազոտական աշխատանքների մասին, որոնցում Վիքիպեդիայի հոդվածների օգտագործումն անգամ չի էլ դիտարկվում: Ուստի շատ գրադարանավարներ իրենց աշխատանքում անտեսում են Վիքիպեդիայի նյութերի օգտագործումը և ընթերցողներին հետ են պահում Վիքիպեդիայի հոդվածների օգտագործումից: Այդ մոտեցումը շատ սխալ է և հարկավոր է փոխել: Վիքիպեդիան անընդհատ փոփոխվող մի հանրագիտարան է, որը կարող է և պետք է օգտագործվի առնվազն որևէ թեմայի վերաբերյալ առաջնային կամ սկզբնաղբյուր նյութեր գտնելու համար: Ընթերցողներին կարելի է ուղղորդել իրենց հարկավոր տեղեկությունը փնտրել Վիքիպեդիայում՝ ստացված տվյալները տպագիր հրատարակությունների միջոցով ճշտելու պայմանով:

Վիքիմեդիայի հետ համագործակցության նպատակն էր Հայաստանի ազգային գրադարանի աշխատակիցների և հայերեն Վիքիպեդիայի միջև կապերի խորացումը, որպեսզի Վիքիպեդիայում ավելի արժանահավատ և որակյալ տեղեկատվություն գրվի և տարածվի գրադարանների և գրադարանային գործի վերաբերյալ: Հույս ունենք, որ Ազգային գրադարանի այս նոր նախաձեռնությունը վարակիչ կլինի մեր գործընկերների համար, ովքեր կարող են Վիքիպեդիայում լրացնել իրենց տեղական պատմությունները, հոդվածներ գրել իրենց համայնքների մարդկանց և պատմության վերաբերյալ, ինչպես նաև իրենց համայնքներում օժանդակել տեղեկատվական գրագիտությանը:

Ինչո՞ւ է գրադարանավարի համար կարևոր Վիքիպեդիայի մասին իմացությունը: Որովհետև այն ամենից հաճախ գործածվող 5 կայքերից մեկն է (2024 թ. տվյալներով): 2001 թ. ստեղծման տարում այն հասանելի էր միայն անգլերենով, իսկ ներկայումս արդեն ստեղծվել են 329 այլ լեզուներով տարբերակներ: Վիքիպեդիայի բոլոր լեզուները համադրված ներառում են ավելի քան 62 միլիոն հոդվածներ: 2023 թվականի նոյեմբերի դրությամբ ամսական կատարվում էր ավելի քան 14 միլիոն խմբագրում (միջինում մոտ 5.2 խմբագրում վայրկյանում): Առ 5 մայիսի 2024 թ. հայերեն Վիքիպեդիայում կար 308.408 հոդված:

2023 թվականին ազգային գրադարանի տնօրինության և «Վիքիպեդիա Հայաստան» կազմակերպության համագործակցությամբ Հայաստանի ազգային գրադարանը նախաձեռնեց գրադարանային թեմաներով հոդվածների լրացում հայերեն Վիքիպեդիայում: Կամավորները նախ երկօրյա դասընթացի մասնակցեցին, որի նպատակն էր գրադարանավարներին Վիքիպեդիայում հայերեն հոդվածներ հրապարակելու և խմբագրելու հմտություններ ուսուցանելը և այդպիսով առցանց տիրույթում հայկական գրադարանների և գրադարանավարների մասին հայերեն բովանդակության հարստացմանը նպաստելը:

Ազգային գրադարանը հարուստ տեղեկատվական պաշարներ ունի և, ենթադրվում էր, շատ արագ կկարողանար հոդվածներ ստեղծել: Գրադարանավարի համար նյութ գտնելն



այդքան էլ բարդ չէ: Իրական բարդությունը վիքի գործիքներին տիրապետելն է և գրագետ, համապատասխան չափորոշիչներով հողված պատրաստելը, այսինքն՝ պետք է ունենալ տեքստ, հավաստի աղբյուրներ, հղումներ և հողվածին վերաբերող սեփական կամ հանրային տիրույթում գտնվող լուսանկար: Վիքի ուսուցման առաջին դասընթացի ժամանակ տեղադրվեց Ներսես Հայրապետյանի «Գրադարանային ասոցիացիաների և հաստատությունների միջազգային դաշնության» (ԻՖԼԱ) հողվածը [Գրադարանային ասոցիացիաների և հաստատությունների միջազգային դաշնություն, Վիքիպեդիա]: Այն միջազգային գրադարանային կազմակերպություն է, որին Հայաստանը անդամակցում է 1996 թվականից: Հայաստանի ազգային գրադարանը անդամակցում է ԻՖԼԱ-ին 2006 թվականից: Ի դեպ 2022 թվականի սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 1-ը Հայաստանի ազգային գրադարանում տեղի ունեցավ «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» միջազգային գրադարանային գիտաժողովը, որը նվիրված էր հայ գրատպության 510-ամյակին: Գիտաժողովին մասնակցում էր ԻՖԼԱ նախագահ Բարբարա Լիզոնը, ով ելույթ ունեցավ «XXI դարի երկրորդ տասնամյակի գրադարանների մարտահրավերները և ինչպես է ԻՖԼԱ-ն նրանց աջակցում» խորագրով զեկույցով:

Առաջնահերթ համարվեց ազգային գրադարանի պատմության էջը լիարժեք դարձնել: Ազգային գրադարանի հինգ տնօրենները (Ազատ Մարտիկյան (1931-1936), Թեմզա Զաքարյան (1936-1937), Աղավնի Ստեփանյան (1937-1953), Արմենակ Միրզոյան (1953-1956), Արազի Թիրաբյան (1956-1989)) [Մելյան, 2002, 34, 39, 60, 65, 80] Վիքիպեդիայում ոչ մի տեղեկատվական նյութ չունեին: Վիքիգրադարանավարների համատեղ աշխատանքի արդյունքում ստեղծվեցին ՀԱԳ-ի նախկին տնօրենների հողվածները: ՀԱԳ-ի առաքելություններից է «Հայ գիրք» շտեմարանի և «Հայ մամուլ» շտեմարանի արատացումը Վիքիպեդիայում.

✓ **«Հայ գիրք» շտեմարանը** Հայաստանի ազգային գրադարանի էլեկտրոնային համահավաք շտեմարանն է, որն ստեղծվել է 2012 թվականին: Այն նպատակ ունի ամբողջական թվային ձևաչափով ներկայացնելու հայ գրքի պատմությունը, գրքերի բովանդակությունը հանրահասանելի դարձնելու՝ այսպիսով նպաստելու հայատառ տպագիր ժառանգության, տպագիր արտադրանքի պահպանմանն ու հարստացմանը: Այն ներառում է 1512 թվականից մինչև մեր օրերը աշխարհի տարբեր ծայերում տպագրված հայերեն, հայատառ, ինչպես նաև հայերեն ելից տվյալներ պարունակող հայկական բովանդակությամբ, և հայերեն ելից տվյալներ պարունակող ու հայ հեղինակների կողմից ստեղծված այլալեզու գրքերը: Շտեմարանում տեղ են գտել նաև երկլեզվյան ու բազմալեզվյան այն հրատարակությունները, որոնց բնագրի լեզուներից մեկը հայերենն է (ատլաս, կատալոգ, պատկերագիրք, բառարան), ինչպես նաև 1512-1800 թթ. հրատարակված քարտեզները, հմայիլները, պարբերականները և հայատառ հատվածներ պարունակող այլալեզու հրատարակությունները [«Հայ գիրք» շտեմարան, Վիքիպեդիա]:

✓ **«Հայ մամուլ» շտեմարանը** հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակն է, Հայաստանի ազգային գրադարանի էլեկտրոնային շտեմարաններից մեկը: Հիմնադրվելով 2014 թվականին՝ շտեմարանը նվիրվել է հայկական առաջին պարբերականի՝ «Ազդարարի» լույս ընծայման 220-ամյակին (1794-2014 թթ.) և հայ խմբագիրներին: Շտեմարանում ներառված է 1794 թվականից մինչև մեր օրերը հրատարակված պարբերականների ավելի քան 6500 գրառում՝ թերթ, ամսագիր, էլեկտրոնային թերթ, էլեկտրոնային ամսագիր, տարեգիր, տեղեկագիր՝ 7.5 միլիոնից ավելի թվայնացված էջ: Գրացուցակում ներկայացված են ոչ միայն հայերեն, այլև հայատառ թուրքերեն, հայատառ ասորերեն, լատինատառ հայերեն, երկլեզվյան և բազմալեզվյան պարբերականներ, որոնց բնագրի լեզուներից մեկը հայերենն է: Շտեմարանի կարևոր մաս են կազմում նաև օտարալեզու հայագիտական հանդեսները, ինչպես նաև խմորատիպ, ապակետիպ, դպրոցական ձեռագիր, մեքենագիր,

միօրյա տպագիր պարբերականները, որոնք, մամուլի որոշ մատենագետների կարծիքով, մամուլ չեն կարող համարվել և այդ պատճառով չեն ընդգրկվել մատենագիտական համահավաք ցանկերում: Շտեմարանի մաս են կազմում ՀՀ ազգային փոքրամասնությունների մամուլի անունները [«Հայ մամուլ» շտեմարան, Վիքիպեդիա]:

Հայաստանի ազգային գրադարանում այսօր շարունակվում են «Հայ գիրք» և «Հայ մամուլ» շտեմարանների ստեղծման աշխատանքները: Նպատակը՝ այս երկու շտեմարաններում հավաքել և ամբողջացնել հայ տպագիր գրքի և մամուլի պատմությունը, հեղինակների և խմբագիրների կենսագրականները, հրատարակիչների, տպագրիչների և տպարանների մասին տեղեկատվությունը: Հնարավոր բոլոր տարբերակներով (սքանավորում, ներբեռնում այլ կայքերից, նվիրատվություններ հեղինակներից) ձեռք են բերվում գրքերի և պարբերականների թվային պատճենները և կցվում են մատենագիտական գրառումներին՝ գիրքը կամ պարբերականը առցանց ընթերցելու համար [Զարգարյան, Ղազարյան, Գրիգորյան, 2017, 459]:

Ահա այսպիսի ծավալուն աշխատանք, որ կատարում է Հայաստանի ազգային գրադարանը, որն էլ իրենից ներկայացնում է հայ տպագիր գրքի և մամուլի գրատպության ուղին, անհրաժեշտ էր, որ իր տեղը գտներ Վիքիպեդիայում: Շտեմարանների հոդվածները մեծ պատասխանատվությամբ ստեղծվեցին: Ազգային գրադարանում կազմվեցին շտեմարանների բովանդակությունը և վիքիգրադարանավարի օգնությամբ Վիքիպեդիայի համապատասխան չափորոշիչներով տեղադրվեցին շտեմարանների մասին հոդվածներ: Շտեմարանների հոդվածներն ունեն հավաստի հղումներ՝ կառավարության որոշումներ [ՀՀ կառավարության որոշում, 31 հուլիսի 2014 թվականի N 777], հոդվածներ [Զարգարյան, Ղազարյան, Գրիգորյան, 2017, 459-470] և այլն: Այսպիսով՝ Ներսես Հայրապետյանի, Հայկանուշ Ղազարյանի և վիքիգրադարանավարի համատեղ աշխատանքի արդյունքում շտեմարաններն իրենց պատվավոր տեղը գտան Վիքիպեդիայում:

Ազգային գրադարանի տնօրենների հոդվածների ստեղծման համար նորից անհրաժեշտ էր գիտակ մասնագետի աշխատանք և խորհուրդ վիքիգրադարանավարներին: Այս հարցում օգնեց Ներսես Հայրապետյանը, ով տրամադրեց գրականություն, նկարներ: Ներսես Հայրապետյանը շատ արագ, խմբի ստեղծման պահից սկսած, գրադարանային վաստակաշատ գործիչների անուններ և թեմաներ էր առաջարկում («Ավետիք Օհանյան», «Հրաչյա, Կոստիկյան», «Նինել Ոսկանյան», «Հակոբ Մեղապարտ (հուշամեղալ)» և այլն) որոնց վրա պիտի աշխատեին վիքիգրադարանավարները: Առաջարկված հոդվածներն իրենց տեղը գտան Վիքիպեդիայում:

Ազգային գրադարանն իր պատմության ողջ ընթացքում կազմել է բազմաթիվ մատենագիտական ցանկեր, որոնց մեջ շատ կարևոր համարվեց հանդեսների մասին հոդվածներ ստեղծել Վիքիպեդիայում: Քանի որ հանդեսների բովանդակության մասին արդեն կար Վիքիպեդիայում, նրանց մատենագիտությունները ճիշտ չհամարվեց առանձին հոդվածով ներկայացնել, այլ որոշվեց առկա հոդվածի հարստացման և բարելավման ճանապարհով գնալ: Ընթացքում նաև բարելավվեցին հանդեսների մասին տեքստերը, որոնց բովանդակությունը շատ աղքատիկ էր ներկայացված Վիքիպեդիայում: Վիքիգրադարանավարները բարելավեցին բովանդակությունները և տեղադրեցին հանդեսների («Գործ» ամսագիր, Վիքիպեդիա], «Փորձ» [«Փորձ» ամսագիր, Վիքիպեդիա], «Լուսա» [«Լուսա» ամսագիր, Վիքիպեդիա], «Հյուսիսափայլ» [«Հյուսիսափայլ» ամսագիր], «Արաքս» Վիքիպեդիա [«Արաքս» ամսագիր, Վիքիպեդիա] և այլն) մատենագիտությունների բովանդակությունները: Վիքիպեդիան հնարավորություն է տալիս անընդմեջ բարելավումներ անելու: Քանի որ մատենագիտությունների բարելավումը ծավալուն աշխատանք է պահանջում, դրանք հարկավոր է ժամանակ առ ժամանակ լրացնել: Այժմ ազգային գրադարանի վիքիգրադարանավարները հանդեսների բարելավման վրա են աշխատում, որովհետև դրանք Վիքիպեդիայում իրենց արժանի չափով ներկայացված չեն:

Ազգային գրադարանի կազմակերպած դասընթացների արդյունքում Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի «Գրադարանային տեղեկատվական աղբյուրներ» ֆակուլտետի դասախոսները և ուսանողները նույնպես ստեղծեցին իրենց հոդվածները Վիքիպեդիայում՝ «Դպրոցական գրադարան» [Դպրոցական գրադարան, Վիքիպեդիա], «Համայնքային գրադարան» [Համայնքային գրադարան, Վիքիպեդիա], «Հրաչյա Կոստիկյան» [Կոստիկյան Հրաչյա, Վիքիպեդիա]: Մանկավարժական համալսարանի դասախոսական կազմը գրադարանային համակարգում տարիների փորձ ունի, ուստի նրանք դեռ շատ մասնագիտական հոդվածներ կավելացնեն Վիքիպեդիայում:

Ժամանակակից գրադարանի գործառույթները այլևս նախկինը չեն, դրանք ունեն իրենց մեթոդներն ու աշխատանքային կանոնները, որոնք Վիքիպեդիայում ներկայացնելը շատ օգտակար կարող է լինել գրադարանավարների և ուսանողների համար: Որքան արագ Վիքիպեդիայում երևա Ազգային գրադարանն իր գործառույթներով, այնքան արագ կզարգանան համայնքային և գյուղական գրադարանները: Աշխատանքները դեռևս դանդաղ են առաջ գնում, իսկ անելիքները շատ են: Հուսով ենք, որ Ազգային գրադարանի վիքիականները հետևողական կլինեն և կշարունակեն աշխարհի ամենամեծ հանրագիտարանում արտացոլել գրադարանավարի հին և շնորհակալ մասնագիտության վերաբերյալ նյութերի լրացումը:

Ամփոփելով սույն հոդվածը, եզրակացնում եմ, որ ՀԱԳ աշխատանքները Վիքիպեդիայում կատարվում են մասնագետների ուղղորդությամբ: Բոլոր հոդվածներն ունեն հավաստի աղբյուրներ և մեկնաբանված են Վիքիպեդիայի կանոնների համաձայն: ՀԱԳ-ը Վիքիպեդիայում ունի որակյալ տեղեկատվություն գրադարանների, գրադարանային գործիչների և իր կատարած մատենագիտական ցանկերի ու շտեմարանների վերաբերյալ:

ՀԱԳ-ի նպատակն էր ցույց տալ, որ Վիքիպեդիայի նյութերը կարող են և պետք է օգտագործվեն առնվազն որևէ թեմայի վերաբերյալ առաջնային կամ սկզբնաղբյուր նյութեր գտնելու համար: Ընթերցողներին կարելի է ուղղորդել իրենց հարկավոր տեղեկությունը փնտրել Վիքիպեդիայում՝ ստացված տվյալները տպագիր հրատարակությունների միջոցով ճշտելու պայմանով:

## SUMMARY

The National Library of Armenia initiated a collaboration with Wikimedia Armenia to support the creation of articles about libraries, librarians, and library science. Wikimedia Armenia organized a training series for NLA librarians on writing and editing articles for Wikipedia.

The purpose of the NLA team was to demonstrate that Wikipedia materials can and should be used to find primary and reliable source materials on any topic. Library users can be directed to search Wikipedia for the information they need, but before using it they should check and verify the information through print publications. Libraries should develop their Wikipedia presence to support and evolve local cultural info on Wikipedia to build stronger communities.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Զարգարյան Տ., Ղազարյան Հ., Գրիգորյան Մ., Հայ տպագիր ժառանգությունը պատմության հոլովույթում // Կաճառ գիտական տարեգիրք, Երևան, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2017, էջ 459-470:
2. «Արաքս» հանդես. մատենագիտություն: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: [https://hy.wikipedia.org/wiki/Արաքս\\_հանդես\\_մատենագիտություն](https://hy.wikipedia.org/wiki/Արաքս_հանդես_մատենագիտություն), 12.05.2024:
3. «Գործ» ամսագիր, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: [https://hy.wikipedia.org/wiki/Գործ\\_\(ամսագիր,\\_Բաքու\)](https://hy.wikipedia.org/wiki/Գործ_(ամսագիր,_Բաքու)) 12.05.2024:

4. Գրադարանային ասոցիացաների հաստատությունների միջազգային դաշնություն: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: [https://hy.wikipedia.org/wiki/Գրադարանային\\_ասոցիացաների\\_հաստատությունների\\_միջազգային\\_դաշնություն](https://hy.wikipedia.org/wiki/Գրադարանային_ասոցիացաների_հաստատությունների_միջազգային_դաշնություն) 12.05.2024:
5. Դպրոցական գրադարան, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: [https://hy.wikipedia.org/wiki/Դպրոցական\\_գրադարան](https://hy.wikipedia.org/wiki/Դպրոցական_գրադարան) 10.05.2024:
6. «Լումա» հանդես, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: [https://hy.wikipedia.org/wiki/Լումա\\_\(հանդես\)](https://hy.wikipedia.org/wiki/Լումա_(հանդես)) 10.05.2024:
7. Կոստիկյան Հրաչյա, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: [https://hy.wikipedia.org/wiki/Հրաչյա\\_Կոստիկյան](https://hy.wikipedia.org/wiki/Հրաչյա_Կոստիկյան) 13.05.2024:
8. Համայնքային գրադարան, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: [https://hy.wikipedia.org/wiki/Համայնքային\\_գրադարան](https://hy.wikipedia.org/wiki/Համայնքային_գրադարան) 10.05.2024:
9. «Հայ գիրք» շտեմարան, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: [https://hy.wikipedia.org/wiki/Հայ\\_գիրք\\_\(շտեմարան\)](https://hy.wikipedia.org/wiki/Հայ_գիրք_(շտեմարան)) 10.05.2024:
10. «Հայ մամուլ» շտեմարան, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: [https://hy.wikipedia.org/wiki/Հայ\\_մամուլ\\_\(շտեմարան\)](https://hy.wikipedia.org/wiki/Հայ_մամուլ_(շտեմարան)) 11.05.2024:
11. «Հյուսիսսփայլ» ամսագիր, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: [https://hy.wikipedia.org/wiki/Հյուսիսսփայլ\\_\(ամսագիր\)](https://hy.wikipedia.org/wiki/Հյուսիսսփայլ_(ամսագիր)) 11.05. 2024
12. Գրքի երախտավորներ: Կենսագրական համառոտ բառարան / Բ.Գ. Մելյան; Խմբ.՝ Ա.Ս. Մելյան; Երևան, Խ. Աբովյանի անվ. հայկ. պետ. մանկավարժ. համալս., 2002, 91 էջ:
13. «Փորձ» ամսագիր, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: [https://hy.wikipedia.org/wiki/Փորձ\\_\(ամսագիր\)](https://hy.wikipedia.org/wiki/Փորձ_(ամսագիր)) 12.05.2024:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ-ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ՓՈՒԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԴԻՏԱՆԿՑՈՒՆԻՑ**

**Բանալի բառեր՝** Հայաստանի ազգային գրադարան, Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարան, Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջ, Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ, պրակտիկա, նպատակ, խնդիր, գիտելիք, հմտություն, կարողություն:

**Keywords:** National Library of Armenia, Brusov State University, Ejmiatsin State College named after Vardges Hamazaspyan, Yerevan State Armenian-Greek College of Tourism, Service and Food Industry, internship, purpose, task, knowledge, skill, ability.

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել տարբեր ուսումնական հաստատությունների ուսանողների պրակտիկայի կազմակերպումը Հայաստանի ազգային գրադարանում (հետայսու՝ ՀԱԳ), ինչպես նաև արժևորել պրակտիկայի կարևորությունը ՀԱԳ-ուսումնական հաստատություններ փոխգործակցության ամրապնդման և տեսական-գիտելիք-գործնական կիրառություն շղթայի շարունակականության տեսանկյունից: Խնդիր է դրվել դիտարկել նաև կրթություն-գրադարան առնչությունների տեսական, գործնական, մեթոդաբանական հիմքերի դիտարկումը, արժևորումը և այլն:

ՀԱԳ-ը հայկական տպագիր արտադրանքի խոշորագույն պահոցն է, ինչպես նաև ազգային գրադարանագիտության ու մատենագիտության կենտրոնը: Իբրև գիտակրթական, մշակութային և տեղեկատվական հաստատություն, ստեղծում է հայ տպագիր մշակութային ժառանգության հավաքագրման, մշակման, պահպանման և տարածման անհրաժեշտ պայմանները: Կատարում է բազմաթիվ գործառնություններ: Ակտիվորեն գործում է նաև սոցիալական ցանցերում: Ունի պաշտոնական կայք: Համագործակցում է աշխարհի բազմաթիվ գրադարանների հետ: Միջազգային գրքափոխանակության միջոցով հավաքածուները ամեն տարի համալրվում են համաշխարհային գրականության նմուշներով: Համագործակցում է Հայաստանում հավատարմագրված դեսպանությունների, միջազգային կազմակերպությունների, հայկական սփյուռքի ներկայացուցչությունների հետ՝ նպաստելով հայկական տպագիր մշակութային ժառանգության աշխարհով մեկ տարածմանը:

**ՀԱԳ-ի առաքելությունն է.**

- Լինել երկրի առաջընթացի անբաժանելի մասը՝ տեղեկատվական քաղաքականության, մշակույթի, կրթության, գիտության և տնտեսության ոլորտներում,
- Լինել գիտելիքի տարածք՝ Հայաստանի հասարակության համար արժեք ստեղծող միջավայր,
- Լինել հաճախորդների պահանջմունքներին միտված հաստատություն,
- Լինել հանրահասանելի ազգային հաստատություն, նպաստել երկրի ինովացիոն քաղաքականության իրականացմանը, մրցակցային առավելությունների բարձրացմանը և գիտելիքահենք հասարակություն ձևավորելուն,
- Հանրահռչակել ազգային մշակութային ժառանգությունը, աջակցել մշակութային բովանդակության և ծառայությունների բազմազանությանը,
- Բարելավել իրավական և տեխնոլոգիական պայմանները՝ տեղեկատվությունն առավել մատչելի դարձնելու համար [Հայաստանի ազգային գրադարանի առաքելությունը]:

ՀԱԳ-ի առաքելությունը արժևորվում է նաև ազգային անվտանգության դիտանկյունից, քանզի ազգային անվտանգությունը կարելի է բաժանել մի շարք գլխավոր ոլորտների՝ ռազմավարական, ժողովրդագրական, տնտեսական (ֆինանսական, էներգետիկ և այլն), տեղեկատվական, սոցիալ-հոգեբանական, մշակութային, կրոնական, էկոլոգիական [Այվազյան, 2004, 9]:

Կրթահամակարգն անցել է բազմադարյա զարգացման պատմական ուղի. հիշյալ զարգացումը կրում է շարունակական բնույթ: Արդի ժամանակաշրջանում միջազգային կրթական համակարգերին հանահունչ ընթանալու տեսանկյունից կարևոր է նաև միջազգային համապատասխան կրթական չափորոշիչների կիրառումն ազգային կրթահամակարգում՝ զուգահեռաբար պահպանելով նաև ազգային կրթության կենսունակ ավանդույթները: Գիտակրթական հզոր ներուժը մշակութային, տնտեսական, ռազմական և այլ ոլորտների հետ համատեղ ցանկացած երկրի համար ունի ռազմավարական հույժ կարևոր նշանակություն:

Առհասարակ պրակտիկական կարելի է դիտարկել նաև ցկյանս ուսումնառության դիտանկյունից: Միջազգային պրակտիկայում ցկյանս ուսումնառությունը սահմանվում է որպես «կյանքի ընթացքում եղած ուսումնական բոլոր գործողությունների ամբողջություն, որը նպատակ ունի կատարելագործել գիտելիքը, հմտություններն ու կարողությունները՝ անձնական, քաղաքացիական, սոցիալական և (կամ) աշխատանքային հեռանկարների համար» [Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում ցկյանս ուսումնառության, 2009]: Պրակտիկական ուսումնական գործընթացի կարևոր փուլերից է: ՀԱԳ-ուսումնական հաստատություններ փոխգործակցության համար կարևոր նախադրյալ է նաև գրադարանի բազմաբնույթ գործառնությունների շրջանակը: ՀԱԳ-ը կարելի է դիտարկել նաև որպես կրթական գործունեություն իրականացնող հաստատություն: Այսպես, ՀԱԳ-ի Գրատպության թանգարանը, ի շարս այլ գործառնությունների, իրականացնում է նաև կրթական տարբեր ծրագրեր: ՀԱԳ-ում պահպանվում է ավելի քան 100 լեզվով գրականություն. սույն իրողությունը ևս նպաստավոր է կրթական գործընթացի կազմակերպման տեսանկյունից, քանզի ՀԱԳ-ի այցելուներ են նաև տարբեր ազգությունների ներկայացուցիչներ: ՀԱԳ-ը, պայմանավորված գործառնությունների բազմազանությամբ, կարևորվում է նաև տարբեր մասնագիտությունների պրակտիկանտների տեսական գիտելիքը գործնականում կիրառելու դիտանկյունից: Կրթական գործընթացը հնարավոր չէ արդյունավետ կազմակերպել առանց գրադարանների: Ժամանակակից աշխարհում քաղաքակրթական կարևոր նվաճումներից է նաև առանց տարածաժամանակային խոչընդոտների գործող թվային գրադարանի կայացումը, որը նպաստում է նաև կրթության որակի բարձրացմանը:

#### **Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի պրակտիկանտները Հայաստանի ազգային գրադարանում**

ՀԱԳ-ԲՈՒՀ-եր փոխգործակցության շրջանակում 2024 թ. փետրվարի 5-ից մինչև մարտի 14-ը ներառյալ՝ շաբաթական երկու անգամ պարբերականությամբ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի միջմշակութային հաղողակցության և քաղաքագիտության ֆակուլտետի համաշխարհային գրականության և քաղաքակրթությունների ամբիոնի 4-րդ կուրսի ուսանողներ Գևորգ Խուդավերդյանը, Էլմիրա Վարդանյանը, Լիլիթ Ավետիսյանը, Մարիամ Զաքարյանը, Ռիտա Խալաթյանը, Սոնա Սարգսյանը և Վարդիթեր Վարդանյանը արտադրական նախադիպլոմային պրակտիկայի շրջանակներում այցելեցին ՀԱԳ: Պրակտիկանտներն այցելել են. 1. Անձեռնմխելի գրականության, 2. Արվեստի, 3. Գրականության հանրահռչակման, 4. Գրատպության թանգարան, 5. Թվայնացման և հրատարակման, 6. Համագործակցության և գրքափոխանակության, 7. Համալրման, 8. Հայերեն գրականության մշակման, 9. Հանրային կապերի, 10. Մատենագիտության և գրադարանագիտության, 11. Մպասարկման, 12. Տպագիր արտադրանքի վերականգնման, 13. Օտարալեզու գրակա-

նության մշակման բաժիններ: Յուրաքանչյուր այցի ընթացքում ուսանող-պրակտիկանտները ծանոթացել են տվյալ բաժնի հիմնական գործառույթներին: Պատրաստել են հետևյալ թեման՝ «Հայաստանի ազգային գրադարանը և միջմշակութային հաղորդակցությունը»: Կազմել են գրականության ցանկեր:

2024 թ. մարտի 11-ից մինչև ապրիլի 22-ը ներառյալ՝ շաբաթական երեք անգամ պարբերականությամբ, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի Լեզվաբանության և մանկավարժության ֆակուլտետի ռուս բանասիրության խմբի հեռակա 5-րդ կուրսի ուսանողներ Եվա Դադոյանը, Էրիկ Մելիքսեթյանը, Մաթիլդա Ավետիսյանը և Քրիստինա Մարգարյանն արտադրական նախադիպլոմային պրակտիկայի շրջանակում այցելել են ՀԱԳ: Պրակտիկանտներն այցելել են. 1. Անձեռնմխելի գրականության, 2. Արվեստի, 3. Արտաքին կապերի, 4. Գրականության հանրահոչակման, 5. Գրատպության թանգարան, 6. Թվայնացման և հրատարակման, 7. Համագործակցության և գրքափոխանակության, 8. Համալրման, 9. Հայերեն գրականության մշակման, 10. Հանրային կապերի, 11. Հրատարակությունների ինդեքսավորման, 12. Մատենագիտության և գրադարանագիտության, 13. Սպասարկման, 14. Տեղեկատվական տեխնոլոգիաների, 15. Տպագիր արտադրանքի վերականգնման, 16. Օտարալեզու գրականության մշակման բաժիններ: Յուրաքանչյուր այցի ընթացքում ուսանող-պրակտիկանտները ծանոթացել են տվյալ բաժնի հիմնական գործառույթներին: Պատրաստել են հետևյալ թեման. «Հայաստանի ազգային գրադարան. ռուսերեն գրականությունը Հայաստանի ազգային գրադարանում»: Կազմել են գրականության ցանկեր: Ներկայացրել են նոր գաղափարներ և տեսակետներ:

### **Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի պրակտիկանտը Հայաստանի ազգային գրադարանում**

2024 թ. մայիսի 10-ից մինչև հունիսի 6-ը ներառյալ՝ շաբաթական երեք անգամ պարբերականությամբ, Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի «Գրադարանային գործ» հեռակա բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի և բանաստեղծուհի Արևիկ Թերզյանը (Թերեզյան) նախաավարտական պրակտիկայի շրջանակներում այցելել է ՀԱԳ: Այցելել է հետևյալ բաժինները. 1. Գլխավոր գրապահոց, 2. Գրատպության թանգարան, 3. Թվայնացում և հրատարակում, 4. Համալրում, 5. Հանրային կապեր, 6. Մատենագիտություն և գրադարանագիտություն, 7. Սպասարկում: Ուսումնասիրել է հետևյալ թեմաները.

1. ՀԱԳ-ի առաքելությունը,
2. ՀԱԳ- Գրատպության թանգարանի դերն ու նշանակությունը,
3. Գրադարան-մասնաճյուղերի դեկավարումը,
4. Գրադարանի կանոնադրության ուսումնասիրումը,
5. Գրադարանի ներքին աշխատանքային ժամանակացույցը,
6. Հիմնական տեխնիկական գործընթացները գրադարանում,
7. Գրադարանի աշխատանքային ծրագրի և հաշվետվության մշակումը,
8. Գրքային հավաքածուների համալրման աշխատանքները,
9. Հավաքածուի հաշվառման, մշակման, դասակարգման աշխատանքների կատարումը,
10. Տեղեկատու-մատենագիտական ապարատի կազմակերպման աշխատանքները (գրադարանային գրացուցակների և քարտարանների կազմումը),
11. Ծանոթացում գրապահոցի կառուցվածքային առանձնահատկություններին. հավաքածուի դասավորությանը,

12. Գրադարանում ընթերցողների գրանցման, սպասարկման աշխատանքների կատարումը, ընթերցանության ղեկավարումը,
13. Ընթերցողների սպասարկման աշխատանքի կատարումը բաժնույթներում և ընթերցասրահում,
14. Տեղեկատու-որոնողական աշխատանքների իրականացումը տեղեկատու-մատենագիտական ապարատի և էլեկտրոնային սպասարկման միջոցով,
15. Էլեկտրոնային համահավաք գրացուցակի (KOHA) օգտագործում տեղեկատու-որոնողական և սպասարկման աշխատանքներում,
16. Տպագիր արտադրանքի թվայնացման աշխատանքները,
17. Զանգվածային միջոցառումների կազմակերպումը գրականության հանրահոջակման նպատակով,
18. Գրադարանի ամենօրյա աշխատանքների հաշվառումը:

### **Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի պրակտիկանտը Հայաստանի ազգային գրադարանում**

Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի «Գործավարություն օտար լեզուների խորացված իմացությամբ» բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Ալլա Վարդանյանը 2024 թ. մայիսի 15-ից մինչև հունիսի 25-ը ներառյալ՝ շաբաթական երեք անգամ պարբերականությամբ, պրակտիկայի շրջանակում այցելել է Հայաստանի ազգային գրադարան: Ելնելով մասնագիտությունից՝ ծանոթացել է կոնկրետ աշխատանքների. ՀԱԳ անձնակազմին վերաբերվող տարաբնույթ փաստաթղթեր՝ աշխատանքային օրենսգիրք, աշխատանքային պայմանագիր, պաշտոնի փոփոխման համաձայնագիր, դիմում, զեկուցագիր, արձակուրդների տեսակներ, անաշխատունակության թերթիկ, գործուղում, բացատրագիր, պաշտոնի անձնագիր, աշխատաժամանակի տեղեկագիր և այլն: Ծանոթացել է նաև գործավարությանն առնչվող տարատեսակ աշխատանքների ու փաստաթղթերի՝ ելից-մտից գրություններ, լիազորագիր, տեղեկանք և այլն, ինչպես նաև ՀԱԳ արխիվին, որտեղ պահպանվում են համապատասխան փաստաթղթեր: Այցելել է նաև ՀԱԳ Գրատպության թանգարան:

Պրակտիկանտները ծանոթացել են ՀԱԳ-ի առաքելությանը: Օրագրում գրառել են յուրաքանչյուր այցի ժամանակ ձեռք բերած գիտելիքները, հմտություններն ու կարողությունները: Ցուցաբերել են մեծ հետաքրքրություն ՀԱԳ-ում իրականացվող տարաբնույթ աշխատանքների նկատմամբ: ՀԱԳ-ի բաժինների վարիչները և համապատասխան աշխատողները պրակտիկանտներին են փոխանցել անհրաժեշտ տեղեկատվությունը:

Պրակտիկայի կազմակերպման կարևոր հանձնարարականներից է տեսական գիտելիքը գործնականում կիրառելու հրամայականը: Հաշվի առնելով պրակտիկանտների մասնագիտական ուղղվածությունը՝ նրանք ծանոթացել են ՀԱԳ-ի համապատասխան գործառնություններին: Ըստ անհրաժեշտության կազմված գրականության ցանկերը կարևոր են նաև պրակտիկանտների ավարտական աշխատանքների գիտական ապարատի տեսանկյունից: Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի 1-ին խմբի պրակտիկանտների պատրաստած «Հայաստանի ազգային գրադարանը և միջմշակութային հաղորդակցությունը» թեման բացահայտում է պրակտիկանտների պատկերացումը ՀԱԳ-ի առաքելության՝ նաև մշակութային ուղղվածության մասին: Բազմաթիվ իրողություններից ներկայացնենք հետևյալը: ՀԱԳ-ում պահպանվող հայերեն և բազմաթիվ այլ օտար լեզուներով գրականությունը հնարավորություն է ընձեռում իրազեկվել նաև աշխարհի բազմաթիվ ժողովուրդների մշակութային առանձնահատկությունների և հարակից այլ հարցերի մասին: Նույն ԲՈՒՀ-ի պրակտիկանտների 2-րդ խմբի պատրաստած «Հայաստանի ազգային գրադարան. ռուսերեն գրականությունը Հայաստանի ազգային գրադարանում» թեման ևս կարելի է դիտարկել միջմշակութային



երկխոսության համատեքստում, քանզի հայ և օտարազգի ընթերցողները ռուս գրականության միջոցով հաղորդկցվում են ռուսական մշակույթին: Արդի ժամանակաշրջանի համաշխարհայնացման (գլոբալիզացիա) պայմաններում որպես կարևորագույն գործոն դիտարկվում ու արժևորվում է նաև մշակութային կամ առավել ընդգրկուն մակարդակի՝ քաղաքակրթությունների երկխոսության անհրաժեշտությունը՝ ազգային մշակույթների կենսունակ իրողությունները պահպանելու հույժ կարևոր հրամայականը հաշվի առնելով:

Լիահույս ենք, որ ՀԱԳ-տարբեր ուսումնական հաստատություններ փոխգործակցությունը կկրի շարունակական բնույթ նաև պրակտիկայի կազմակերպման տեսանկյունից:

## SUMMARY

The purpose of present article is to introduce the programme of internship of students from different academic institutions. Interns of Valery Brusov State University, Vardges Amazaspian State College of Echmiadzin, Armenian-Greek State College of Tourism, Service and Food Industry of Yerevan completed an internship at the National Library of Armenia. From the point of view of practice, the following issues are also important: strengthening cooperation between academic institutions and National Library of Armenia, continuity of the theory-knowledge-practical application chain, consideration of theoretical, practical, methodological foundations of education-library relations, assessment, etc. The trainees got acquainted with the mission of the National Library of Armenia, the work of various departments and other related issues. They did their own assignments. We hope that the cooperation between the National Library of Armenia and academic institutions will be continuous.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Այվազյան Ա. Հիմնատարբեր՝ Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի, մասն առաջին, 2-րդ լրամշակված հրատ., Երևան, Լուսակն, 2004, 272 էջ:
2. Հայաստանի ազգային գրադարանի առաքելությունը, [Էլեկտրոնային աղբյուր] URL: <https://nla.am/mission>, 06.06.2024:
3. Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում ցկյանս ուսումնառության: Հավելված ՀՀ կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 15-ի նիստի N 43 արձանագրային որոշման: [Էլեկտրոնային աղբյուր] URL: <https://www.irtek.am/views/act.aspx?aid=50751> 06.06.2024:

### ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԶՈՒԳԱՇԵՌՆԵՐԸ

**Բանալի բառեր՝** Հայաստանի ազգային գրադարան, տպագրության զարգացում, գրատպության պատմություն, տպարան, թվային գրադարան, էլեկտրոնային շտեմարան, տեղեկատվության հասանելիություն:

**Keywords:** National Library of Armenia, printing development, history of printing, printing house, digital library, electronic database, access to information.

Հոդվածի նպատակն է ցույց տալ այն հիմնական ուղղությունները, որոնցով զարգացել է տպագրությունը, ընդգծել զարգացման զուգահեռները՝ օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները: Այս նպատակի իրականացման համար ուշադրություն ենք դարձրել հետևյալ խնդիրներին:

Ուսումնասիրության սահմանափակ ծավալի շրջանակում ներկայացնել տպագրության ընդհանուր պատմությունը համառոտ ակնարկի ձևաչափով, առանձնացնել տպագրության զարգացման միտումները տարբեր դարերում, ընդգծել տպարանների ու տպագրիչների դերն ու նշանակությունը տպագրության ընդհանուր զարգացման գործում, առանձնացնել այլ տպագրական օջախների հետ ընդհանրություններն ու տարբերությունները, գտնել տպագրական արվեստի և հայկական ձեռագրերի միջև առկա նմանությունները, ցույց տալ տպագրված գրքերի վերաբերյալ աղբյուրները:

Հայ գրատպության պատմությունն ունի խոր արմատներ: Թե ինչ կարևոր դերակատարություն է ունեցել տպագրության գյուտն ընդհանրապես և որքան կարևոր է եղել այն հայ ժողովրդի համար, խոսվել է բազմիցս: Արդյունքն այն բազմաթիվ հոդվածներն ու ուսումնասիրություններն են, որոնք հարստացնում են մեր ընդհանուր գիտահետազոտական դաշտը:

Գիրքը՝ որպես տեղեկատվության փոխանցման կարևորագույն արժեք, գնահատված է եղել բոլոր ժամանակներում: Հասարակության պատմական զարգացմանը զուգահեռ՝ այն կատարել է տվյալ ժամանակահատվածի ձեռքբերումներն ապագա սերունդներին փոխանցելու բարդ գործառույթը, ինչը հնարավորություն է տվել ճիշտ գնահատելու անցյալը: Այս երևույթն առավել ընդգծվում է, երբ անդրադարձ ենք կատարում հայ գրքարվեստի պատմությանը: Թերևս աշխարհի ոչ մի ժողովրդի համար գիրքն ու տպագրությունը այն դերն ու նշանակությունը չեն ունեցել, ինչպես հայ ժողովրդի կյանքում:

Տարբեր դարաշրջաններում, երբ հայ ժողովուրդը գոյատևման համար կառչել է փրկության ակունքներից, գիրքը և գիրը հանդես են եկել իրենց ազգափրկիչ առաքելությամբ՝ ապագա սերունդներին ի պահ տալով պատմական փաստերը, գիտական ձեռքբերումները, գրական-գեղարվեստական պատկերացումները: Հայ գրքի պատմությունը զուգահեռվել է հայ տպագրության պատմությանը, ինչը Ռ. Իշխանյանի բնութագրմամբ հեղաշրջիչ է եղել մարդկության պատմության մեջ: Հայ գրատպության պատմությունն անցել է զարգացման տարբեր փուլերով, որի ընթացքում ձևավորվել են տպագրական արվեստի որոշակի սկզբունքներ: Յուրաքանչյուր դարաշրջան ինքնատիպության իր շեշտն է դրել հայ գրքարվեստի ձևավորման բարդ գործընթացում՝ հնարավորություն ընձեռելով հաջորդ սերունդներին կատարելագործելու տպագրության արվեստը: Նշենք, որ Գուտենբերգի գյուտը Գերմանիայից անցել է Իտալիա և Հոլանդիա (1465 թ.), Շվեյցարիա և Չեխիա (1468 թ.), Բելգիա և Իսպանիա (1473 թ.):

15-րդ դարի երկրորդ կեսին գրեթե ամբողջ Եվրոպայան տիրապետել էր տպագրության արվեստին:

Տպագիր գրքին զուգահեռ՝ ձեռագիր հայ գիրքը մինչև XVIII դարը ներառյալ շարունակել է գոյատևել և կատարել իր մշակութային դերը: XVI դարի երկրորդ տասնամյակից սկսվում է նոր շրջան հայ գրքի պատմության մեջ՝ տպագրության շրջանը: Որքան էլ որ ձեռագիր գիրքը շարունակեր իր գոյությունը և զարգանար, այնուամենայնիվ, այն աստիճանաբար պետք է իր տեղը զիջեր տպագիր գրքին: Հայ ձեռագիր գիրքը կարևոր դերակատարություն է ունեցել հայ ժողովրդի բարոյական, կրոնական գաղափարների ձևավորման գործում: Այս առումով հայ տպագիր գրքի գործունեության շրջանակը առավել լայն է ու բազմաբովանդակ:

Հայ գրքի և տպագրության ուսումնասիրությամբ զբաղվել են բազմաթիվ մատենագետներ, գրականագետներ, բանասերներ, որոնցից առավել հայտնի են Գ. Զարբխանալյանը, Լեոն (Առաքել Բաբախանյան), Ա. Ղազիկյանը, Թեոդիկը (Թեոդորոս Լափչինճյան), Գ. Լևոնյանը, Ռ. Իշխանյանը, Հ. Դավթյանը, Ա. Բաբայանը և այլք:

Տպագրության գյուտը խոշորագույն երևույթ է եղել մարդկության կյանքում: Այն հսկայական բարերար ազդեցություն է ունեցել գիտության, գրականության, արվեստների զարգացման վրա: Ի տարբերություն եվրոպական ժողովուրդների՝ հայերը տպագրության գործը զարգացրել են ոչ թե հայրենի երկրում, այլ հայկական գաղութներում:

Տպարան հիմնադրելը բավականին ծախսատար է եղել: Տպագրիչների համար գլխավոր դժվարությունը տպագրական սարքավորումների ձեռք բերելն էր: Հայ տպագրիչների առջև ծառանում էր ևս երկու դժվարություն: Առաջին՝ հայկական միջավայրից հեռու հայ գաղութներում տպագրվելիք գրքերի հաջող բնագրային օրինակներ ձեռք բերելը, և երկրորդ՝ որ ամենադժվարին էր, հայերեն տառատեսակների պատրաստումը, քանի որ հայոց այբուբենը որևէ կապ չուներ լատինական և սլավոնական (կիրիլիցա) տառերի հետ: Եթե հաշվի առնենք, որ հայկական տպարանների գրաշարները հաճախ եղել են ոչ հայեր, ապա գրքերի շարվածքին հաջորդող տաժանելի աշխատանքը դառնում էր հայերեն չիմացող գրաշարների կատարած շարվածքը սրբագրելը: Նման գրաշարները շարվածքն իրականացնելիս առաջնորդվում էին ձեռագրերի գրերի և տպագիր տառերի արտաքին մեխանիկական նմանությամբ և ըստ ձեռագրերի հատ-հատ դնում և շարում էին տպատառերը առանց հասկանալու շարվածքի իմաստը, որը հանգեցնում էր շարվածքային բազմաթիվ սխալների և վրիպակների:

Ինչպես գիտենք, առաջին հայերեն գրքերը տպագրվել են Հայաստանի սահմաններից դուրս՝ Վենետիկ (1512), այնուհետև Կ. Պոլիս (1567), Հռոմ (1579), Լվով (1616), Միլան (1621), Փարիզ (1633), Նոր Զուղա (1638), Լիվոռնո (1644), Ամստերդամ (1660), Մարսել (1672), Զմյուռնիա (1678), Լոնդոն (1736), Էջմիածին (1771), Մադրաս (1772), Տրիեստ (1776), Պետերբուրգ (1781), Նոր Նախիջևան (1790), Աստրախան, (1796), Կալկաթա (1796) և այլ հայկական գաղութներում:

1771 թվականին ներկա ՀՀ տարածքում առաջին գիրքը տպագրվել է Էջմիածնում:

«Հայերեն առաջին տպագիր գրքերի բովանդակությունն արդեն վկայում է, որ հայ տպագրիչների և հրատարակիչների գլխավոր նպատակը նյութական շահը չէր, այլ այլալեզու և օտար միջավայրում ձուլման վտանգի առաջ կանգնած հային իր լեզվին ու ազգային ավանդույթներին ամուր շողկապելու, մայրենի լեզվով գիր ու գրականություն մատուցելու ազգապահպանման վեհ ձգտումը» [Հայ գիրքը 1512-1800 թվականներին, 1988, 7]:

Մինչև 19-րդ դարը հայերեն գրքեր արդեն տպագրվում էին բոլոր այն վայրերում, ուր կար հայկական գաղթօջախ կամ հայկական շունչ: Ի վերջո, օգտագործելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները՝ կոտեսենք տպագրությանը նվիրված էլեկտրոնային շտեմարանի կառուցվածքը, որը կարելի է կիրառել գրադարաններում: Ճիշտ է, տպագրությունն ընդգրկել է մի քանի դարի պատմություն, իսկ յուրաքանչյուր դարաշրջանում տպագրության արվեստը տարբերվել է նախորդից:

Ժամանակի հայ մտավորականները, հոգևոր գործիչները գիտակցում էին, որ տպագրության արվեստը հնարավորություն է հայ ժողովրդի հոգևոր ժառանգությունը հետագա սերունդներին փոխանցելու համար: Ոգևորված հայրենասնվեր զգացումներով նրանք ջանում էին թղթին հանձնել դարերով ժառանգված մշակույթը, գիրն ու գրականությունը՝ նպաստելով հայ ժողովրդի գոյապայքարին:

19-րդ դարը տպագրության զարգացման, այլ գիտությունների ու տեխնիկայի համար խոշորագույն նվաճումների ու աննախընթաց վերելքի դար էր [Կորկոտյան, 1964, 53]: Գուտենբերգյան փայտյա ձեռնամեքենային փոխարինելու են գալիս ավելի բարդ, արագատիպ մեքենաներ, կատարվում է լուսանկարի գյուտը, տողատիպը և այլն: Բարձր կատարելության է հասնում թղթի արտադրությունը, պատրաստվում են ամեն տեսակի և որակի թղթեր: 19-րդ դարասկզբից կամաց-կամաց վերանում են գրքի վերջում դրվող հիշատակարանները, որոնցում տպագրիչները բազմազան տեղեկություններ էին հայտնում ինչպես տպարանի, այնպես էլ ժամանակի հասարակական, քաղաքական անցքերի մասին, բեռնաթափվում է գրքի անվանաթերթը:

20-րդ դարի վերջին և 21-րդ դարում գրադարանները որակական փոփոխությունների նոր դաշտ մտան: Փոխվեցին նրանց առաջադրված պահանջները, որոնք ստիպեցին վերանայել գրադարանային գործի առանցքային գործառույթները: Էական նշանակություն ունեցան տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք ավելի լայն հնարավորություններ բացեցին գրադարանավարների համար: Թվային գրադարանները դարձան տեղեկատվության կուտակման և փոխանցման միջոցներ:

Թվային գրադարանը տեղեկատվության հավաքագրման, կուտակման և մատուցման լավագույն միջոցն է: Այստեղ թվային նյութերը մատչելի են հասարակության տարբեր շերտերին, առանց տեղի և ժամանակի սահմանափակումների:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման դարաշրջանում փոխվեցին նաև մատենագիտությանն առաջադրված պահանջները: Ավանդական մատենագիտական ցանկերի կողքին ի հայտ եկան էլեկտրոնային շտեմարանները, որոնք իրենց բովանդակությամբ և որոնողական ճկուն համակարգով նոր հնարավորություններ ստեղծեցին գրադարանավարների և ընթերցողների համար: Շտեմարանները տեղեկատվության տարածման մատենագիտական յուրօրինակ ցանկեր են՝ իրենց լայն հնարավորություններով և մատուցման մատչելի եղանակներով: Նրանք ոչ թե մերժում են ավանդական մատենագիտությունը, այլ մատենագիտական նյութի որոնման և մատուցման այլընտրանքային նոր տարբերակ են առաջարկում:

Այսօր աշխարհի գրեթե բոլոր գրադարաններն ունեն իրենց շտեմարանները՝ տարբեր բովանդակություններով, ձևաչափերով, ընդգրկվածությամբ: Յուրաքանչյուր գրադարան առաջարկում է իր ծառայությունները՝ աշխատելով ներգրավել առավել մեծ թվով ընթերցողների: Համընդհանուր թվայնացման դարաշրջանում ընդարձակվում են մատենագիտական նյութի որոնման հնարավորությունները, ինչն էլ հիմք է դառնում առավել ամբողջական շտեմարան ստեղծելու համար:

Հայաստանի Հանրապետության գրադարաններում էլեկտրոնային շտեմարանների ձևավորման աշխատանքները սկսվել են 21-րդ դարի սկզբից: Այժմ Հայաստանի ազգային գրադարանում ձևավորվում են բազմաթիվ թեմատիկ շտեմարաններ<sup>10</sup>.

1. Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակ,
2. «Հայ գիրք» շտեմարան,
3. «Հայ մամուլ» շտեմարան,

<sup>10</sup> Տե՛ս <https://nla.am/>, <https://nla.am/public/resources> 10.05.2024:

4. «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտամեթոդական հանդես,
5. Հայաստանի աստենախոսությունների համահավաք պահոց,
6. ՀԱԳ թվային պահոց:

Այս համակարգը տալիս է նոր հնարավորություններ տեղեկատվության կազմակերպման և հանրահռչակման համար: Հայ գիրք շտեմարանի նպատակն է ապահովել գրադարաններում և այլ հասարակական ծառայության կառույցներում սեփական թվային գրադարանների ստեղծումը:

Հայաստանի ազգային գրադարանում այս ծրագրով ստեղծված տեղեկատու կամ տեքստային շտեմարաններն ունեն որոնողական ճկուն համակարգ: Նյութը որոնելի է՝ ըստ հեղինակի, վերնագրի, պարբերականի, բանալի բառի, տարեթվի, նյութի տեսակի, լեզվի, փնտրում հրամանով:

Շտեմարանները կառուցվում են հետևյալ ձևով.

1. HTML-ի համապատասխան դաշտերում մուտքագրվում են մատենագիտական տվյալները,
2. Տեղադրվում է տվյալ նյութի pdf տարբերակը՝ նյութն ընթերցելի դարձնելու համար,
3. Նյութը արխիվացվում է և հասանելի դառնում համացանցում:

Հայաստանի ազգային գրադարանը, կարևորելով հայ գրատպության գործուն դերը ժողովրդի ազգային ինքնության պահպանման գործում, ստեղծում է հնարավոր բոլոր պայմանները՝ հայ տպագիր գրքերը մեկ ընդհանուր դաշտում ամփոփելու և ներկայացնելու համար: Այստեղ կարևորվում են թվային գրադարանները, որոնք ավանդական գրադարանի համեմատ ունեն մի շարք առավելություններ: Հենց այդ առավելությունները հաշվի առնելով՝ Հայաստանի ազգային գրադարանը ձևավորում է տարաբնույթ էլեկտրոնային շտեմարաններ, որոնց շարքում առանձնանում է «Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանը, որի ստեղծման աշխատանքները սկսվել են 2010 թվականից, իսկ 2012 թվականից՝ Հայաստանի ազգային գրադարանը դարձավ այդ նախագծի առաջատարը: Շտեմարանի ստեղծման սկզբունքը մեկն է՝ հայատառությունը: Շտեմարանի նպատակն է ամբողջական ներկայացնել հայ գրքի պատմությունը՝ տեսանելի դարձնելով պատմության հարցականները և օրինաչափ զարգացման պատկերը, հավաքագրել աշխարհով մեկ սփռված հայերեն կամ հայերեն հատվածներ պարունակող օտարալեզու գրականությունը, ճշտել աշխարհով մեկ սփռված գրքերի աշխարհագրական տարածքները՝ նշելով յուրաքանչյուր միավորի գտնվելու վայրը, ինչպես նաև ֆիզիկական վիճակը, պահպանելով հեղինակային իրավունքի նորմերը՝ թվայնացնել գրքերը՝ ընթերցողական լայն լսարանին ներկայանալու համար:

«Հայ գիրք» էլեկտրոնային շտեմարանում ներառված են 1512 թվականից մինչ այսօր աշխարհի տարբեր հատվածներում տպագրված հայերեն, հայատառ գրքերը, ինչպես նաև բազմալեզու հրատարակությունները, որոնց բնագրերը հայերեն են: Ներառված են ատլասներ, քարտեզներ, ժողովածուներ, հմայիլներ (միայն հնատիպ շրջան), պատկերագրքեր, բառարաններ, պատմական, գեղարվեստական, կրոնական, քաղաքական, մասնագիտական տարաբնույթ գրքեր: Շտեմարանը կառուցվում է հետևյալ սկզբունքով.

Կատարվում է գրքի մատենագիտական գրառում: Մատենագիտական նկարագրությունը հնարավորություն է տալիս ամփոփ տեղեկատվություն ստանալ գրքի տպագրության վայրի, տարեթվի, ստեղծողի, պատասխանատուների մասին: Մատենագիտական գրառման մեջ կարևորվում են բոլոր այն լրացուցիչ տեղեկությունները, որոնք հնարավորինս կոդավորված

նեն գիրքն ուսումնասիրելու և ընկալելու ընթերցողական պահանջները: Գրառումները հնարավորություն են տալիս կատարելու վիճակագրական վերլուծություններ:

Շտեմարանի ստեղծման հաջորդ սկզբունքը մատենագիտական յուրաքանչյուր գրառմանը թվային տարբերակի կցումն է գիրքն առցանց ընթերցելու համար: Թվայնացման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի ազգային գրադարանում: Շտեմարանում թվային տարբերակները տեղադրվում են PDF ձևաչափով:

Ամենօրյա տքնաջան աշխատանքի արդյունքում այս շտեմարանները դառնում են ավելի ամբողջական:

Նրանցից յուրաքանչյուրը մշակութային առանձին միավոր է և արժեք, որի ուսումնասիրությունը և պահպանությունը խիստ կարևոր է հետագա հետազոտական աշխատանքի համար: Բացի դրանից, նրանցից յուրաքանչյուրն անցել է պատմական մի առանձին ուղի, որն արտացոլված է այդ գրքերի մեջ տեղ գտած ձեռագիր նշումներում, որոնց պահպանությունը ևս խիստ կարևոր է: Այդ պատճառով անհրաժեշտ է կազմել յուրաքանչյուր միավոր գրքի պատմական տեղեկանքը:

Անհրաժեշտ է ստեղծել առանձին մի շտեմարան, որը կընդգրկի տպագրված բոլոր գրքերի օրինակները՝ իրենց մատենագիտական նկարագրություններով և թվային տարբերակներով: Շատ կարևոր է, որ շտեմարանում, ինչպես նաև թղթային տարբերակում, ընդգծվեն տվյալ միավորի վերականգնման աշխատանքների բոլոր տվյալները: Նման տարբերակով մենք կունենանք այդ միավորի ամբողջական պատմությունը:

Ժամանակակից տեխնոլոգիաները լրիվ հնարավորություն են տալիս շարունակել ուսումնասիրությունները այս դաշտում:

## SUMMARY

The book has always been valued as the most important value for the transmission of information. Along with the historical development of the society, it performed the complex function of transferring the achievements of the given period to the future generations, which made it possible to correctly assess the past. This phenomenon is more emphasized when we refer to the history of Armenian book art. Perhaps, for no people in the world, books and printing have had the same role and significance as in the life of the Armenian people.

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դերիկյան Վ. Լվովի հայկական տպագրության 400-ամյակը, Երևան, Տիգրան Մեծ, 2016, 133 էջ:
2. Կորկոտյան Ք. Հայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում (1567-1850 թթ.), Երևան, Ա. հ., 1964, 154 էջ:
3. Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Կազմ.՝ Ն.Ա. Ոսկանյան և ուրիշ., Խմբ.՝ Ռ.Ա. Իշխանյան, Երևան, ՀՍՍՀ Սյասնիկյանի անվ. գրադ., 1988, 864 էջ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
INFORMATION ABOUT THE AUTHORS  
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

*Աբրահամյան Քնարիկ*

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ  
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավար-  
ժական համալսարանի Վաչե Պարտիզունու անվան հայ  
նոր եւ նորագույն գրականության եւ նրա դասավանդման  
մեթոդիկայի ամբիոն, դասախոս  
«Մփյուռք» գիտաուսումնական կենտրոն, գիտական  
աշխատող

*Abrahamyan Knarik*

Candidate of Sciences in Philology, Associate Professor  
Armenian State Pedagogical University after Khachatur  
Abovyan, Chair of New and Modern Armenian Literature and  
its Teaching Methods after Vache Partizuni, Lecturer  
“Diaspora” Scientific-Educational Center, Researcher

*Абрамян Кнарик Арменовна*

Кандидат филологических наук, доцент  
Армянский государственный педагогический  
университет имени Х. Абовяна, Кафедра новой и  
новейшей армянской литературы и методики ее  
преподавания имени Вачэ Партизуни, преподаватель  
“Дiaspora” научно-образовательный центр, научный  
сотрудник

*Բելյակովա Դարյա*

Մ. Ռուդոմինոյի անվան արտասահմանյան գրականու-  
թյան համառուսաստանյան պետական գրադարան  
Գրադարանագիտության և մասնագիտական  
փոխգործակցության կենտրոնի ղեկավար

*Belyakova, Darya*

Margarita Rudomino All-Russia State Library for Foreign  
Literature  
Head of the Library Science Center and Professional  
Interaction

*Беляков Дарья Александровна*

Всероссийская государственная библиотека иностранной  
литературы имени М.И. Рудомино  
Руководитель Центра библиотековедения и  
профессионального взаимодействия

*Բրիչկովսկի Վյաչեսլավ*

Տեխնիկական գիտությունների թեկնածու  
Բելառուսի ազգային գրադարան

*Brichkovsky, Vyacheslav*

Candidate of Sciences in Technology  
National Library of Belarus

<b><i>Бричковский Вячеслав Иванович</i></b>	Кандидат технических наук Национальная библиотека Беларуси
<b><i>Գևորգյան Վարդուհի</i></b>	Հայաստանի ազգային գրադարան, Տպագիր արտադրանքի վերականգնման բաժնի վարիչ
<b><i>Gevorgyan Varduhi</i></b>	National Library of Armenia, Head of the Restoration of Printed Publications Department
<b><i>Геворкян Вардуй Арутюновна</i></b>	Национальная библиотека Армении, Заведующая Отделом реставрации печатных изданий
<b><i>Եղիգարյան Լուսաբեր</i></b>	Հնաբերդի միջնակարգ դպրոց, գրադարանավար
<b><i>Edigaryan Lusaber</i></b>	Hnaberd Middle School, Librarian
<b><i>Едигарян Лусабер</i></b>	Средняя школа Хнаберда, Библиотекарь
<b><i>Խաչատրյան Մարգարիտա</i></b>	Բանասիրական գիտությունների դոկտոր ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, ավագ գիտաշխատող
<b><i>Khachatryan Margarita</i></b>	Doctor of Sciences in Philology Institute of Literature after M. Abeghyan NAS RA senior researcher
<b><i>Хачатрян Маргарита Мамиконовна</i></b>	Доктор филологических наук Институт литературы имени М. Абегаына НАН РА, старший научный сотрудник
<b><i>Հարությունյան Մհեր</i></b>	Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ Նորագույն պատմության բաժնի գիտաշխատողի պաշտոնակատար
<b><i>Harutyunyan Mher</i></b>	Candidate of Sciences in History, Associate Professor Institute of History NAS RA Acting Research Fellow at the Department of Modern History
<b><i>Արտյունյան Մզեր Александрович</i></b>	Кандидат исторических наук, доцент Институт истории НАН РА Исполняющий обязанности научного сотрудника Отдела нашей истории
<b><i>Նարե Հովհաննիսյան</i></b>	«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, նախագահ



<i>Nare Hovhannisyana</i>	“Center for Legal Initiatives” NGO, President
<i>Наре Оганисян</i>	«Центр правовых инициатив» НПО, Президент
<i>Հովսեփյան Մարիամ</i>	Բանասիրական գիտությունների թեկնածու ԳԱԱ պատմության ինստիտուտ, ավագ գիտաշխատող
<i>Hovsepyan Mariam</i>	Candidate of Sciences in Philology Institute of History NAS RA, Senior Researcher
<i>Овсепян Мариам Врамовна</i>	Кандидат филологических наук Института истории НАН РА, старший научный сотрудник
<i>Ղազինյան Մհեր</i>	Հայաստանի ազգային գրադարան, Մատենագիտության և գրադարանագիտության բաժնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար
<i>Ghazinyan, Mher</i>	National Library of Armenia, Acting Head of the Department of Bibliography and Library Science
<i>Казинян Мгер Ашотович</i>	Национальная библиотека Армении, и.о. заведующего Отделом библиографии и библиотековедения
<i>Ղարիբյան Արմինե</i>	Հայաստանի ազգային գրադարան, Անձեռնմխելի գրականության բաժնի նոր և նորագույն շրջանի գրականության ենթաբաժնի վարիչ
<i>Gharibyan Armine</i>	National library of Armenia, Head of the Modern and Contemporary Literature Sub- Department of the Rare Book Department
<i>Гарибян Армине Нориковна</i>	Национальная библиотека Армении, заведующая Подотделом новой и новейшей литературы Отдела редких книг
<i>Մէլյան Քրիստինե</i>	Հայաստանի ազգային գրադարան, Մատենագիտության և գրադարանագիտության բաժնի առաջատար մատենագետ
<i>Melyan Kristine</i>	National Library of Armenia, Leading Bibliographer of the Bibliography and Library Science Department

<i>Мелян Крстине</i>	Национальная библиотека Армении, ведущий библиограф Отдела библиографии и библиотековедения
<i>Մինասյան Թամարի</i>	Բանասիրական գիտությունների թեկնածու «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ, ավագ գիտաշխատող
<i>Minasyan Tamara</i>	Candidate of Sciences in Philology “Matenadaran” Research Institute of Ancient Manuscripts named after M. Mashtots, Senior Researcher
<i>Минасян Тамара Грачиковна</i>	Кандидат филологических наук «Матенадаран» научно-исследовательский институт древних рукописей имени М. Маштоца, старший научный сотрудник
<i>Մկրտչյան Արմինե</i>	Հայաստանի ազգային գրադարան, Անձեռնմխելի գրականության բաժնի առաջատար գրադարանավար
<i>Mkrtchyan Armine</i>	National library of Armenia, Lead Librarian of the Rare Book Department
<i>Մկրտչյան Արմինե Օսկովնա</i>	Национальная библиотека Армении, ведущий библиотекарь Отдела редких книг
<i>Մարումյան Նունե</i>	Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Հայաստանի ազգային գրադարան, մատենագիտության և գրադարանագիտության բաժնի 1-ին կարգի մատե- նագետ Երևանի պետական համալսարան, դասախոս
<i>Sarumyan Nune</i>	Candidate of Sciences in History, Associate Professor National Library of Armenia, Department of Bibliography and Library Studies, First-Class Librarian Yerevan State University, Lecturer
<i>Տարումյան Նունե Պուшкиնովնա</i>	Кандидат исторический наук, доцент Национальная библиотека Армении, библиограф первой степени Отдела библиографии и библиотековедения Ереванский государственный университет, преподаватель

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

***Բեյազնովա Դարյա***

ԱՊՀ երկրների գրադարանային երկխոսությունը՝ որպես միջազգային մասնագիտական փոխգործակցության հարթակ..... 10

***Գևորգյան Վարդուհի***

Տպագիր արտադրանքի պահպանում և վերականգնում ..... 14

***Հովհաննիսյան Նարե***

Գրադարանների դերը և նշանակությունը ազատագրված անձանց համար. հայաստանյան փորձի ուսումնասիրություն..... 19

**ԹՎԱՅԻՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

***Բրիչկովսկի Վյաչեսլավ***

Գրադարաններում հեռավար էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների ձևավորման և կիրարկման գործընթացների կատարելագործում ..... 29

**ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՀՈՉԱԿՈՒՄ**

***Հարությունյան Մհեր***

Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մշակույթի պատմության վերաիմաստավորումը Արցախի պաշտպանության բանակի ազատագրական առաքելության համատեքստում..... 34

***Մինասյան Թամարա***

Գրիգոր Սկևռացու աղոթքները..... 45

***Մարումյան Նունե***

Վկայություններ Արցախ-Ղարաբաղի մասին ըստ «Կայսերական հնագիտական հանձնաժողովի հաշվետվություն» («Отчет императорской археологической комиссии») տեղեկագրերի..... 51

**ՍՓՅՈՒՌՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՀՈՉԱԿՈՒՄ**

***Խաչատրյան Մարգարիտա***

«Արձագանգ» ամսաթերթի մասին ..... 61

***Հովսեփյան Մարիամ***

Ազգային դիմագծի պահպանման խնդիրը Զմյուռնիայի «Աշխատանք» պարբերականի էջերում (1910-1915 թթ.) ..... 70

***Մելյան Քրիստինե***

Ռումինիայի հայ մամուլի արժևորման հարցի շուրջ ..... 76

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

***Արրահամյան Քնարիկ***

Ֆելիքս Բախչինեանի «Հայրական» մեկնությունները (գրախօսություն «Հայրը» հատորի)..... 82

**ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ**

***Եղիզարյան Լուսաբեր***

Հայաստանի ազգային գրադարանը Վիքիպեդիայում..... 86

***Ղազինյան Մեեր***

Հայաստանի ազգային գրադարան-ուսումնական հաստատություններ փոխգործակցությունը պրակտիկայի կազմակերպման դիտանկյունից ..... 92

***Ղարիբյան Արմինե, Մկրտչյան Արմինե***

Հայ տպագրության զարգացման զուգահեռները ..... 97

***Տեղեկություններ հեղինակների մասին***..... 102

## CONTENTS

### LIBRARY MANAGEMENT & SERVICES

<i>Belyakova, Darya</i> CIS countries' libraries interaction as a platform for international professional exchange .....	10
<i>Gevorgyan, Varduhi</i> Preservation and conservation of printed materials .....	14
<i>Hovhannisyan, Nare</i> The role and significance of libraries for inmates: Armenian case study .....	19

### DIGITAL CONTENT MANAGEMENT

<i>Brichkovsky, Vyacheslav</i> Improvement of the processes of formation and utilization of remote electronic information resources in libraries.....	29
--	----

### HERITAGE PRESERVATION & PROMOTION

<i>Harutyunyan, Mher</i> Reinterpretation of the cultural history of the Nagorno-Karabakh Autonomous Region in the context of the liberation mission of the Artsakh Defence Army.....	34
<i>Minasyan, Tamara</i> The prayers of Grigor Skevretsi .....	45
<i>Sarumyan, Nune</i> Testimonies about Artsakh-Karabakh from the "Reports of the Archaeological Commission of the Imperial Government".....	51

### DIASPORA HERITAGE PRESERVATION & PROMOTION

<i>Khachatryan, Margarita</i> Regarding the "Ardzagank" newspaper .....	61
<i>Hovsepyan, Mariam</i> The challenge of preserving the national identity in the pages of the Smyrna "Ashkhatank" newspaper (1910-1915).....	70
<i>Melyan, Kristine</i> On the issue of enhancing the value of the Armenian periodicals in Romania .....	76

### REVIEWS

<i>Abrahamyan, Knarik</i> "Paternal" interpretations by Felix Bakhchinyan: review of the volume "Father".....	82
--	----

## REPORTS

<i>Edigaryan, Lusaber</i>	
The National Library of Armenia on Wikipedia .....	86
<i>Ghazinyan, Mher</i>	
Cooperation of the National Library of Armenia with academic institutions in terms internships and placements .....	92
<i>Gharibyan, Armine;</i> <i>Mkrtchyan Armine</i>	
Armenian printing: parallels and development stages .....	97
<i>Information About the Authors</i> .....	102

## СОДЕРЖАНИЕ

### БИБЛИОТЕЧНЫЙ МЕНЕДЖМЕНТ И ОБСЛУЖИВАНИЕ

**Белякова Дарья Александровна**

Библиотечный диалог стран СНГ как площадка для Международного профессионального обмена..... 10

**Геворкян Вардуи**

Сохранение и реставрация печатной продукции ..... 14

**Оганнисян Наре**

Роль и значение библиотек для заключенных лиц: изучение опыта Армении..... 19

### УПРАВЛЕНИЕ ЦИФРОВЫМ КОНТЕНТОМ

**Бричковский Вячеслав Иванович**

Совершенствование процессов формирования и использования в библиотеках удаленных электронных информационных ресурсов ..... 29

### СОХРАНЕНИЕ И ПОПУЛЯРИЗАЦИЯ НАСЛЕДИЯ

**Арутюнян Мгер**

Переосмысление истории культуры Нагорно-Карабахской Автономной Области в контексте освободительной миссии армии обороны Арцаха ..... 34

**Минасян Тамара**

Молитвы Григора Скевраци..... 45

**Сарумян Нуне**

Свидетельства об Арцахе-Карабахе по бюллетеням «Отчёт императорской археологической комиссии»..... 51

### СОХРАНЕНИЕ И ПОПУЛЯРИЗАЦИЯ НАСЛЕДИЯ ДИАСПОРЫ

**Хачатрян Маргарита**

О ежемесячном журнале «Ардзаганг» ..... 61

**Овсепян Мариам**

Проблема сохранения национальной идентичности на страницах журнала «Ашхатанк» (г. Смирна, 1910-1915 гг.)..... 70

**Мелян Крестине**

О значении армянской периодической печати в Румынии ..... 76

### РЕЦЕНЗИИ

**Абраамян Кнарлик**

«Отеческие» интерпретации Феликса Бахчиняна: рецензия на том «Отец» ..... 82

## ДОКЛАДЫ

*Едигарян Лусабер*

Национальная библиотека Армении и её деятельность на просторах Википедии..... 86

*Казинян Мгер Ашотович*

Практика в Национальной библиотеке Армении: опыт взаимодействия с образовательными учреждениями..... 92

*Гарибян Армине, Мкртчян Армине*

Армянское книгопечатание: исторические параллели и этапы развития..... 97

*Информация об авторах* ..... 102



